Ռուբեն Աշիշբեկյան

Գագաուզյան հարցը

պատմություն և արդիականություն

9Н
Հ-41

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

ՌՈՒԲԵՆ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ԳԱԳԱՈՒԶՅԱՆ ՀԱՐՑԸ

(պատմություն և արդիականություն)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
180

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
180

ԵՐԵՎԱՆ-2018

ՀՏԴ 93/94:327
ԳՄԴ 63.3+66.4
Ա 241

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի ու Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի երաշխավորությամբ

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Կ.Հ. Խաչատրյան**

Ազիզբեկյան Ռ.Լ.
Ա 241 Գագաուզյան հարցը (պատմություն և արդիականություն) / Ռ.Լ. Ազիզբեկյան - Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2018. - 115 էջ:

Սույն մենագրությունն ըստ էության հանդիսանալով հեղինակի կողմից 2016 թ. հրատարկված «Մերձդնեստրյան հակամարտությունը (պատմություն և արդիականություն)» աշխատության օրգանական շարունակությունը, վերաբերում է Մոլդովայում և տարածաշրջանում որոշակի լարվածություն առաջացնող մեկ այլ պայթունավտանգ խնդրի՝ Գագաուզյան հարցին, որն ի տարբերություն ԽՍՀՄ փլուզման հետևանքով հետխորհրդային տարածքում ծագած ղարաբաղյան, մերձդնեստրյան, աբխազական և հարավօսեթական հակամարտությունների մի շարք պատճառներով չի ստացել միջազգային լայն հնչեղություն՝ մնալով «ստվերում»: Վեր են հանված Գագաուզյան հարցի ծագման պատմական նախադրյալները, խնդրի էությունն ու առանձնահատկությունները, ներկայացված են մոլդովա-գագաուզյան հակասությունների խորացման ու Գագաուզիա Ինքնավար-Տարածքային Կազմավորման շուրջ ծավալված աշխարհաքաղաքական գործընթացները XX դ. վերջից մինչև մեր օրերը:

Աշխատանքը հասցեագրված է «Միջազգային հարաբերություններ» մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողներին, պատմաբաններին, քաղաքագետներին, միջազգայնագետներին և կոնֆլիկտաբաններին:

ՀՏԴ 93/94:327
ԳՄԴ 63.3+66.4

ISBN 978-9939-860-69-5 ©ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ փլուզումից հետո Մոլդովայի Հանրապետությունում ավելի քան երկու տասնամյակ արծարծվում է երկիրը դաշնային կամ համադաշնային պետության վերածելու գաղափարը, ինչը հիմնականում պայմանավորված լինելով ինքնահռչակ Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության գոյությամբ, առնչվում է նաև Մոլդովայի հարավում գտնվող Գագաուզիա Ինքնավար-Տարածքային Կազմավորմանը: Միջազգային կոնֆլիկտաբանության մեջ ընդունված է վերջինիս դիտարկել, որպես եվրասիական տարածքում ազգամիջյան հակամարտության խաղաղ լուծման եզակի օրինակ, քանի որ Քիշնևին և Կոմրատին հաջողվեց XX դ. 80-ականների վերջին միմյանց միջև ծագած բացահայտ առճակատումից ու ազգատյացությունից անցում կատարել խաղաղ գոյակցության՝ միասնական պետության շրջանակներում: Մինչդեռ Խորհրդային կայսրության մայրամուտին, Գագաուզիայում Մոլդովայից անջատվելու շարժման ծավալման հետևանքով, մոլդովացի և գագաուզ ժողովուրդների միջև լայնածավալ բախումն անխուսափելի էր թվում:

80-ականների վերջին արդեն ակնհայտ էր, որ 1985 թվականից ԽՍՀՄ-ում իրականացվող «վերակառուցման» քաղաքականությունը սպասված արդյունքները չտվեց: Ավելին, մասնակի և ոչ արմատական բարեփոխումները հանգեցրին ճգնաժամային վիճակը խորացնող նոր, բարդ ու հակասական գործընթաց-

ների: Երկրի սոցիալ-տնտեսական կացությունն ավելի վատթարացավ: Զանգվածային դարձան ազգամիջյան առճակատումները, որոնք ուղեկցվում էին բազմաթիվ մարդկային զոհերով: Սրվեցին հակասությունները կենտրոնի ու հանրապետությունների, ինչպես նաև վերջինների միջև: Քայքայվեցին խիստ կենտրոնացված տնտեսական, քաղաքական, սոցիալական և իրավապահ համակարգերը: Սկսվեց և աստիճանաբար խորացավ խորհրդային կայսրության փլուզման գործընթացը: ԽՍՀՄ-ում գրեթե համատարած բնույթ ընդունեց անկախության ձգտումը, ինչն էլ ավելի սրեց ազգամիջյան հարաբերությունները:

Բնականաբար, այս ամենը դրսևորվեց նաև Մոլդովայում: 1990 թ. հունիսի 23-ին ՄԽՍՀ խորհրդարանն ընդունեց Հռչակագիր «Մոլդովայի Հանրապետության պետական ինքնիշխանության մասին»: Ի պատասխան, նույն թվականի օգոստոսի 19-ին Մոլդովական ԽՍՀ հարավի ժողովրդական պատգամավորների համագումարը ընդունեց որոշում «Գագաուզիայի Հանրապետության հռչակման մասին», որը չճանաչված պետության կարգավիճակով գոյատևեց 4 տարի: Գագաուզների անկախական ձգտումները ճնշելու նպատակով, Քիշնևում իշխանության եկած ռումինաունիոնիստական «Ժողովրդական ճակատ»-ը 1990 թ. հոկտեմբերի վերջին կազմակերպեց այսպես կոչված «ազգայնականների արշավ» դեպի Գագաուզիա, որը հաջողվեց կասեցնել միայն ԽՍՀՄ զինված ուժերի ստորաբաժանումների միջամտությամբ: Թերևս վերջինների շնորհիվ էր, որ մոլդովա-գագաուզյան հակամարտությունը հետագայում Մերձդնեստրյանի նման սուր բնույթ չընդունեց:

1991 թ. օգոստոսի 27-ին Մոլդովան հռչակեց իր անկախությունը՝ հանդես գալով որպես ունիտար պետություն, ինչից հետո

Քիշնևն էլ ավելի կոշտացրեց իր դիրքորոշումը ինքնակառավարման ցանկացած դրսևորման հանդեպ: Եվ միայն 1994 թ. փետրվարի 27-ին Մոլդովայում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Ժողովրդական ճակատ»-ի իշխանությունից հեռանալուց հետո, Քիշնևն ու Կոմրատը կարողացան որոշակի պայմանավորվածության հանգել: Գագուզիան համաձայնվեց Մոլդովայի կազմում ինքնավարության հատուկ իրավական կագավիճակի ստացման դիմաց հրաժարվել անկախության պահանջից: 1994 թ. դեկտեմբերի 23-ին Մոլդովայի Հանրապետության խորհրդարանն ընդունեց «Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին» օրենք, որի համաձայն՝ Մոլդովայի կազմում ստեղծվեց Գագաուզ-Երի («Գագաուզյան հող»)՝ Գագաուզիա Ինքնավար-Տարածքային Կազմավորումը, Կոմրատ վարչական կենտրոնով: Դրանով իսկ Գագաուզիային հաջողվեց Մոլդովայի 1994 թ. Սահմանադրության համաձայն ստանալ ինքնավարություն և հնարավորինս խուսափել բռնություններից, որոնց հաճախ հանգեցնում էին նման իրադարձությունները հետկոմունիստական Արևելյան Եվրոպայում:

Շատ եվրոպական իրավապաշտպան կազմակերպություններ մոլդովա-գագաուզյան հակամարտության խաղաղ ճանապարհով լուծումը դիտարկեցին, որպես ազգամիջյան հակամարտությունների լուծման հաջողված փորձ: Այն, մասնավորապես, մեծ հետաքրքրություն առաջացրեց Բալկաններում և հետխորհրդային տարածքում առկա հակամարտություններն ուսումնասիրող փորձագետների շրջանում: Նրանցից շատերի կարծիքով՝ Գագաուզյան ինքնավարությունը, որի հենքը ազգային կենսակերպի սկզբունքն էր, կարող էր նշյալ տարածաշրջաններում էթնիկական հակամարտությունների լուծման օրինակ ծառայել:

Սակայն ինքնավարության «գագաուզյան մոդելն», ի տարբերություն Հարավային Տիրոլի ինքնավարության՝ Իտալիայում, Հյուսիսային Իռլանդիայի՝ Մեծ Բրիտանիայում կամ Ալանդյան կղզիների՝ Ֆինլանդիայում, այդպես էլ չդարձավ ընդօրինակման առարկա: Ավելին, այն, երբեք չի արծարծվել նույնիսկ Մերձդնեստրյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում, քանի որ Տիրասպոլը միանշանակորեն մերժում էր մոլդովական ունիտար պետության կազմում ՄՄՀ-ին ինքնավարություն տրամադրելու Քիշնևի առաջարկը: Մի շարք քաղաքագետներ միջէթնիկական հակամարտությունների լուծման «գագաուզյան մոդելի» անգամ Մոլդովայի ներսում ոչ գրավիչ լինելը պայմանավորում են «Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին» 1994 թ. դեկտեմբերի 23-ին ընդունված օրենքի հիմքում ընկած փոխզիջումային հենքային պայմանավորվածությունները Քիշնևի կողմից չկատարելու հանգամանքով: Ըստ այդ փաստաթղթի՝ Մոլդովան իր վրա պարտավորություն էր վերցրել մինչև 1994 թ. դեկտեմբերի 23-ը ընդունված բոլոր օրենքներն ու նորմատիվ ակտերը համապատասխանեցնել «Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին» օրենքին, ինչպես նաև ծավալել վերջինի սկզբունքները չխախտող օրինաստեղծ գործունեություն: Մինչդեռ 1994 թվականից հետո Մոլդովան գլխավորած չորս նախագահների ու մեկուկես տասնյակ վարչապետների իշխանության ընթացքում հանրապետությունում ոչ մի նորմատիվ կամ օրենսդրական ակտ այդպես էլ չհամապատասխանեցվեց նշյալ օրենքին և, փաստորեն, Քիշնևի ու Կոմրատի միջև ձեռքբերված, թերևս, ամենակարևոր փոխզիջումային պայմանավորվածությունն այդպես էլ մնաց թղթի վրա: Դրա հետ մեկտեղ, ըստ էության, հռչակագրային

բնույթ էր կրում նաև հանրապետական մակարդակով որոշումների ընդունման գործընթացին Գագաուզիայի ինքնավարության ղեկավարի մասնակցության դրույթը: Թեև նա ունի Մոլդովայի կառավարության անդամի կարգավիճակ, սակայն զուրկ է ինքնավարության բնակչության շահերին հակասող որոշումների ընդունումն արգելափակող լիազորություններից: Իշխանության կենտրոնական մարմիններում (կառավարության աշխատակազմ, նախարարություններ և այլ գերատեսչություններ) չնչին թիվ են կազմում Գագաուզիայի ներկայացուցիչները, իսկ Բարձրագույն դատական պալատում, Սահմանադրական դատարանում, Հաշվիչ պալատում, Հեռուստատեսության և ռադիոյի համակարգող խորհրդում, արտասահմանում ՄՀ դիվանագիտական ներկայացուցչություններում գագաուզյան ծագումով աշխատակիցներ գրեթե չկան: Ինքնավար կազմավորման բնակչության շահերը Քիշնևի կողմից լրջորեն ոտնահարվում են նաև արտասահմանյան վարկերի և դրամաշնորհների բաշխման ժամանակ, որոնց ծավալում Գագաուզիայի մասնաբաժինը կազմում է 1-2%: Միաժամանակ, կենտրոնական իշխանությունները երկրի հասարակական-քաղաքական դաշտից հետևողականորեն դուրս մղելով ռուսաց լեզուն, տեսանելի ջանքեր չէին գործադրում Գագաուզիայում երկրի պետական լեզվի՝ մոլդովերենի ուսուցումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Բնականաբար, նման իրավիճակ պարունակող «գագաուզյան մոդելը» դժվար թե կիրառություն գտներ ազգամիջյան հակամարտությունների լուծման ոլորտում: Մանավանդ որ նման հակամարտությունները համարվում են լուծված, երբ կողմերը բավարարված են լինում ձեռքբերված պայմանավորվածությունների կատարումից, ինչը բացակայում է տվյալ դեպքում: Եթե մոլդովա-

կան կողմը ձևացնում է, թե գագուզյան հարցը վաղուց և անշրջելիորեն լուծված է, ապա գագաուզյան կողմը Մոլդովային մեղադրում է իր ստանձնած պարտավորությունները չկատարելու մեջ: Այս համատեքստում Կոմրատը անընդունելի է համարում նաև Քիշնևի կողմից գագաուզ ժողովրդի նկատմամբ «ազգային փոքրամասնություն» տերմինի օգտագործումը, քանի որ, ըստ նրա, գագաուզները Մոլդովայի պետականաստեղծ ժողովուրդներից մեկն են, իսկ Գագաուզիան՝ իր ձևով և էությամբ քաղաքական կամ պետական ինքնավարություն է ՄՀ կազմում: Մինչդեռ, ՄՀ կենտրոնական իշխանություններն ավելի քան 20 տարի Գագաուզիա Ինքնավար-Տարածքային Կազմավորմանը մշտապես անվանելով վարչական ինքնավարություն, այն փորձում են նույնացնել սովորական շրջանային վարչական միավորների հետ, ինչը լիովին տեղավորվում է Գագաուզիայի նկատմամբ Քիշնևի որդեգրած քաղաքականության շրջանակներում:

Այսպիսով, Գագաուզյան հարցի շուրջ Քիշնևի և Կոմրատի իրարամերժ մոտեցումների հետևանքով, այն դեռևս հեռու է լուծում ստանալուց:

Աշխատությունը գրվել է փաստաթղթերի, ժամանակագրությունների, պաշտոնատար անձանց հայտարարությունների, ելույթների, հարցազրույցների, ինչպես նաև մենագրությունների, հոդվածների և այլ հրապարակումների համեմատական վերլուծության ու համադրման հիման վրա:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳԱԳԱՈՒԶՅԱՆ ՀԱՐՑԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

1. Գագաուզ ժողովրդի ծագումը

Գագաուզները հիմնականում ուղղափառ քրիստոնեություն դավանող թյուրքալեզու ժողովուրդ են[1], որոնց թվաքանակն աշխարհում կազմում է ավելի քան 250 հազ.: Նրանք մեծամասամբ կենտրոնացված են հարավային Բեսարաբիայի պատմական մարզ հանդիսացող Բուջակում: Երբ վերջինը 1940 թ. Ռումինիայից անցավ ԽՍՀՄ-ին, մարզի հյուսիսային մասը միացվեց Մոլդովայի հարավին, իսկ հարավայինը՝ Ուկրաինայի Օդեսայի մարզի հարավ-արևմտյան հատվածին: Աշխարհի գագաուզների ավելի քան 50%-ը ներկայումս բնակվում է Մոլդովայի Հանրապետության 5 հարավային շրջաններում՝ Կոմրատում, Չադիր-Լունգայում, Վուլկանեշտում, Բասարաբյասկայում և Թրակալիայում: Ընդ որում, առաջին երեքը ներկայումս մտնում են Գագաուզիա Ինքնավար-Տարածքային Կազմավորման մեջ, որի 156 հազ. բնակչության ավելի քան 82%-ը գագաուզներ են: Շուրջ 40 հազ. գագաուզ ապրում է Ուկրաինայում, 12 հազ.՝ Ռուսաստանում, 10 հազ.՝ Բուլղարիայում, 5 հազ.՝ Թուրքիայում, 3 հազ.՝ Ռումինիայում և նույնքան էլ Հունաստանում: Գագաուզներ կան նաև Կենտրոնական Ասիայում, Մերձբալթիկայում, Բելառուսում,

[1] Գագաուզների շրջանում տարածված են նաև բապտիստական ու հիսուսական բողոքական համայնքներն ու մահմեդականության սունի ուղղության դավա-

Վրաստանում, Կանադայում, Բրազիլիայում և այլուր: Նրանք ցրված լինելով աշխարհով մեկ դարերի ընթացքում պահպանել են իրենց մշակութային ավանդույթներն ու ազգային ինքնությունը, չունենալով սեփական գիր (այն մտցվեց միայն 1957 թ.՝ Կիրիլյան այբուբենի հիման վրա, որը 1990-ականներին փոխարինվեց լատինականով)[2], սերունդներին են փոխանցել Ալթայի լեզվաընտանիքի օղուզական խմբին պատկանող իրենց լեզուն՝ գագաուզերենը: Գագաուզների մեջ լայն տարածում ունեն նաև ռուսերենը, ուկրաիներենը, բուլղարերենը:

Գագաուզյան հարցի էության համապարփակ ներկայացումը պահանջում է անդրադառնալ նրա առաջացման պատմական ակունքներին, այդ թվում և գագաուզ ժողովրդի ծագման հարցին: Այս առումով նշենք, որ գագաուզների, ինչպես ամբողջական, այնպես էլ վաղ շրջանի պատմությունը բավականին թույլ է լուսաբանված՝ պայմանավորված գրավոր աղբյուրների սակավությամբ, ինչպես նաև դրանց տարբեր երկրների արխիվներում ցրված լինելու հանգամանքով: Դրա հետ մեկտեղ, բուլղարական, ռումինական, արևելասլավոնական, թուրքական և այլ աղբյուրներում գագաուզների մասին տեղեկությունները հիմնականում հատվածական բնույթ էին կրում: Այս ամենը, բնականաբար, սահմանափակում էր գագաուզների էթնոժողովրդագրական պատմական գործընթացների խորը ուսումնասիրության հնարավորությունները, ինչը հանգեցնում էր նրանց ծագման վերաբերյալ հետազոտողների կողմից տարբեր, երբեմն էլ իրարամերժ մեկնակերպերի առաջքաշմանը:

Որոշ մասնագետներ գագաուզներին համարում էին բուլղարացիների, թուրքերի, հույների, մակեդոնացիների հետնորդներ, ոմանք էլ՝ գտնում էին, որ նրանք թուրքացած քրիստոնյաներ են, քրիստոնեացված թուրքեր են, թուրքերեն լեզուն ընդունած բուլղարացիներ են: Այս առումով նշենք, որ եվրոպացի ուսումնասիրողները, որպես գագաուզների հավանական նախնիների դիտարկում էին Վոլգայի ափերից VII դ երկրորդ կեսին Բալկաններ եկած թյուրքալեզու պրոտոբուլղարներին: Մինչդեռ Թուրքիայում լայն տարածում ստացած սելջուկյան տեսության համաձայն՝ գագաուզները XIII դարում Դոբրուջայում (ներկայիս Ռումինիայի և Բուլղարիայի տարածքում) վերաբնակություն հաստատած և ռուսական տափաստաններից եկած թյուրքալեզու կումանների (պոլովցիների) հետ այստեղ «Օղուզական տերություն» հիմնած փոքրասիական թուրքերի հետնորդներն են: Իրենց հերթին մի շարք ռուս, մոլդովացի և գագաուզ ուսումնասիրողներ գտնում են, որ գագաուզները X դարից Բալկաններում հաստատված հյուսիսթուրքական ցեղախմբերից՝ պեչենեգներից, ղուզերից[3], պոլովցիներից սերված ինքնուրույն ժողովուրդ են:

Գագաուզների վաղ շրջանի պատմությամբ զբաղվող մասնագետների մեծ մասի կարծիքով՝ գագաուզների նախնիները Բալկանյան թերակղզում հաստատվել են դեռևս այստեղ սելջուկ-թուրքերի հայտնվելուց և այն թուրք-օսմանների կողմից նվաճելուց շատ առաջ: Այդ ուսումնասիրողները գագաուզների ծագման պատմությունը հիմնականում կապում են նրանց նախնիների վերաբնակեցումների հետ, երբ վերջիններս Կենտրոնական Ասիայից անցան Բալկաններ, որտեղ ձևավորվելով որպես գագաուզյան էթնոս՝ XVIII դ. կեսից սկսեցին հաստատվել հարա-

[2] Դեռևս XIX–XX դդ սահմանագծին որոշ գագաուզ լուսավորիչների կողմից սեփական այբուբենի ստեղծման փորձեր արվել էին, որոնք չէին պսակվել հաջողությամբ:

[3] Թուրք-ղուզերը՝ դրանք օղուզներն են կամ թուրք-օղուզները, որոնք ռուսական տարեգրություններում անվանվում էին պեչենեգներ:

վային Բեսարաբիայում՝ Բուջակում: Ընդ որում, ըստ տվյալ տեսության կողմնակիցների՝ գագաուզները մինչև Բալկաններից Ռուսաստան (Բեսարաբիա) տեղափոխվելը երկու խմբի էին բաժանվում «խասըլ գագաուզներ» (իսկական գագաուզներ) և «բուլղարական գագաուզներ»:

Շատ պատմաբաններ, ազգագրագետներ, բանասերներ գագաուզներին համարում են թյուրքական աշխարհի ինքնատիպ ժողովուրդներից մեկը: Նրանց կարծիքով՝ գագաուզների էթնոգեն առանցքը ղուզեր (օղուզներ) կոչվող քոչվոր ցեղերն էին, որոնք մ.թ.ա. առաջին հազարամյակի երկրորդ կեսին պեչենեգների և կումանների հետ միասին բնակվում էին Արալի և Կասպից ծովերի միջև ընկած տափաստաններում՝ հանդիսանալով Խազարական խաքանության վասալներ: 965 թ. հետո, երբ Խազարիան ջախջախվեց ռուս իշխան Սվյատոսլավի կողմից, պեչենեգները, օղուզները և կումանները շարժվեցին դեպի արևմուտք գրավելով Սև ծովից հյուսիս ընկած (ներկայիս Մոլդովայի և Ռումինիայի) տարածքները:

XI դ. բյուզանդական գրավոր աղբյուրներում օղուզները (ղուզերը) նշվում են որպես քոչվոր ցեղեր, որոնք 1065 թ. անցնելով Դանուբը հաստատվեցին Բալկաններում՝ Մակեդոնիայում, Պարիստրիոնում (մերձդանուբյան շրջաններ), Հունաստանում, Բուլղարիայում և անցան նստակյաց կենսաձևի: Ըստ որոշ մասնագետների՝ հենց այս տարածաշրջաններում էլ պեչենեգների, պոլովցիների, կումանների հետ օղուզների էթնիկ խառնակցման արդյունքում առաջ են եկել ներկայիս գագաուզների անմիջական նախնիները, որոնք ընդունեցին ուղղափառ քրիստոնեություն (պատմաբանների մի մասի կարծիքով՝ IX-XI դդ., իսկ մի այլ մասի՝ XIII դ.), ինչն իր կնիքը թողեց գագաուզների

մշակույթի և ինքնագիտակցության վրա՝ նրանց որոշակիորեն առանձնացնելով թյուրքական ժողովուրդների հիմնական զանգվածներից:

Գագաուզների ծագման վերաբերյալ շրջանառվում է նաև մեկ այլ տեսություն, համաձայն որի՝ գագաուզներն առաջացել են միայն օղուզներից (ղուզերից), ավելի ճիշտ՝ նրանց ճյուղը հանդիսացող խաղողուզներից: Ըստ տվյալ տեսության ջատագովների՝ վերջինի (խաղողուզ) հնչյունաբանական ձևափոխումներից է ծնվել ներկայիս գագաուզ անվանումը: Խաղողուզ նշանակում է «իսկական օղուզներ[4]», այսինքն նրանք, ովքեր մահմեդականության ընդունման ժամանակաշրջանում պահպանել էին իրենց հեթանոսական կրոնը՝ հետագայում ընդունելով քրիստոնեություն: Համաձայն այս տեսության, խաղողուզները լքելով Կենտրոնական Ասիան, հաստատվել են Վոլգա և Դանուբ գետերի միջև, հետագայում Բուլղարիայի հյուսիս-արևելյան տարածաշրջանում՝ Կավարնայի գոտում ստեղծելով պետական կազմավորում: XIII դ. Դոբրուջայի տարածքում ստեղծվեց գագաուզ ժողովրդի առաջին պետությունը՝ «Դուբրուջյան իշխանություն» կամ «Ղուզի էյալեթ» անվանումով, որը գոյատևելով երկու դար՝ XV դարում օսմանյան նվաճողների հարվածների ներքո կործանվեց: Ըստ մի շարք մասնագետների՝ պետական ինքնիշխանության կորստից հետո, գագաուզ ժողովրդի միջնադարյան պատմության հետագա շրջանի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Մինչդեռ, որոշ պատմաբաններ նշում են, թե «Ղուզի էյալեթ»-ի վերացումից հետո գագաուզները Օսմանյան կայսրության սահմաններում շարունակել են բնակվել իրենց

[4] «Գագաուզ» էթնոնիմի ծագման վերաբերյալ գոյություն ունի ևս մեկ վարկած, ըստ որի, այն նշանակում է «Գյոկ-Օղուզ»՝ երկնային, կապույտ օղուզներ:

տարածքում՝ դավանելով քրիստոնություն:

Այսպիսով, վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ գագաուզներն ամենայն հավանականությամբ հարավ-սիբիրյան, կենտրոնասիական և մերձկասպյան տափաստաններից զանգվածաբար հարավ-արևելյան Եվրոպա ներթափանցած միջնադարյան թյուրքական քոչվոր ցեղերի (պեչենեգների, թուրք-օղուզների, պոլովցիների) հետնորդներն են, որոնք մոնղոլ-թաթարների դեպի Արևելյան Եվրոպա արշավանքներից հետո մերձսևծովյան տափաստաններով տեղափոխվեցին ներքին մերձդանուբյան և հյուսիս-արևելյան Բուլղարիայի հարթավայրային շրջաններ: Հենց այստեղ էլ՝ հիմնականում Դոբրուջայի և Դելիրոմանի տարածքում գագաուզները XIII դարում վերջնականապես ձևավորվեցին որպես էթնոս: Դա պատահական չէր, քանի որ տվյալ տարածաշրջանում թյուրքական տարրի ներկայությունը դարերի պատմություն ուներ: Այս ֆոնի վրա ուշագրավ է, որ ներկայումս գագաուզները մեծամասամբ իրենց չեն դասում ոչ բուլղարական և ոչ էլ թուրքական ժողովուրդների շարքին, ինչպես ներկայացնում են որոշ պատմաբաններ, այլ իրենց համարում են սեփական լեզու, ինքնատիպ մշակույթ, քրիստոնեական դավանանք և էթնիկական տարածք (հանձին Բուջակի) ունեցող թյուրքական ծագումով ինքնուրույն էթնոս: Իրենց հերթին թուրքերը, գագաուզներին, վերջիններիս ռուսաֆիկացման և ուղղափառ դավանանքի պատճառով, ըստ էության, չեն ճանաչում որպես հիմնական էթնոս թուրքական ժողովրդի կազմում և առավելապես նրանց վերաբերվում են, ինչպես ռուսների, թեև թուրքերն ու գագաուզները փաստորեն խոսում են տարբեր անվանումներ կրող նույն լեզվով:

2. Գագաուզյան խնդրի նախապատմությունը

Գագաուզները թուրքերի հետ ունեցած էթնիկ ընդհանրության շնորհիվ սկզբնական շրջանում Օսմանյան կայսրությունում օգտվում էին որոշակի արտոնություններից (նրանց թույլատրվեց ապրել իրենց տարածաշրջանում, պահպանել սեփական լեզուն և քրիստոնեական դավանանքը): Սակայն քրիստոնեական ուղղափառ դավանանքի համար օսման թուրքերը գագաուզներին աստիճանաբար սկսեցին հալածանքների ենթարկել, ինչը նրանց զգալի մասին դրդեց XVIII դ. երկրորդ կեսից սկսած Դոբրուջայից գաղթել հարավային Բեսարաբիա: Շուրջ 100 տարի տևած գագաուզների վերաբնակեցման այս գործընթացը հատկապես ուժեղացավ 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Արդյունքում գագաուզ ժողովուրդը բաժանվեց երկու հատվածի, փոքր մասը մնաց Բուլղարիայում, իսկ մեծ մասը հաստատվեց Բեսարաբիայում: Եթե Բալկաններում գագաուզները բուլղարական և հունական ուղղափառ եկեղեցիների հետևորդներ էին, ապա Բեսարաբիա գաղթելուց հետո նրանք մեծամասամբ դարձան ռուսաստանյան ուղղափառ եկեղեցու հետևորդներ:

Բեսարաբիայի հարավային տարածաշրջան Բուջակը XVI-XVIII դդ. հիմնականում բնակեցված էր թյուրքալեզու ցեղերով, որոնց մի մասը ցարական Ռուսաստանի ճնշման ներքո մինչև 1807 թ. լքեց այն՝ վերաբնակություն հաստատելով Ղրիմում, Մերձազովում և Ստավրոպոլի երկրամասում: Երբ 1812 թ. մայիսի 12-ի Բուխարեստի պայմանագրով Բեսարաբիան Օսմանյան Թուրքիայից անցավ Ռուսաստանին, ռուսաց թագավոր Ալեքսանդր I-ը Դոբրուջայից արտագաղթել ցանկացող և Ռուսաս-

տանում գաղութներ հիմնելու մտադրություն ունեցող բոլոր քրիստոնյաներին թույլատրեց բնակություն հաստատել Բուջակում: Արդյունքում, ավելի ուժեղացավ Անդրդանուբյան տարածաշրջանից գագաուզների և բուլղարացիների միգրացիան դեպի Բուջակ, որտեղ նրանք հիմնականում հաստատվեցին այնտեղից հեռացած թյուրքալեզու ցեղերի հողերի վրա: Ցարական իշխանությունները նորաբնակներին հատկացրեցին նաև չյուրացված հողաբաժիններ, շնորհեցին մի շարք տնտեսական և իրավական արտոնություններ, ստեղծեցին համապատասխան պայմաններ ռուսաց լեզվի ուսումնասիրության համար և այլն: Հատկանշական էր, որ XIX դ. շատ հետազոտողներ գագաուզներին չէին առանձնացնում Բուլղարիայից վերաբնակեցվածների ընդհանուր զանգվածից, ինչը բարդացնում էր նրանց ժողովրդագրական պատմության լիարժեք ուսումնասիրությունը: Հարկ է նշել, որ Բուջակը բնակեցվում էր նաև Հյուսիսային Բեսարաբիայից եկածներով, Ռուսաստանի ներքին նահանգներից փախած գյուղացիներով, Վարշավյան հերցոգության գերմանական գաղութաբնակներով: Կենտրոնական Բուջակում գագաուզները հիմնեցին Ավդարամ, Կոմրատ, Կոնգազ, Տոմայ, Չիշմիկիոյ բնակավայրերը: Հատկանշական էր, որ այստեղ վերաբնակվելուց անմիջապես հետո գագաուզները հանուն իրենց ազատության սկսեցին պայքար մղել մոլդովական բոյարների նկրտումների դեմ, ինչը հանգեցրեց Ռուսաստանի սենատի կողմից 1819 թ. դեկտեմբերին կենտրոնական Բուջակին օտարերկրյա գաղութի կարգավիճակ շնորհելուն: Դա փաստորեն տեղի բնակչության, որի զգալի մասը կազմում էին համահավաք բնակեցված գագաուզները, ինքնավարություն էր նշանակում:

Գագաուզների համար որպես վերջնական էթնիկական տա-

րածք ձևավորված Բուջակը XIX դ. երկրորդ կեսին հերթական անգամ մասնատվեց: 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի հետևանքով Հարավային Բեսարաբիայի այդ մարզի հարավարևմտյան մասը (Մերձպրուտի հարավը և ներկայիս Վուլկանեշտի շրջանի բնակավայրերը, ինչպես նաև բեսարաբյան գաղութների կենտրոն համարվող Բոլգրադը) անցավ Մոլդովայի իշխանությանը: Այն հանգեցրեց գագաուզ բնակչության հարկադրված արտագաղթին դեպի Ուկրաինայի ներկայիս Զապորոժյան մարզի տարածք: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում վերոնշյալ տարածքները վերադարձան Ռուսաստանին՝ փոխանակվելով ներկայիս ռումինական Դոբրուջայի հետ: Բուջակի գագաուզները չնայած Ռուսաստանում տեղի ունեցող քաղաքական և սոցիալական ցնցումների, չէին հրաժարվում իրենց ինքնորոշման իրականացման գաղափարից: 1905-1907 թթ. առաջին ռուսական հեղափոխության տարիներին գագաուզյան գլխավոր բնակավայր Կոմրատի բնակչությունն ապստամբեց հանուն իր ազգային և սոցիալական փրկության՝ հռչակելով Կոմրատյան հանրապետություն: Սակայն այդ ապստամբությունը ցարական իշխանությունների կողմից դաժանորեն ճնշվեց և 1909-1914 թթ. մեծ թվով գագաուզներ տարահանվեցին Բեսարաբիայից: 1917-1918 թթ. Ռուսաստանում ծավալված հեղափոխական իրադարձությունները կրկին խթանեցին Բուջակի գագաուզների սեփական ինքնավարություն ստեղծելու ձգտումները, որի իրականացման գործընթացը խափանվեց 1918 թ. հունվարին՝ Ռումինիայի կողմից Բեսարաբիան զինագրավելու հետևանքով: Ռումինական իշխանությունների որդեգրած դաժան ազգային-խտրական քաղաքականության պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել գագաուզների

ազգային հոգևոր-մշակութային զարգացման և առավել ևս ինքնորոշման իրավունքի իրականացման մասին:

Գագաուզների վիճակն էապես չփոխվեց նաև 1940 թ. հունիսից հետո, երբ ԽՍՀՄ-ը Ռումինիայից գրավեց Բեսարաբիան: Նույն թվականի օգոստոսին Բեսարաբիայի և Մոլդովական Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՄԻԽՍՀ)[5] շրջանների հիման վրա՝ կազմավորվեց Մոլդովական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (ՄԽՍՀ): Խորհրդային հասարակարգում, ինքնորոշման ձգտող փոքր ազգերի նկատմամբ Մոսկվայի կողմից բացահայտորեն իրականացվում էր ասիմիլացման քաղաքականություն: Ուստի պատահական չէր, որ ՄԽՍՀ ստեղծման ժամանակ, ստալինյան իշխանությունները ոտնահարելով գագաուզների, ինչպես նաև բուլղարացիների ազգային շահերը, նրանց էթնիկական տարածքները բաժանեցին երկու անհավասարաչափ մասերի՝ Բեսարաբիայի հարավն ու Բուկովինայի հյուսիսն ընդգրկելով Ուկրաինական ԽՍՀ կազմում: Արդյունքում, գագաուզների 80%-ը հայտնվեց Մոլդովայում, իսկ 20%-ը՝ Ուկրաինայի Բուջակին սահմանակից Օդեսայի մարզում: Արդյունքում, երկու ազգային հանրապետությունների սահմանով բաժանված տասնամյակներ շարունակ համահավաք ապրող գագաուզ ժողովուրդը սեփական էթնիկական տարածքում տարակենտրոնացվեց՝ զրկվելով իր գոյատևման և ազգային վերածննդի խնդիրների լուծման նպատակով համախմբվելու հնարավորությունից: Գագաուզների համահավաք բնակության դեմ էր ուղղված նաև 1941-1949 թթ.

[5] 1924 թ. հոկտեմբերին Ուկրաինական ԽՍՀ կազմում (հիմնականում ձախափնյա Մերձդնեստրի տարածքում) ստեղծվել էր Մոլդովական Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (ՄԻԽՍՀ):

խորհրդային իշխանությունների կողմից կազմակերպված նրանց մի մասի արտաքսումը Բեսարաբիայից դեպի Կենտրոնական Ասիա և Սիբիր, շատերի արգելափակումը ստալինյան ճամբարներում: Ըստ էության, ԽՍՀՄ-ում իրականացվում էր «Գագաուզիան առանց գագաուզների» քաղաքականություն, ինչը պայմանավորված էր նրանցով բնակեցված տարածքների կարևոր ռազմավարական նշանակությամբ: Տարիներ շարունակ խորհրդային իշխանության կողմից գագաուզների նկատմամբ իրականացվող ռուսաֆիկացման և Գագաուզիայի, որպես էթնիկական համայնք հասկացության ու նրա լեզվի վերացմանը նպատակաուղղված քաղաքականությանը դիմակայելու նպատակով, 1980-ականների սկզբներին տեղի մտավորական շրջանների որոշ ներկայացուցիչներ հանդես եկան գագաուզ ժողովրդի համահապարփակ իրավունքների պաշտպանության դիրքերից: Այն, մասնավորապես, արտահայտվում էր ընդհատակյա հավաքների կազմակերպմամբ, որոնց հիմնական նպատակը «խորհրդային ժողովուրդ» արհեստական հասկացության փոխարեն, իրենց հայրենակիցների մեջ «Գագաուզյան գաղափարի» սերմանումն էր: Այդ նպատակով գագաուզ ազգային գործիչները պահանջում էին մայրենի լեզվով վարել տեղական ռադիոհեռուստահաղորդումները, հրատարակել թերթեր և այլն: Սակայն այդ դրսևորումները իշխանությունների կողմից ճնշվում էին ձերբակալությունների, հոգեբուժարաններում արգելափակելու, աշխատանքից ազատելու, Խորհրդային միության կոմունիստական կուսակցության (ԽՄԿԿ) շարքերից հեռացնելու և զանազան այլ միջոցներով:

Այսպիսով, դեռևս միջնադարից սկիզբ առած գագաուզյան խնդրի ձևավորման գործընթացն արտահայտվում էր պատմութ-

յան տարբեր ժամանակահատվածներում գագաուզ ժողովրդի կողմից իր ազգային իղձերի իրականացմանը նպատակաուղղված շարունակական փորձերով, որոնք հետևողականորեն ճնշվում էին զանազան կայսերապաշտ իշխանությունների կողմից:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳԱԳԱՈՒԶՅԱՆ ՀԱՐՑԸ XX դ. ՎԵՐՋԵՐԻՆ

1. Գագաուզիան «վերակառուցման» ժամանակաշրջանում (1985–1990 թթ.)

1980-ականների երկրորդ կեսին, ոգևորված ԽՍՀՄ-ում արմատական ժողովրդավարական բարեփոխումներ ենթադրող «վերակառուցման» քաղաքականության հռչակմամբ, Մոլդովայում համահավաք բնակվող գագաուզները բարձրաձայնեցին տարիների ընթացքում իրենց հուզող ազգային, սոցիալ-տնտեսական և լեզվամշակութային հիմնահարցերի մասին:

Սակայն սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգամիջյան հարաբերությունների ոլորտներում կուտակված խնդիրները լուծելու կենտրոնական իշխանությունների անկարողությունը հանգեցրեց գրեթե բոլոր բնագավառներում երկրի վիճակի էլ ավելի վատթարացմանը՝ խորացնելով ԽՍՀՄ ժողովուրդների անվստահությունը կենտրոնի հանդեպ: Մինչդեռ միութենական հանրապետություններում ժողովրդի մեջ մեծ հեղինակություն սկսեցին վայելել տեղերում ի հայտ եկած հասարակական շարժումները, որոնք, ըստ էության, աստիճանաբար վերածվելով «այլընտրանքային իշխանությունների», առաջ քաշեցին կենտրոնից անջատվելու և անկախ պետականության հաստատման անհրաժեշտության գաղափարը: 1980-ականների վերջին

ԽՍՀՄ-ում գրեթե համատարած բնույթ ընդունեց անկախության ձգտումը, ինչը էլ ավելի սրեց ազգամիջյան հարաբերությունները:

Վերոնշյալ գործընթացներից զերծ չմնաց նաև Մոլդովական ԽՍՀ-ը, ուր 1989 թ. մայիսին ստեղծվել էր «Ժողովրդական ճակատ», որի մեջ ընդգրկվել էին նաև մի շարք ազգայնական կազմակերպություններ: Ի տարբերություն միութենական այլ հանրապետությունների ժողովրդական շարժումների, «Մոլդովայի ժողովրդական ճակատը» հիմնվում էր ոչ թե Մոլդովական անկախ պետականության, այլ հիմնականում «Մեծ Ռումինիայի» ստեղծման գաղափարի վրա, որի մեջ պետք է մտներ նաև Մոլդովական ԽՍՀ-ն: Տվյալ գաղափարի շահարկման մեջ իր զգալի դերակատարությունն ուներ Բուխարեստը, որը նշյալ գաղափարը Մոլդովայում զարգացնում էր «Ժողովրդական ճակատի» և իշխանական կառույցներում իր դրածոների միջոցով: Ռումինիան իր նպատակին հասնելու համար հարևան երկրում ազգայնամոլական տրամադրություններ էր հրահրում, որոնցով էլ առաջնորդվելով «Մոլդովայի ժողովրդական ճակատը» ձեռնամուխ եղավ հանրապետությունը մոնոէթնիկ դարձնելու քայլերի իրականացմանը: Այդ նպատակով, հանրահավաքներում բոլոր «եկվորներին» արտաքսելու կոչեր սկսեցին հնչել, ինչը նպաստում էր հատկապես հակառուսական տրամադրությունների բորբոքմանն ու ընդհանուր իրավիճակի սրմանը: Մոլդովայի իշխանությունները ոչ միայն չէին փորձում կասեցնել իրադարձությունների զարգացման նման ընթացքը, այլև «Ժողովրդական ճակատի» ճնշման ներքո ընդունած իրենց որոշումներով ոտնահարում էին հանրապետության «հիմնական» ազգին չպատկանող բնակչության իրավունքները, ինչից տուժում էին նաև գագաուզները: Քիշնևի կողմից պետական մակարդակով իրականացվող երկրի ռումինացման քաղաքականությունը հանգեցրեց Գագաուզիայում Մոլդովայից անջատվելու շարժման ծավալմանը: Վերջինով էլ պայմանավորված՝ մի շարք գագաուզ մտավորականների ջանքերով 1988 թ. մարտին Կոմրատում հիմնվեց «Գագաուզ Խալկը» (Գագաուզյան ժողովուրդ) բանավեճային ակումբ, որը 1989 թ. մայիսի 21-ին կայացած գագաուզ ժողովրդի ներկայացուցիչների առաջին համագումարում միավորվելով «Բիրլիկ», «Վաթան» և «Միլլեթ սանժըսի» շարժումների հետ վերածվեց «Գագաուզ Խալկը» համագագաուզյան հասարակական շարժման (1991 թ. այն դարձավ կուսակցություն): Շարժման գլխավոր նպատակն էր գագաուզ ժողովրդի խնդիրները լսելի դարձնել Մոսկվային և հասնել դրանց լուծմանը: 1989 թ. օգոստոսի 7-ին ՄԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը ելնելով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների հարցապնդումներից և գագաուզ ժողովրդի ներկայացուցիչների դիմումներից՝ Գագաուզյան ինքնավարություն ստեղծելու նպատակահարմարության ուսումնասիրության հարցով ստեղծեց հատուկ հանձնաժողով, որն, ըստ էության, լուրջ աշխատանք չիրականացրեց այդ ուղղությամբ:

1989 թ. օգոստոսի 27-ին «Ժողովրդական ճակատը» Քիշնևում կազմակերպեց բազմամարդ ցույց, իսկ օգոստոսի 31-ին Մոլդովական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց «ՄԽՍՀ տարածքում լեզուների գործառնության մասին» օրենքը, որով հանրապետությունում պետական լեզու հայտարարվեց լատիներեն տառագրությամբ մոլդովերենը՝ փաստորեն ռումիներենը, իսկ ռուսերենը դասվեց որպես զուտ ազգամիջյան շփման լեզու: Երկրի հասարակական կյանքի բոլոր ոլորտներից ռուսաց

լեզվի դուրսմղմանը նպատակաուղղված նշյալ օրենքը խիստ բացասաբար ընդունվեց առավելապես ռուսներով, գագաուզներով, ուկրաինացիներով և բուլղարացիներով բնակեցված հարավային տարածաշրջանի ազգաբնակչության կողմից, քանի որ Մոլդովայի ԽՍՀՄ կազմի մեջ մտնելուց հետո անգրագիտության վերացման նպատակով այստեղ ուղարկվեցին բազմաթիվ ռուսալեզու մանկավարժներ, ինչի հետևանքով տարիներ շարունակ կրթական գործն այս տարածաշրջանում կազմակերպվում էր ռուսերենով, որը դարձել էր Մոլդովայի հարավում բնակվող ազգային փոքրամասնությունների հիմնական, եթե ոչ գրեթե մայրենի լեզու: Եվ միայն 1986 թ. թույլատրվեց գագաուզերենը օգտագործել տեղական ՀԼՄ-ներում: Ուստի, ի պատասխան վերոնշյալ օրենքի ընդունման, գագաուզյան ազգային շարժումները կազմակերպեցին հակացույցեր: Այս առումով նշենք, որ նույնիսկ 2010-ական թվականների վերջերին Գագաուզիայի կրթական գործընթացում և հասարակական կյանքի շատ ոլորտներում շարունակում էր գերիշխել ռուսաց լեզուն, որին ազատ տիրապետում էր Գագաուզիայի բնակչության գրեթե 100%-ը:

Երկրում լեզվամշակութային ու սոցիալ-տնտեսական խնդիրների սրացումը, ինչպես նաև պետական ամենաբարձր մակարդակով Մոլդովայի Ռումինիայի հետ միավորվելու անհրաժեշտության մասին կոչերը հարավի բազմազգ բնակչությանը դրդեց չենթարկվել քիշնևյան իշխանություններին և աջակից լինել գագաուզ ժողովրդի անկախության ձգտմանը: 1989 թ. նոյեմբերի 12-ին Կոմրատում կայացավ գագաուզ ժողովրդի ներկայացուցիչների Արտակարգ համագումար, որը որոշում ընդունեց Մոլդովական ԽՍՀ-ի կազմում Կոմրատ մայրաքաղաքով գագաուզյան ինքնավարություն ստեղծելու վերաբերյալ: Սակայն

հաջորդ օրը Քիշնևը կտրուկ քննադատելով այդ քայլը չեղարկեց համագումարի բոլոր որոշումները: Դրա հետ մեկտեղ, մոլդովական ազգայնականները շարունակեցին ռուսաց լեզվի դուրսմղմանն ու «մաքուր ազգային հանրապետության» ստեղծմանը նպատակաուղղված իրենց պետական քաղաքականությունը: Իրենց հերթին գագաուզները փորձեցին Մոլդովայի բուլղարացիների հետ միասին հակադրվել Քիշնևի որդեգրած այս քաղաքականությանը, սակայն երկու ժողովուրդների միջև ի հայտ եկած տարակարծությունների հետևանքով այն հաջողություն չունեցավ: Մասնավորապես, փոքրաթիվ մոլդովական բուլղարացիների մոտ մտավախություն առաջացավ, թե գագաուզների կողմից սեփական պետության ստեղծման դեպքում, այստեղ ևս, Մոլդովայի օրինակով, իրենք կարող են հալածանքների ենթարկվել: Միաժամանակ, նրանք ոգևորված էին Բոլգրադ մայրաքաղաքով ազգային ինքնավարություն հիմնելու ուկրաինական բուլղարացիների նախաձեռնությամբ, որը շուտով ձախողվեց:

1990 թ. գրեթե ողջ ընթացքում Մոլդովայի գագաուզները տարբեր համաձայնեցնող հանձնաժողովներից և ԽՍՀՄ ղեկավարությունից հատևողականորեն պահանջում էին լուծում տալ իրենց ինքնավարության ստեղծման հարցին: Սակայն կենտրոնը քար լռություն էր պահպանում, քանի որ երկրում գոյություն ունեին նաև այլ բազմաթիվ փոքրաթիվ ժողովուրդներ, որոնք ևս ձգտում էին հասնել սեփական ազգային խնդիրների լուծմանը:

1990 թ. հունիսի 23-ին Մոլդովայի խորհրդարանն ընդունեց «Մոլդովայի Հանրապետության պետական ինքնիշխանության մասին» հռչակագիր, իսկ հուլիսի 27-ին երկրի օրենսդիր մարմի-

նը անօրինական ճանաչեց սեփական ինքնավարության ստեղծմանը նպատակաուղղված գագաուզների բոլոր փորձերը:

Ի պատասխան՝ 1990 թ. օգոստոսի 19-ին Կոմրատում հրավիրվեց Մոլդովական ԽՍՀ հարավի 5 շրջանների տարբեր մակարդակների խորհուրդներում ընտրված ժողովրդական պատգամավորների I համագումարը, որը հայտարարեց, թե 1940 թ. օգոստոսի 2-ին Մոլդովական ԽՍՀ-ի կազմավորման փաստը վերոնշյալ հռչակագրով Մոլդովայի խորհրդարանի կողմից անօրինական համարելը ըստ էության անօրինական է և դա գագաուզներին ազատում է Մոլդովական ԽՍՀ-ի նկատմամբ ունեցած պետահիրավական պարտավորություններից: Դրանից ելնելով համագումարը միաձայն ընդունեց «Մոլդովայի Հանրապետությունից գագաուզ ժողովրդի ազատության և անկախության մասին հռչակագիր», որի հիման վրա ստեղծվում էր անկախ Գագաուզյան Հանրապետություն՝ Կոմրատ մայրաքաղաքով: Այն ի հակադրություն «մոլդովացիների անջատողականության», լինելու էր «նորացված Խորհրդային միության կազմում»: Համագումարում «Գագաուզ Խալկըի» շարժման առաջնորդների, շրջանային, քաղաքային և գյուղական խորհուրդների նախագահների, ԽՄԿԿ շրջանային կոմիտեների քարտուղարների ներգրավմամբ ձևավորվեց Ժամանակավոր կոմիտե, որը մինչև Գագաուզյան Հանրապետությունում 1990 թ. հոկտեմբերի 28-ին նախատեսված Գերագույն խորհրդի ընտրությունների անցկացումը իր վրա վերցրեց ինքնահռչակ հանրապետության ողջ իշխանությունը: Օգոստոսի 21-ին մոլդովական իշխանությունները վերոնշյալ համագումարի անցկացումը ճանաչեցին հակասահմանադրական, իսկ Գագաուզյան Հանրապետության ստեղծման և նրա Մոլդովայի կազմից դուրս գալու մասին ընդունված

որոշումներն անօրինական և իրավական հետևանքներ չունեցող: Միաժամանակ, պաշտոնական Քիշնևը «Գագաուզ Խալկըի» շարժումը հայտարարեց օրենքից դուրս, իսկ շարժման ակտիվիստների նկատմամբ հարուցվեցին քրեական գործեր:

Սակայն գագաուզները չէին նահանջում: 1990 թ. օգոստոսի 23-ին Կոմրատի շրջանային խորհրդի նախագահությունը ընդունեց որոշում՝ հետաքննություն անցկացնելու նպատակով Քիշնևից ժամանած Մոլդովայի ՊԱԿ-ի, ՆԳՆ-ի և դատախազության ներկայացուցիչներին տեղի հյուրանոցից դուրս հրավիրելու վերաբերյալ: Իր հերթին Ժամանակավոր կոմիտեն բնակչությանը կենտրոնական մարմինների ներկայացուցիչներին ցուցմունքներ չտալու կոչ արեց: Չնայած այս ամենին, Գագաուզիայի ղեկավարությունը ինքնավարություն ստանալու պայմանով՝ Մոլդովայի կազմում մնալու պատրաստակամության ազդակներ էր տալիս Քիշնևին: Մինչդեռ Մոլդովայի ղեկավարությունը կոշտ դիրքորոշում որդեգրելով և նպատակ ունենալով ճնշել ինքնուրույնության ձեռքբերմանը նպատակամղված գագաուզների ցանկացած փորձ, ձեռնամուխ եղավ չճանաչված հանրապետությունում խորհրդարանական ընտրությունների անցկացման խափանմանը: Այդ նպատակով, հոկտեմբերի 25-ին Քիշնևը, միլիցիայի ջոկատների ուղեկցությամբ, Կոմրատ ուղարկեց «Ժողովրդական ճակատ»-ի ակտիվիստներով և Ռումինիայից եկած «կամավորներով» լեցուն ավտոշարասյուններ (ըստ գագաուզյան աղբյուրների 50 հազ. մարդ): «Դեպի Գագաուզիա արշավը» ղեկավարում էր Մոլդովայի վարչապետ Մ.Դրուկը, ով «Ժողովրդական ճակատ»-ի առաջնորդներից էր: Ինքնահռչակ հանրապետությունում զորահավաք հայտարարվեց, կազմավորվեցին տեղական միլիցիայի ջոկատներ, բուլղարական և գագաուզյան գյու-

ղերի բնակիչները փակեցին տարածաշրջան մուտք գործող բոլոր ճանապարհները, բնակավայրերի շուրջ խրամատներ էին փորվում, հիմնականում երկաթյա ձողերով, բահերով և այլ առարկաներով զինված տեղի բնակչությունը ոտքի ելավ պաշտպանելու իր քաղաքներն ու գյուղերը: Միաժամանակ, հոկտեմբերի 26-27-ին գագաուզներին օգնության հասան մի քանի տասնյակ ավտոբուսներով տարածաշրջան ժամանած մերձդնեստրյան կամավորական ջոկատները: Ըստ էության, Մոլդովայի վրա կախվել էր քաղաքացիական պատերազմի լուրջ սպառնալիք և միայն հոկտեմբերի 26-ին Ուկրաինայից Գագաուզիա մտցված ԽՍՀՄ զինված ուժերի Բոլգրադյան դեսանտային գումարտակի միջամտության շնորհիվ հաջողվեց կասեցնել հակամարտության հետագա ծավալումը՝ խուսափելով մեծ արյունահեղությունից («Դեպի Գագաուզիա արշավի» ժամանակ զոհվեց 3 մարդ՝ երեքն էլ գագաուզյան կողմից): Ծավալված բանակցությունների արդյունքում, հոկտեմբերի 30-ի գիշերը պայմանավորվածություն ձեռքբերվեց մոլդովա-ռումինական և մերձդնեստրյան «կամավորների» Գագաուզիայից Քիշնև ու Տիրասպոլ ետ վերադառնալու մասին: Միաժամանակ, «Գագաուզ Խալկը»-ն հայտարարեց ընտրությունների հետաձգման մասին, իսկ Մոլդովայի խորհրդարանն իր հերթին առկախեց գագաուզյան պետությունը չճանաչելու վերաբերյալ իր որոշումը:

1990 թ. հոկտեմբերի 31-ին կայացավ Գագաուզյան Հանրապետության Գերագույն խորհրդի կազմակերպչական նստաշրջանը, որն այդ մարմնի նախագահ ընտրեց Ս. Տոպալին: Փաստորեն, դրանով իսկ սկիզբ առավ գագաուզյան պետականության կազմավորման գործընթացը, որը չճանաչված Գագաուզյան Հանրապետության ձևով գոյատևեց 4 տարի, իսկ 1994 թվակա-

նից՝ Մոլդովայի Հանրապետության կազմում շարունակեց իր գոյությունը որպես հատուկ վարչա-տարածքային կազմավորում:

2. Գագաուզ-երի Ինքնավար-Տարածքային Կազմավորման ստեղծումը

1991 թ. օգոստոսի 27-ին Մոլդովան չեղյալ հայտարարելով 1939 թ. օգոստոսի 23-ին ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև կնքված չհարձակման մասին պայմանագիրը (Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը) և 1940 թ. օգոստոսի 2-ի «Միութենական Մոլդովական ԽՍՀ կազմավորման մասին» ԽՍՀՄ օրենքը, հռչակեց իր անկախությունը՝ հանդես գալով որպես ունիտար պետություն: Դրանից հետո Քիշնևն էլ ավելի կոշտացրեց իր դիրքորոշումը երկրում ինքնակառավարման ցանկացած դրսևորումների հանդեպ: Սեպտեմբերին Մոլդովայի ներքին գործերի մարմինները, ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության պահպանողական թևի կողմից կազմակերպված օգոստոսյան հեղաշրջման («պուտչի») նախաձեռնողներին (ԳԿՀՊ-ին) աջակցություն ցուցաբերելու մեղադրանքով, ձերբակալեցին գագաուզյան և մերձդնեստրյան բոլոր առաջնորդներին, ինչը Գագաուզիայում բողոքի զանգվածային ցույցերի ծավալման պատճառ հանդիսացավ: Ընդ որում, ցուցարարները պատրաստակամություն էին հայտնում պայքարել մոլդովական ազգայնականների դեմ, եթե նրանք ձեռնարկեն նոր «արշավ» դեպի Գագաուզիա, կամ էլ փորձեն ուժով ցրել բողոքի ակցիաների մասնակիցներին: 1991 թ. դեկտեմբերին Գագաուզիայի և Մերձդնեստրի բնակիչները բոյկոտեցին Մոլդովայում անցկացված ոչ այլընտրանքային նախագահական ընտրությունները, որում վստահ հաղթանակ տարավ ռումինամետ

Մ. Մնեգուրը[6]: Այս ամենի հետևանքով Գագաուզիայում ուժեղացավ կողմնորոշվածությունը դեպի Ռուսաստան, ինչը, բնականաբար, թուլացրեց Քիշնևի ազդեցությունը տարածաշրջանում: Սակայն Մոսկվայից սպասվելիք ակնկալիքները չարդարացան և գագաուզները քաղաքական աջակցության համար դիմեցին Թուրքիային, որը ևս շոշափելի քայլեր չձեռնարկեց:

ԽՍՀՄ փլուզումից հետո (1991 թ. դեկտեմբեր) Գագաուզիայում աստիճանաբար արմատավորվում էր Մոլդովայի կազմում լայն ինքնավարություն ստանալու գաղափարը, որի ակտիվ ջատագովներից էր «Գագաուզ-Երի» թերթի շուրջը համախմբված չափավոր ընդդիմությունը: Փաստորեն, ի տարբերություն Տիրասպոլի, Կոմրատը կտրուկ չէր դնում Մոլդովայի կազմից դուրս գալու հարց: Ուստի, պատահական չէր, երբ 1992 թ. բռնկվեց Մերձդնեստրյան հակամարտությունը, գագաուզյան քաղաքական գործիչները ոչ միայն առանձնակի ակտիվություն հանդես չբերեցին, այլև բանակցություններ սկսեցին մոլդովական կողմի հետ: Իր հերթին Քիշնևը Դնեստրի վրա կրած ռազմական պարտությունից հետո, համոզվելով խնդիրների ուժային լուծման անարդյունավետության մեջ, Գագաուզիայի նկատմամբ ոչ միայն ուժ չկիրառեց, այլև ազատ արձակեց վերջինի առաջնորդներին և 1992 թ. ստեղծեց գագաուզյան խնդրի լուծման հարցերով հանձնաժողով:

1994 թ. փետրվարի 27-ին Մոլդովայում կայացած խորհրդարանական ընտրությունների հետևանքով «Ժողովրդական ճակատ»-ի փոխարեն իշխանության եկած չափավոր դաշինքին խիստ անհանգստացնում էր գագաուզների և հանրապետությունում մյուս այլազգիների հասարակական-քաղաքական շարժումների ակտիվացումը՝ հատկապես մոլդովական իշխանության տեղական ներկայացուցիչների և գագաուզյան ռազմականացված ստորաբաժանումների միջև պարբերաբար տեղի ունեցող բախումները: Այս առումով հատկանշական էր, որ թեև Կոմրատը խուսափում էր Մերձդնեստրյան հակամարտության մեջ ներքաշվելուց, սակայն շարունակում էր սերտորեն համագործակցել Տիրասպոլի հետ՝ Մոլդովան երեք պետությունների համադաշնության վերածելու գաղափարի առաջ մղման հարցում, ինչը խիստ մտահոգում էր ՄՀ իշխանություններին: Դրա հետ մեկտեղ, Մերձդնեստրն ու Գագաուզիան հանդիսանալով ԽՍՀՄ մայրամուտի շրջանում ծավալված գործընթացների արդյունք, չունեին միանման գաղափարախոսություններ, ինչի հետևանքով նրանք անցումային ժամանակաշրջանում Մոլդովական ԽՍՀ-ի պառակտման գործընթացում հանդես չեկան որպես գործընկերներ: Ուստի, պատահական չէր, երբ 1994 թ. սկզբին, ՄՀ առաջին նախագահ Մ. Մնեգուրը (1990-1997 թթ.) հրապարակավ դեմ արտահայտվելով Մոլդովան երեք դաշնային պետությունների (Մոլդովա, Գագաուզիա և Մերձդնեստր) բաժանելու գաղափարին, աջակցություն հայտնեց Գագաուզիայում ինքնակառավարման համակարգ հաստատելու ծրագրին, չճանաչված հանրապետության ղեկավարությունը հրաժարվեց համադաշնության գաղափարից և համաձայնվեց ինքնավարության հատուկ իրավական կարգավիճակի դիմաց՝ ետ կանգնել անկախության գաղափարից: Միաժամանակ, Կոմրատը ապահովեց ինքնահռչակ հանրապետության բնակչության մասնակցությունը ՄՀ խորհրդարանական ընտրություններին, դրանով իսկ նրանց մտցնելով Մոլդովայի իրավական դաշտ: Հատկանշական էր, որ

[6] 1993 թ. Մ. Մնեգուրը պահանջեց Մոլդովայի Ռումինիայի հետ միավորման վերաբերյալ հանրաքվե անցկացնել, ինչին ընդդիմացավ երկրի խորհրդարանը:

Գագաուզիայի նման դիրքորոշումը Տիրասպոլը որակվեց իբրև «դավաճանական քայլ» և դադարեցրեց շփումները Կոմրատի հետ:

1994 թ. մարտին, Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին օրենքի նախագիծ մշակելու նպատակով, Եվրոպայի խորհրդի աջակցությամբ ստեղծվեց Մոլդովայի Հանրապետության խորհրդարանի և Գագաուզիայի Հանրապետության Գերագույն խորհրդի համատեղ հանձնաժողով: Նույն թվականի հունիսին Գագաուզիայի և Մոլդովայի ղեկավարները քննարկելով ինքնավարության վերաբերյալ օրենքի նախագիծը, այն ուղարկեցին երկրի խորհրդարանի հաստատմանը: Ընդ որում, ՄՀ նախագահ Մ. Սնեգուրը պատգամավորներին զգուշացրեց, թե տվյալ օրենքը խորհրդարանի հավանությանը չարժանանալու դեպքում, ինքը Գագաուզիայի ինքնավարության ստեղծման վերաբերյալ հրամանագիր կստորագրի: Ժամանակակից գագաուզյան քաղաքական գործիչների մեծ մասը գտնում է, որ Քիշնևի և Կոմրատի միջև փոխզիջումային համաձայնության ձեռքբերման գործում կարևոր դեր են խաղացել նաև Ռուսաստանն ու Թուրքիան: Ըստ նրանց՝ Մոսկվան Գագաուզիային սատարեց 1990 թ. Բոլգորոդյան դեսանտային գումարտակը հանրապետության տարածք մտցնելով, ինչպես նաև 1992 թ. Դնեստրի վրա խաղաղապահ առաքելություն հիմնելով, ինչը որոշակի զսպիչ գործոն դարձավ Մոլդովայի համար, իսկ Անկարան՝ հատկապես Ս. Դեմիրելի Թուրքիայի նախագահ ընտրվելուց հետո, դիվանագիտական ճակատում Գագաուզիային առնչվող հարցերում հանդես բերած իր ակտիվությամբ և Գագաուզիայի ինքնավար կազմավորման ստեղծման պարագայում Մոլդովայում մեծ ներդրումներ կատարելու պատրաստակամությամբ: Հետագայում թուրքական մի ընկերություն պայմանագիր ստորագրեց Քիշնևի օդանավակայանի վերակառուցման և ՄՀ մայրաքաղաքում «BTR» թուրքա-ռումինական բանկի մասնաճյուղ բացելու վերաբերյալ:

1994 թ. դեկտեմբերի 23-ին Մոլդովայի Հանրապետության խորհրդարանն ընդունեց օրենք «Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին», համաձայն որի Մոլդովայի կազմում ստեղծվեց Գագաուզ-Երի՝ Գագաուզիա Ինքնավար-Տարածքային Կազմավորումը՝ Կոմրատ վարչական կենտրոնով: Միաժամանակ, խորհրդարանը ընդունեց նաև Գագաուզիայի իշխանություններին հասցեագրված բանաձև, որում վերջինների կողմից ընդունած իրավական ակտերը մոլդովական օրենսդրությանը համապատասխանեցնելու կոչ էր արվում: Վերոնշյալ օրենքում, մասնավորապես, նշվում էր, թե «գագաուզյան ժողովուրդը»՝ էթնիկ խումբ կամ էթնիկ բնակչություն չէ, այլ Մոլդովայի Հանրապետության լիիրավ տարածք է: Օրենքը նաև թույլ էր տալիս գագաուզների ինքնորոշում՝ Մոլդովայի Հանրապետության անկախ պետության կարգավիճակի փոփոխման դեպքում, ինչը ռումինաինիոնիստների համար որշակի զսպման գործոն էր դառնում: Որպես ինքնավարության պաշտոնական լեզուներ ընդունվում էին գագաուզերենը, ռուսերենը և մոլդովերենը: Գագաուզիայի բարձրագույն պաշտոնատար անձը 4 տարի ժամկետով ընտրված բաշկանն էր լինելու, ով հանդիսանալու էր նաև ՄՀ կառավարության անդամ: Ինքնավար կազմավորումը ունենալու էր՝ գործադիր իշխանության բարձրագույն մարմին՝ Գործադիր կոմիտե, 35 պատգամավորից բաղկացած բարձրագույն ներկայացուցչական օրենսդիր մարմին՝ Ժողովրդական ժողով (ընտրվելու էր 4 տարով), ինչպես նաև կենտրոնական համա-

պատասխան մարմինների ընդհանուր իրավասության ներքո գտնվող դատական, ոստիկանական համակարգեր և անվտանգության մարմիններ: Ինքնավարությանը լիազորություններ էին տրվում կրթության, մշակույթի, տեղական զարգացման, հարկային, բյուջեի, տարածքային կառավարման և սոցիալական ապահովման բնագավառներում: Միաժամանակ, կենտրոնական իշխանությունների իրավասության ներքո էին մնում ինքնավար կազմավորման ֆինանսական, պաշտպանական և արտաքին քաղաքական հարցերը: Ընդ որում, եթե իշխանության կենտրոնական մարմինների քաղաքականությունը հակասեր գագաուզ ժողովրդի շահերին, ինքնավար կազմավորման կառավարությունն իրավունք ուներ դիմել Մոլդովայի սահմանադրական դատարանին: Սակայն նշյալ օրենքն ընդունելուց հետո էլ մոլդովական բարձրաստիճան պաշտոնյաները շարունակում էին դժկամությամբ ընդունել գագուզյան ինքնավարության ղեկավարներին, որոնց կողմից ներկայացված խնդիրներն ու առաջարկները հաճախ մնում էին անարձագանք: Տվյալ ֆոնի վրա հատկանշական էր, որ մինչև 1995 թվականը Գագաուզիայի սահմաններն այդպես էլ չէին հստակեցվել և միայն նշյալ թվականի մարտի 5-ին առավելապես գագաուզներով բնակեցված 36 գյուղում անցկացվեց կենտրոնացած ինքնավարության ստեղծման հանրաքվե, ինչի արդյունքներով ձևավորվեց Գագաուզիա Ինքնավար-Տարածքային Կազմավորման տարածքը, որը կազմեց 1848 խ/կմ: Վարչական առումով այն բաժանվեց 3 շրջանի՝ Կոմրատյան, Չադիր-Լունգյան և Վուլկանեշտյան, որոնց մեջ ներառվեց 3 քաղաք, այդ թվում և ինքնավարության վարչական կենտրոն Կոմրատը և 29 գյուղ: Առավելապես բուլղարացիներով բնակեցված Թարակլիայի շրջանը չընդգրկվեց

Գագաուզիայի կազմի մեջ: Փաստորեն, ժամանակին Գագաուզիայի Հանրապետության մեջ ներառված առավելապես տարբեր ազգային փոքրամասնություններից բաղկացած բնակչություն ունեցող հարավային բնակավայրերից ոչ բոլորն ընդգրկվեցին «Գագաուզ-Երի»-ի մեջ, այլ միայն նրանք, որոնց բնակչության 50%-ից ավելին գագաուզներ էին: Արդյունքում, ինքնավար կազմավորման բնակչության 82,1%-ը կազմեցին գագաուզներ, 5,1%-ը՝ բուլղարացիներ, 4,8%-ը՝ մոլդովացիներ, 3,8%-ը՝ ռուսներ, 3,2%-ը՝ ուկրաինացիներ և 1%-ը՝ այլազգիներ: Ինքնավար կազմավորման վարչատարածքային բաժանման ոչ համահավաք լինելու հանգամանքը բավականին բարդացնում էր կենտրոնի կողմից թե Գագաուզիայի և, թե նրան հարակից, հիմնականում ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջանների կառավարումը: Մանավանդ որ Քիշնևը մտավախություն ուներ, թե երկրի ռումինիզացման ուժեղացման պայմաններում, առավելապես ոչ մոլդովացի բնակչություն ունեցող հարավի շրջանները կարող են կողմնորոշվել դեպի Գագաուզիա, ինչը հղի էր դժվար կառավարելի միասնական կոնգլոմերատի ստեղծման վտանգով: Դրանից էլ ելնելով, 1998-1999 թթ. Մոլդովայի իշխանությունները ձեռնամուխ եղան երկրի վարչատարածքային բաժանման «օպտիմալացմանը», որի ամենացայտուն դրսևորումներից էր առավելապես էթնիկ բուլղարացիներով բնակեցված Թարակլիայի շրջանի միացումը Մոլդովայի Կագույան գավառին[7]: Թեև, ի տարբերություն Թարակլիայի շրջանի, Գագաուզիայի վարչատարածքային սահմանները փոփոխության չենթարկվեցին, սակայն Քիշնևը քայլ առ քայլ սկսեց սահմանափակել իր իսկ կողմից վերջինին շնորհած ինքնավարության իրավունքները, ինչը

[7] 2003 թ. Թարակլիայի շրջանը կրկին վերականգնվեց:

2000-ականներին աստիճանաբար հանգեցրեց Քիշնևի և Կոմրատի միջև նոր լարվածության առաջացման: Վերջինն, ըստ էության, «պարարտ հող» ստեղծեց Գագաուզիայի և Մերձդնեստրի միջև շփումների վերականգնման համար: 2000 թ. հուլիսին Տիրասպոլում բացվեց Գագաուզիայի պաշտոնական ներկայացուցչություն, որը նպաստեց գագաուզա-մերձդնեստրյան կապերի ամրապնդմանը: Դրա արտահայտություններից էր Մերձդնեստրի ներկայացուցիչների մասնակցությունը Մոլդովայի դաշնայնացման նշանաբանով Քիշնևում կազմակերպված գագաուզ ժողովրդի պատվիրակների ժողովին, որի ընթացքում երկուստեք առաջ քաշվեց համատեղ առաջարկություն Քիշնևի և Կոմրատի միջև իշխանության հավասարաչափ բաշխման ծրագրի մշակման համար հատուկ հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ: Բնականաբար, գագաուզա-մերձդնեստրյան հարաբերությունների սերտացումը լրջորեն անհանգստացնում էր Մոլդովայի իշխանություններին, որոնք գագաուզյան ինքնավարության սահմանադրական իրավունքների հետևողական սահմանափակմամբ ձգտում էին խոչընդոտել Կոմրատ-Տիրասպոլ դաշինքի ձևավորմանը: Չնայած դրան, Գագաուզիայի Ինքնավար Տարածքային Կազմավորման և Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության (ՄՄՀ) միջև որոշակի ոլորտներում համագործակցությունը շարունակվում էր ծավալվել: Այսպես, XX դ. վերջին կողմերի միջև ստորագրվեց համաձայնագիր՝ «Առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին», ակտիվ շփումներ էին իրականացվում նաև օրենսդիր մարմինների մակարդակով, որոնք արտահայտվում էին Մերձդնեստրի Գերագույն Խորհրդի ու Գագաուզիայի Ժողովրդական Ժողովի պատվիրակությունների փոխայցելություններով: Փաստորեն Կոմրատն իր հարաբերությունները Տիրասպոլի հետ կառուցում էր ոչ թե որպես Մոլդովայի բաղկացուցիչ մասի, այլ իբրև առանձին վերցրած սուբյեկտի հետ, ինչը, թերևս, վկայում էր Գագաուզիայում անջատողական գաղափարների տարածման մասին: Այս ամենը Քիշնևում դիտարկվում էր որպես բացահայտ մարտահրավեր Մոլդովայի Հանրապետության ինքնիշխանությանը և մեծացնում կենտրոնական մարմինների անվստահությունը Կոմրատի հանդեպ:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԳԱԳԱՈՒԶԻԱՆ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

1. Հակասությունների խորացումը Քիշնևի և Կոմրատի միջև

Ընդհանուր առմամբ, XXI դ. առաջին տասնամյակի ընթացքում Մոլդովայի և Գագաուզիայի միջև վերոնշյալ առկա լարվածությունը, կրելով համեմատաբար «կայուն» բնույթ, կողմերին որոշ ժամանակ զերծ էր պահում կտրուկ քայլեր ձեռնարկելուց: Սակայն 2009 թ. Մոլդովայում աջերի, այդ թվում ռումինամետ ուժերի իշխանության գալու հետևանքով կրկին ուժեղացավ Քիշնևի կողմնորոշվածությունը դեպի Բուխարեստ: Գագաուզյան իշխանական կառույցների ներկայացուցիչները զգուշանալով կենտրոնի կողմից 1990-ականների սկզբին իրականացվող ասիմիլացման քաղաքականության վերսկսումից, տարբեր մակարդակներով սկսեցին հանդես գալ Մոլդովայից անկախ Գագաուզիա պետության հնարավոր վերականգնման մասին հայտարարություններով: Դրանք էլ ավելի հաճախակի դարձան 2008 թ. Կոսովոյի անկախության հռչակումից հետո, երբ Կոմրատի իշխանությունները հայտարարեցին, թե Գագաուզիան իբրև ինքնուրույն պետություն օժտված է ավելի մեծ լեգիտիմությամբ, քան Կոսովոն: Այս համատեքստում ինքնավար կազմավորման իշխանությունները հավանություն տվեցին նաև

Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունների ճանաչմանը: 2010 թվականից սկսած ինքնավար տարածքային կազմավորման ղեկավարներն իրենց ելույթներում և հայտարարություններում Գագաուզիային սկսեցին բնութագրել որպես հանրապետություն կամ պետություն պետության մեջ: Նման մարտավարությամբ նրանք փորձում էին հասնել իրենց սահմանադրական իրավունքների լիակատար իրականացմանը, ինչին խոչընդոտում էին կենտրոնական իշխանությունները: Վերջինով էր պայմանավորված նաև «Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին» օրենքը Քիշնևի կողմից ոտնահարելու վերաբերյալ Կոմրատից հնչող հայտարարությունները: Ուստի, պատահական չէր, որ 2011 թ. դեկտեմբերին Գագաուզիայի Ժողովրդական ժողովը Մոլդովայի կառավարությունից պահանջեց լիարժեք կյանքի կոչել նշյալ օրենքը:

Այդ ամենի հետ մեկտեղ, Գագաուզիայի ազգաբնակչության մեծ մասի դժգոհությունն էին առաջացնում Մոլդովայի իշխանությունների կողմից ինքնավարության լեզվական միջավայրի փոփոխությանը նպատակաուղղված գործողությունները՝ աստիճանական ասիմիլացումն իրականացնելու նպատակով: Մասնավորապես, 2011 թ. հուլիսի վերջին Գագաուզիայի ինքնավարության դպրոցների, լիցեյների և քոլեջների ռումիներեն լեզվից և գրականությունից «անբավարար» գնահատական ստացած ավելի քան 100 շրջանավարտների թույլ չտրվեց այդ առարկաներից քննությունները վերահանձնել: Մոլդովական իշխանությունները, մերժելով վերջինի վերաբերյալ թույլատրություն ստանալու Գագաուզիայի բնակչության և ղեկավարության խնդրանքները, համաձայնվել էին վերոնշյալ շրջանավարտներին տրամադրել տեղեկանքներ, որոնցով կարելի էր ընդունվել միայն

պրոֆտեխուսումնարաններ: Ի պատասխան, պաշտոնական Կոմրատը որոշեց հաջորդ տարվանից շրջանառության մեջ դնել սեփական դիպլոմներ՝ առանց ռումիներեն լեզվի գնահատականների արտացոլման, որոնք, ըստ Գագաուզիայի իշխանությունների, կճանաչվեին Ռուսաստանի, Թուրքիայի և Մերձդնեստրի ԲՈՒՀ-երի կողմից: Արդեն իսկ հուլիսի 29-ին հաստատվեց «գագաուզյան դիպլոմի» օրինակը, ինչը ՄՀ կրթության նախարարի կողմից գնահատվեց որպես Մոլդովայի օրենսդրության կոպիտ խախտում: Այդ խնդրի շուրջ կողմերի բանակցություններն ավարտվեցին անարդյունք:

Ռումիներեն լեզվի հետ կապված Քիշնևի և Կոմրատի միջև ծագած հերթական լարվածությունը հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ ազգայնական էյֆորիայի ալիքի վրա 1991 թ. օգոստոսի 27-ին ընդունված Մոլդովայի Հանրապետության անկախության մասին հռչակագրում նշված էր, թե երկրի պետական լեզուն հանդիսանում է ռումիներենը, մինչդեռ, 1994 թ. հուլիսի 29-ին ընդունված երկրի նոր Սահմանադրության մեջ պետական լեզուն համարվում էր մոլդովերենը: Վերջինից ելնելով, Գագաուզիայի Ժողովրդական ժողովի մի խումբ պատգամավորներ դպրոցներում ռումիներենի ուսումնասիրման, ինչպես նաև այն բակալավրի աստիճանի քննությունների պարտադիր ցանկում ներառելու օրինականության վերաբերյալ Մոլդովայի սահմանադրական դատարանին հարցում ներկայացրեցին, քանի որ ըստ պատգամավորների, հարևան պետության լեզուն չիմանալու համար սովորողներին պատժամիջոցների ենթարկելը՝ նրանց իրավունքների խախտում էր:

Ստեղծված իրավիճակը լիցքաթափելու նպատակով, ՄՀ նախագահի պաշտոնակատար Մ.Լուպուն քննադատության ենթարկելով հակամարտ երկու կողմերին էլ, մասնավորապես, նշեց, թե Գագաուզիայի իշխանությունները փորձում են իրենց վարկանիշը բարձրացնել լեզվական հարցերի շահարկման միջոցով: 2011 թ. օգոստոսի սկզբին «դիպլոմների պատերազմը» որոշ չափով անկում ապրեց, երբ Գագաուզիայի բաշկան Մ. Ֆորմուզալը հանդես գալով հաշտվողական հայտարարությամբ՝ թե ինքը դեմ չէ պետական լեզվին, միաժամանակ նշեց, որ Քիշնևի կողմից ժողովրդին համապատասխան ֆինանսական միջոցներով և դասագրքերով չապահովելու հետևանքով, Կոմրատում ոչ ոք չի խոսում մոլդովերեն: Դրանից անմիջապես հետո, Գագաուզիան հանդես եկավ կտրուկ դեմարշով՝ ետ վերադարձնելով ՄՀ նախարարություններից մեկից ստացված մոլդովերեն լեզվով, բայց ռուսերեն չթարգմանված նամակը: Այդ քայլը պաշտոնական Կոմրատը հիմնավորեց 1989 թ. օգոստոսի 31-ին ընդունված «Մոլդովայի տարածքում լեզուների գործառնության մասին» օրենքով, որում նշվում էր, թե պետական իշխանության մարմինների և հասարակական կազմակերպությունների ակտերը կազմվում և ընդունվում են պետական լեզվով՝ հետագայում դրանց ռուսերեն թարգմանության ապահովմամբ: Իսկ գագաուզյան ինքնավարության տարածքում գործավարությունն իրականացվում էր միայն ռուսերեն լեզվով:

Ըստ էության, «դիպլոմների գործի» ծավալումով Գագաուզիայի իշխանությունները հանդես եկան կենտրոնի դեմ, հրաժարվելով վերջինիս կամակատարը լինելուց: Դա արտահայտվեց ոչ միայն սեփական դիպլոմներ մտցնելով, այլև պետական լեզվով (լատինատառ մոլդովերենով) գրված, սակայն ռուսերեն թարգմանությունից զուրկ պաշտոնական թղթակցությունների միջոցով Քիշնևի հետ շփվելուց Կոմրատի հրաժարումով: Գնա-

լով նման կտրուկ քայլերի Գագաուզիան լավ էր հասկանում որ անհրաժեշտության դեպքում կստանա թե Ռուսաստանի և թե Թուրքիայի աջակցությունը, որոնք հավասարապես շահագրգռված էին ինքնավար կազմավորման բնականոն գոյատևման հարցում:

Մոլդովական իշխանությունների ձգտումը դեպի Եվրամիություն և հատկապես ռումինիզացման փորձերը հանդիպում էին Կոմրատի լուրջ հակազդեցությանը: 2012 թ. փետրվարին Գագաուզիայի Ժողովրդական ժողովն ընդունեց հայտարարություն «Մոլդովայի Հանրապետության Եվրասիական ինտեգրման մասին», որով Մոլդովայի իշխանություններից պահանջեց ՄՀ արտաքին և արտաքին տնտեսական քաղաքականության առաջնահերթություն հայտարարել ինտեգրումը Եվրասիական տնտեսական ընկերակցությանը, ընդգծելով, որ հակառակ դեպքում Գագաուզիան պատրաստ է «ինքնուրույն» ինտեգրվելու այդ կառույցին: Այս դիրքորոշումը գրեթե համահունչ էր Մերձդնեստրյան Հանրապետության դիրքորոշմանը, որի հետ Գագաուզիան գտնվում էր սերտ կապերի մեջ: 2012 թ. դեկտեմբերին Գագաուզիայի գործադիր կոմիտեն դրական եզրակացություն տվեց Ռուսաստան-Բելառուս-Ղազախստան Մաքսային միությանը միանալու վերաբերյալ ինքնավարությունում տեղական հանրաքվե կազմակերպելու մասին Ժողովրդական ժողովի պատգամավորների հարցմանը, իսկ 2013 թ. ապրիլին Գագաուզիայի ղեկավար Մ.Ֆորմուզալը հանդես եկավ Մոլդովայի Հանրապետության Մաքսային միությանը փուլային ինտեգրվելու առաջարկությամբ՝ նախ դիտորդի, ապա ասոցացված անդամի կարգավիճակներով և ի վերջո ձեռնամուխ լինել բուսաբուծության, անասնաբուծության և սննդարդյունաբերության ճյուղերի ուղղություններով հատվածային անդամագրմանը:

2013 թ. ապրիլի 11-ին ինքնավարության Ժողովրդական ժողովը ընդունեց հայտարարություն Մոլդովայի լիբերալ կուսակցության կողմից ներկայացրած՝ երկրի նոր լեզվական քաղաքականության մասին օրենքի նախագծի առնչությամբ, որով նախատեսվում էր ռուսերեն լեզուն զրկել ազգամիջյան շփման լեզվի կարգավիճակից, մոլդովերենը փոխարինել ռումիներենով, ինչպես նաև Գագաուզիայում գործող երեք պաշտոնական լեզուների՝ գագաուզերենի, ռուսերենի և մոլդովերենի փոխարեն թողնել միայն գագաուզերենն ու ռումիներենը: Հայտարարության մեջ Գագաուզիայի խորհրդարանը ՄՀ ռումինամետ կուսակցություններին բնորոշելով որպես ծայրահեղ հակառուսական և հակագագաուզական, շեշտեց, որ Լիբերալ կուսակցության ազգայնական նման նախաձեռնությունները ոչ միայն քաղաքացիական հասարակությունը բաժանում են երկու անհաշտ ճամբարների, այլև հարկադրում են գագաուզ ժողովրդին վերանայել Մոլդովայի կազմում ինքնավար-տարածքային կազմավորման հատուկ իրավական կարգավիճակով ինքնորոշվելու վերաբերյալ իր համաձայնությունը: Թերևս այս հայտարարության տրամաբանական շարունակությունն հանդիսացավ Գագաուզիայի Ժողովրդական ժողովի նախագահության մայիսի 6-ի հայտարարությունը, որով Քիշնևից պահանջվում էր ապահովել երկրամասի ներկայացվածությունը (առնվազն 5 հոգի) մոլդովական խորհրդարանում, հակառակ դեպքում՝ սպառնալով արգելել ինքնավարության տարածքում Մոլդովայի խորհրդարանի առաջիկա ընտրությունների անցկացումն ու դուրս գալ ՄՀ կազմից: Նկատի առնելով, որ Մոլդովայի խորհրդարանը 2013 թ. մայիսի

3-ին չեղյալ էր հայտարարել խառն ընտրական համակարգին անցնելու մասին ապրիլի 19-ին իր իսկ կողմից ընդունած որոշումը, ինչը Գագաուզ-Երի Ինքնավար Տարածքային Կազմավորմանը թույլ կտար իր ներկայացուցիչներն ունենալ հանրապետության խորհրդարանում, փորձագետները չէին բացառում, որ Կոմրատը ևս կարող է հետևել անկախություն հռչակած Մերձդնեստրի օրինակին: 2013 թ. մայիսի 20-ին Գագաուզիայի ժողովրդական ժողովը դատապարտեց առանց Կոմրատի համաձայնության «Գագաուզիայի Ինքնավար-Տարածքային Կազմավորման հատուկ իրավական կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ մտցնելու Քիշնևի փորձը, համաձայն որոնց նախատեսվում էր՝ Մոլդովայի ինքնիշխանության կորստի դեպքում, Գագաուզիային զրկել արտաքին ինքնորոշման իրավունքից: Ինքնավար կազմավորման Ժողովրդական ժողովը հայտարարեց, թե նշյալ փոփոխությունների իրականացումը կարող է հանգեցնել հասարակական-քաղաքական իրավիճակի սրմանը ոչ միայն Գագաուզիայում, այլև ողջ երկրում: Մոլդովայի արդարադատության նախարարությունը դադարեցրեց օրենսդարական փոփոխություններ մշակող աշխատանքային խմբի գործունեությունը: Չնայած դրան, Գագաուզիայում ստեղծված նախաձեռնող խումբը ավելի քան 5 հազ. ստորագրություն հավաքեց Մոլդովայի կազմից դուրս գալու և 1990 թ. օգոստոսի 19-ին հռչակված անկախ Գագաուզյան Հանրապետությանը վերադառնալու նպատակով հանրաքվե անցկացնելու վերաբերյալ: Միաժամանակ նախաձեռնող խումբը ինքնավար-տարածքային կազմավորման խորհրդարանին առաջարկեց ընդունել տեղական օրենք, որի համաձայն ՄՀ կենտրոնական իշխանություններին վերջնագիր կներկայացվի՝ եթե մեկ տարվա ընթացքում

երկրի օրենսդրությունը չհամապատասխանեցվի «Գագաուզիայի Ինքնավար-Տարածքային Կազմավորման հատուկ իրավական կարգավիճակի մասին» օրենքին և այն չստանա հատուկ օրենքի կարգավիճակ, ապա մինչև 2015 թ. դեկտեմբերը պետք է անցկացվի նշյալ հանրաքվեն: Վերջինն իր մեջ պետք է ներառեր նաև Մաքսային միության մեջ մտնելու և եվրաինտեգրման նկատմամբ գագաուզական ժողովրդի վերաբերմունքն արտահայտող հարցեր: Հատկանշական էր, որ Մոլդովայի նախագահ Ն. Տիմոֆթին 2013 թ. հունիսի 26-ին հիշյալ հանրաքվեի անցկացման նպատակով ստորագրահավաքի իրականացումը դիտարկեց որպես «Մոլդովայում իրավիճակի ապակայունացման միջոցառումների շղթայի օղակ»: Սակայն վերոնշյալ նախաձեռնող խումբը հուլիսի կեսերին հանդես եկավ՝ ի հակակշիռ Ռումինիայի և Մոլդովայի միավորումը քարոզող Խորհրդի, Ռուսաստանի և Թուրքիայի հետ միավորմանը նպատակաուղղված հատուկ խորհուրդներ ստեղծելու հերթական առաջարկով:

Օգոստոսին Գագաուզիայի Ժողովրդական ժողովը ընդունեց որոշում Մոլդովայի կազմից դուրս գալու նպատակով հանրաքվե անցկացնելու նախաձեռնությունը ինքնավարության բնակչության և իշխանության մարմինների լայն քննարկումներին ներկայացնելու վերաբերյալ: 2013 թ. հոկտեմբերի 1-ին Գագաուզիայի բաշկան Մ. Ֆորմուզալը ինքնավար կազմավորման Ժողովրդական ժողովին ներկայացրեց ԵՄ-ի և Մաքսային միության միջև ընտրություն կատարելու վերաբերյալ Գագաուզիայում խորհրդատվական հանրաքվե նախաձեռնելու մասին որոշումը, ինչը պաշտոնական Քիշնևն անթույլատրելի համարեց:

2013 թ. հոկտեմբերի 4-ին Գագաուզիայի ժողովրդական ժո-

ղովը ինքնավար կազմավորման ողջ տարածքում մոլդովերեն լեզուն, մոլդովական գրականությունը, Մոլդովայի պատմությունը որպես «ռումիներեն լեզու», «ռումինական գրականություն» և «Ռումինիայի պատմություն» կոչելն արգելելու մասին միաձայն որոշում ընդունեց:

Նոյեմբերի 15-ին Գագաուզիայի ժողովրդական ժողովը որոշեց 2014 թ. փետրվարի 2-ին ինքնավարությունում անցկացնել խորհրդատվական հանրաքվե՝ Ռուսաստան-Բելառուս-Ղազախստան Մաքսային միությանը Մոլդովայի միանալու հարցի վերաբերյալ, իսկ նոյեմբերի 18-ին միաձայն հաստատեց Մոլդովայի խորհրդարանում ինքնավարությանը 5 պատգամավորական քվոտային տեղ հատկացնելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության նախագիծը:

2013 թ. նոյեմբերի 27-ին ինքնավարության խորհրդարանն ընդունեց օրենք Գագաուզիայի հետաձգված անկախ կարգավիճակի մասին, որի համաձայն՝ Մոլդովայի անկախության և ինքնիշխանության կորստի դեպքում, Գագաուզիան ավտոմատ դառնալու էր անկախ հանրապետություն: Միաժամանակ, նշյալ որոշման վերաբերյալ ինքնավարության բնակչության կարծիքն իմանալու նպատակով, պատգամավորները որոշեցին 2014 թ. փետրվարի 2-ին անցկացնել հանրաքվե: Սակայն 2014 թ. հունվարի 3-ին Մոլդովայի կառավարության Պետական գրասենյակի միջնորդությամբ՝ Կոմրատի շրջանային դատարանն անօրինական ճանաչեց հանրաքվե անցկացնելու մասին հիշյալ որոշումը, քանի որ «այն չէր մտնում Գագաուզիայի Ժողովրդական ժողովի իրավասության մեջ», իսկ հունվարի 9-ին ՄՀ գլխավոր դատախազությունը քրեական գործ հարուցեց Գագաուզիայում հանրաքվե կազմակերպելու մասին որոշում ընդունելու առնչությամբ:

Չնայած պաշտոնական Քիշնևի ճնշումներին, ի պաշտպանություն տեղական իշխանությունների կողմից նախատեսված հանրաքվեի անցկացման՝ որոշվեց հունվարի 17-ին հրավիրել Գագաուզիայի բոլոր մակարդակների պատգամավորների արտակարգ համագումար: Սակայն Ժողովրդական ժողովի նախագահությունը հունվարի 16-ին որոշում ընդունեց այդ համագումարի հրավիրումն անորոշ ժամանակով հետաձգելու մասին, ինչը պայմանավորվեց առկա տարաձայնությունները լուծելու նպատակով ՄՀ խորհրդարանի նախագահ Ի. Կորմանի և վարչապետ Յու. Լյանկեի հետ Գագաուզիայի ժողովրդական ժողովի ղեկավարության հունվարի 17-ին Քիշնևում տեղի ունենալիք «շտապ հանդիպումով»: Վերջինի արդյունքում ձեռքբերվեց պայմանավորվածություն՝ հունվարի 22-ին Ի. Կորմանի և Յու. Լյանկեի մասնակցությամբ գագաուզյան խորհրդարանի հատուկ նիստ անցկացնելու վերաբերյալ: Միաժամանակ, ինքնավար կազմավորման սոցիալ-տնտեսական խնդիրների քննարկման նպատակով որոշվեց ստեղծել աշխատանքային խումբ՝ ՄՀ խորհրդարանի, կառավարության, ինչպես նաև Գագաուզիայի Ժողովրդական ժողովի ներկայացուցիչների ընդգրկմամբ: Ուշագրավ էր, որ նույն հունվարի 17-ին Գագաուզիայի Գործադիր կոմիտեն (կառավարությունը) իր արտահերթ նիստում որոշում ընդունեց փետրվարի 2-ին անցկացվելիք հանրաքվեի նախապատրաստման վերաբերյալ: Ելնելով այն հանգամանքից, որ հանրաքվեի անցկացումը թույլ չտալու նպատակով Քիշնևը արգելք էր դրել դրա համար Գագաուզիայի բյուջեում նախատեսված ֆինանսական միջոցների վրա, կազմավորման բաշկան Մ. Ֆորմուզալը տարածաշրջանի բնակչությանը կոչ արեց դրամա-

հավաք իրականացել այդ միջոցառումների կազմակերպման համար: Հունվարի 18-19-ին Գագաուզիայի խոշոր քաղաքներ Կոմրատում և Չադիր-Լունգեում տեղի ունեցան հանրահավաքներ՝ ի պաշտպանություն փետրվարի 2-ին հանրաքվեի անցկացման, իսկ հունվարի 21-ին Գագաուզիայի բաշկանի մամուլի ծառայությունը հայտարարեց ինքնավարությունում կազմակերպվելիք հանրաքվեի ծախսերը (1 մլն լեյ կամ շուրջ 2,5 մլն ռուբլի) իր վրա վերցնելու ծագումով Մոլդովայից ռուսաստանաբնակ մի գործարարի պատրաստակամության մասին:

2014 թ. հունվարի 22-ին Կոմրատում ՄՀ խորհրդարանի նախագահ Ի. Կորմանի և վարչապետ Յու. Լյանկեի մասնակցությամբ կայացավ Գագաուզիայի Ժողովրդական ժողովի և Գործադիր կոմիտեի համատեղ նիստ, որի ժամանակ կենտրոնական իշխանության բարձրաստիճան պաշտոնյաները ինքնավար կազմավորման իշխանության ներկայացուցիչներին կոչ արեցին հրաժարվել երկրի արտաքին քաղաքական ուղեգծի և Գագաուզիայի հետաձգված անկախ կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի անցկացման գաղափարից, քանի որ ինքնավարության բնակչությունն այդ հարցերի շուրջ իր կամքը կարող է արտահայտել տարեվերջին Մոլդովայում անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Այդ նիստից անմիջապես հետո, Գագաուզիայի Ժողովրդական ժողովն իր փակ նիստում որոշեց հետաձգել ինքնավար կազմավորման բոլոր մակարդակների պատգամավորների արտակարգ համագումար հրավիրելու մասին հարցի քննարկումը:

Ուշագրավ էր, որ 2014 թ. հունվարի 23-24-ին Մոլդովայում գտնվող Ընդլայնման և եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն

Գագաուզիայում հայտարարեց, թե ինքնավար կազմավորման տարածքում փետվարի 2-ին հանրաքվեի անցկացման կամ չանցկացման հարցը Մոլդովայի ներքին խնդիրն է, ինչը Եվրամիությունը չպետք է լուծի: Նա, միաժամանակ, Քիշնևին և Կոմրատին կոչ արեց արագորեն կարգավորել հարաբերությունները միմյանց միջև՝ իրենց առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների համատեղ լուծման համար:

Հունվարի 31-ի երեկոյան տեղի ունեցավ Գագաուզիայի Ժողովրդական ժողովի հատուկ նիստ, որի ընթացքում պատգամավորները հավաստեցին Մոլդովայի արտաքին քաղաքական ուղեգծի, ինչպես նաև Գագաուզիայի հետաձգված անկախ կարգավիճակի մասին փետրվարի 2-ին ինքնավարության տարածքում հանրաքվե անցկացնելու իրենց որոշումը: Առաջինի վերաբերյալ քվեարկողներին առաջարկվում էր պատասխանել՝ «Հավանություն տալիս եք արդյոք Մաքսային միություն (Ռուսաստան-Բելառուս-Ղազախստան) մտնելուն նպատակաուղղված Մոլդովայի Հանրապետության արտաքին քաղաքական ուղեգծի զարգացմանը» և «Հավանություն տալիս եք արդյոք Եվրոպական միություն մտնելուն նպատակաուղղված Մոլդովայի Հանրապետության արտաքին քաղաքական ուղեգծի զարգացմանը», իսկ երկրորդի վերաբերյալ՝ «Համաձայն եք արդյոք ընդունել Գագաուզիայի ինքնավար տարածքային կազմավորման կից ներկայացվող օրենքի նախագիծը «Գագաուզիայի ժողովրդի արտաքին ինքնորոշման հետաձգված կարգավիճակի մասին, ինչը թույլ կտար Գագաուզիայի ժողովրդին Մոլդովայի Հանրապետության անկախ պետության կարգավիճակի փոփոխության դեպքում իրականացնել իր արտաքին ինքնորոշման իրավունքը»: Ժողովրդական ժողովը սահմանեց նաև, որ հանրաքվեի

անցկացումը պետք է իրականացվի բացառապես ինքնավարության բնակչության կողմից հավաքած միջոցների հաշվին: Միաժամանակ, Գագաուզիայի խորհրդարանն առանձին որոշում ընդունեց հանրաքվե անցկացնելու մասին Ժողովրդական ժողովի որոշումները չեղյալ հայտարարելու վերաբերյալ Կոմրատի վարչական դատարանի որոշումների առնչությամբ, որոնք պետք է բողոքարկվեին բարձրագույն դատական ատյաններում, դրանք բնորոշելով որպես «բացահայտ անօրինական»:

Մոլդովայի կենտրոնական իշխանություններն ամեն գնով փորձում էին տապալել փետրվարի 2-ի հանրաքվեի անցկացումը: Այդ նպատակով, Քիշնևը ոչ միայն քայլեր էր ձեռնարկում քվեարկողների մասնակցությունը հնարավորինս սահմանափակելու համար, այլև խոչընդոտներ էր հարուցում նաև միջազգային դիտորդների երկրի տարածք մուտք գործելուն:

2. Գագաուզյան հանրաքվեն

2014 թ. փետրվարի 2-ին, ինչպես և որոշված էր, Գագաուզիայի ինքնավար տարածքային կազմավորման բոլոր բնակավայրերում անցկացվեց վերոնշյալ երկու հարցի վերաբերյալ հանրաքվե, որին մասնակցեց ընտրողների ավելի քան 70,4%-ը: Պաշտոնական տվյալներով՝ Մաքսային միություն մտնելուն նպատակաուղղված Մոլդովայի Հանրապետության արտաքին քաղաքական ուղեգծի զարգացման օգտին քվեարկել էր հանրաքվեի մասնակիցների 98,4%-ը, դեմ՝ 1,5%-ը, իսկ Եվրոպական միություն մտնելուն՝ հավանություն էր տվել հանրաքվեի մասնակիցների 2,5%-ը, դեմ էր արտահայտվել 97,4%-ը: Միաժամանակ, Գագաուզիայի հետաձգված անկախ կարգավիճակի օգտին քվեարկել էր հանրաքվեի մասնակիցների 98,8%-ը, դեմ՝ 1,1%-ը: Գագաուզիայի բաշկան Մ. Ֆորմուզալը շնորհակալություն հայտնելով հանրաքվեի բոլոր կազմակերպիչներին ու մասնակիցներին, նշեց, որ «վերջին 20 տարում գագաուզների նման միասնականություն չէր եղել»: Իր հերթին Ժողովրդական ժողովի նախագահ Դ. Կոնստանտինովը հայտարարեց, թե ինքնավարության բնակչությունը Մոլդովայի հետ չի գնա Եվրամիություն, քանի որ նշյալ հանրաքվեի մասնակիցների ավելի քան 90%-ը քվեարկել է Մաքսային միությանն ինտեգրվելու օգտին և միայն 1,5%-ն է հանդես եկել Եվրոպական միության օգտին:

Հատկանշական էր, որ փետրվարի 2-ին առավելապես բուլղարացիներով բնակեցված Տարակլիայի շրջանում, ի պաշտպանություն հարևան Գագաուզիայում ընթացող հանրաքվեի, կայացան քաղաքացիների զանգվածային հավաքներ, որոնց մասնակցեց շուրջ 7 հազ. մարդ: Այդ կապակցությամբ նշենք, որ երկու ժողովուրդների միջև պատմական ամուր կապերով պայմանավորված՝ Մոլդովայի և Ուկրաինայի բուլղարացիները գրեթե մշտապես հանդես են եկել, որպես գագաուզների բնական դաշնակիցներ: Ի պաշտպանություն գագաուզյան հանրաքվեի, հանրահավաքներ տեղի ունեցան նաև Քիշնևում, առավելապես ռուսալեզու բնակչություն ունեցող Բելցում ու Բեսարաբկայում:

Բնականաբար, պաշտոնական Քիշնևը խիստ բացասաբար ընդունեց Գագաուզիայում հանրաքվեի անցկացման փաստը: Արդեն փետրվարի 3-ին իշխող եվրոպամետ դաշինքը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որում հանրաքվեն անվանվում էր «բացառապես քաղաքական դրդապատճառներով իրականացված ակցիա, որը զուրկ էր օրինական հիմքերից և չէր կարող ունենալ ոչ մի իրավական հետևանքներ»: Իր հեր-

թին ՄՀ վարչապետ Յու. Լյանկեն Գագաուզիայում կայացած հանրաքվեն գնահատեց որպես «օրենքների արհամարհում», ինչը «խթանում էր անջատողականությանը»: Նա, միաժամանակ հավելելով, որ «հանրաքվե խաղալը» մեծ խնդիրներ կարող էր առաջացնել պետության համար, հայտարարեց Կոմրատի հետ կենտրոնական իշխանությունների փոխգործակցության մակարդակում փոփոխությունների անհրաժեշտության մասին «սկսած ինքնավարության կարգավիճակի հնարավոր սրբագրումից»: Ընդ որում, վարչապետը չհստակեցրեց, թե ինչպես է ծրագրվում վերանայել Գագուզիայի կարգավիճակն ու արդյոք այդ ծրագրերը համաձայնեցվելու էին ինքնավար կազմավորման հետ: ՄՀ խորհրդարանի նախագահ Ի. Կորմանը հայտարարելով, թե գագաուզյան հանրաքվեն ոչ մի դեպքում չի կարող նախադեպ դառնալ Մոլդովայի այլ շրջանների և բնակավայրերի համար՝ հավելեց, որ այն նախաձեռնող կոմրատյան պատգամավորները համաձայն օրենքի կենթարկվեն պատասխանատվության: Իր հերթին ՄՀ նախագահ Ն. Տիմոֆթին երկրի Տեղեկատվության և անվտանգության ծառայության կոլեգիայի փետրվարի 4-ի նիստի ժամանակ այդ գերատեսչության առջև խնդիր դրեց «չեզոքացնել անջատողական գործունեության մեջ ներքաշված և Մոլդովայի Հանրապետության ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության սկզբունքները վիճարկող ներքին և արտաքին ուժերի փորձերը»: Քիշնևից հնչեցին նաև հայտարարություններ, թե ինքնավարությունում կայացած հանրաքվեի ետևում կանգնած էր Ռուսաստանը, որը գագաուզների անջատողական ձգտումները հովանավորելու միջոցով ցանկանում էր կասեցնել Մոլդովայի Ռումինիայի հետ վերամիավորման և Եվրամիության հետ ինտեգրման գործընթացները: Այս առումով հատկանշական էր, որ պաշտոնական Բուխարեստը արտգործնախարար Տ. Կորլեցյանի բերանով «անվավեր ու դատարկ» անվանելով Գագաուզիայում կայացած «անօրինական, ոչ սահմանադրական հանրաքվեն», բոլոր պատասխանատու քաղաքական գործիչներին կոչ արեց «սատարել ԵՄ հետ Մոլդովայի մերձեցման ներքին գործընթացին»: Ի հավելումն՝ Ռումինիայի արտաքին գերատեսչության ղեկավարը ՄՀ ԱԳ նախարար Ն. Գերմանի հետ փետրվարի 11-ին Բրյուսելում կայացած հանդիպման ժամանակ ընդգծելով գագաուզյան իրադարձությունների «սադրիչ և ոչ պատահական» բնույթը՝ համոզմունք հայտնեց, որ դրանք չեն անդրադառնա Մոլդովայի «եվրոպական ուղու» վրա: Մինչդեռ, մի շարք փորձագետների կարծիքով՝ Գագաուզիայում կայացած հանրաքվեի արդյունքները լիովին կանխատեսելի էին, որովետև ինքնավարության բնակչության ճնշող մեծամասնության Մաքսային միություն մտնելուն կողմ քվեարկելը ուղղակի հակադարձ էր Մոլդովայի ռումինացման և եվրահինտեգրման ուղիով ընթանալուն: Միաժամանակ, վերլուծաբանները հանրաքվեի անցկացումը դիտարկում էին իբրև Մոլդովայի ինքնիշխանությանն ու ամբողջականությանը հասցված ուժեղ հարված, քանի որ գագաուզների օրինակին կարող էին հետևել նաև տվյալ հարցում Կոմրատին աջակցություն հայտնած այլ տարածաշրջանները՝ Բելցը, Բեսարաբկան, Տարակլիան[8]:

[8] Արդեն իսկ 2014 թ. գարնանը Տարակլիայի շրջանի բնակչության մեծամասնություն կազմող բուլղարացիները, անհանգստացած Քիշնևի որդեգրած եվրահինտեգրման ուղեգծի հետևանք հանդիսացող ռումինիզացման քաղաքականության սաստկացումից, իրենց նույնականության կորստի սպառնալիքից ձերբազատվելու նպատակով Գագաուզիային միանալու ցանկություն արտահայտեցին: Ընդ որում, նրանք օգտվում էին նաև հարևան Օդեսայի մարզի գագաուզների աջակցությունից, ինչը լրջորեն անհանգստացրեց ոչ միայն Քիշնևին, այլև Կիևին, որոնց ջանքերով

2014 թ. փետրվարի 7-ին Կոմրատում հրավիրվեց Գագաուզիայի Ժողովրդական ժողովի և Գործադիր կոմիտեի համատեղ նիստ, որի ընթացքում ինքնավարության խորհրդարանի պատգամավորներն ու կառավարության անդամները դատապարտելով փետրվարի 2-ի հանրաքվեի կազմակերպիչների նկատմամբ Մոլդովայի իրավապահ մարմինների և որոշ քաղաքական ուժերի կողմից իրականացվող «ճնշումներն ու հալածանքները» ընդունեցին ՄՀ ղեկավարությանը, միջազգային կազմակերպություններին և դիվանագիտական առաքելություններին հասցեագրված համապատասխան հայտարարություն, որով պաշտոնական Քիշնևին կոչ էր արվում դադարեցնել իրավապահ մարմինների անհիմն օգտագործումը «կազմավորման բնակչության ահաբեկման նպատակով»: Մասնավորապես, իրավապահ մարմինների կողմից խուզարկություններ էին իրականացվում հանրաքվեի որոշ կազմակերպիչների՝ ինքնավարության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների աշխատավայրում և բնակարաններում, միաժամանակ, Մոլդովայի դեմոկրատական կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ այդ կուսակցությունից հեռացվեցին Գագուզիայի ժողովրդական ժողովի 4 պատգամավոր, որոնց թվում նաև խորհրդարանի նախագահ Դ. Կոնստանտինովը:

Փետրվարի 11-ին Գագաուզիայի Ժողովրդական ժողովի պատվիրակությունը Քիշնևում հանդիպեց ԵԱՀԿ առաքելության ղեկավար Ջ. Բրաշի հետ՝ աջակցություն խնդրելով ՄՀ կենտրոնական իշխանությունների կողմից Գագաուզիայի հատուկ կարգավիճակի մասին օրենքը իրականացնելու հարցում: Ի պա-

տասխան, ԵԱՀԿ առաքելության ղեկավարն, ըստ էության, Քիշնևին կոչ արեց կիրառել Գագաուզիայի ինքնավարության մասին օրենքը, նշելով, թե դա կօգնի պահպանել և ընդունել Մոլդովայի մշակութային բազմազանությունը՝ երաշխավորելով ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը: Գագաուզիայի խորհրդարանականները փետրվարյան հանրաքվեի նպատակները ներկայացրեցին նաև ԱՄՆ, ՌԴ, Թուրքիայի դեսպանություններում և ԵՄ պատվիրակությունում՝ խնդրելով միջազգային հանրության աջակցությունը պաշտոնական Քիշնևի կողմից դրանց արդյունքների ճանաչման հարցում: Կոմրատի ներկայացուցիչներն ընդգծում էին նաև կենտրոնական իշխանության բոլոր մարմինների կողմից Գագաուզիայի հատուկ կարգավիճակի մասին օրենքի դրույթների անվերապահ կատարման անհրաժեշտությունը:

2014 թ. փետրվարի 14-ին Գագաուզիայի ժողովրդական ժողովը միաձայն հաստատեց փետրվարի 2-ին կայացած հանրաքվեի արդյունքները: Միաժամանակ, խորհրդարանը հանրաքվեի կազմակերպիչների նկատմամբ Մոլդովայի իրավապահ մարմինների կողմից կիրառվող քրեական հետապնդումներն ու այլ անօրինական գործողությունները դատապարտող որոշում ընդունեց:

Այսպիսով, գագաուզյան հանրաքվեն էլ ավելի շիկացրեց հարաբերությունները Քիշնևի և Կոմրատի միջև:

տարակյուսն բուլղարացիների այդ շարժումը կասեցվեց:

3. Մոլդովա-գագաուզյան դիմակայության նոր փուլը

2014 թ. փետրվարի 22-ին Կոմրատում կայացավ Գագաուզիայի բոլոր մակարդակների պատգամավորների համագումարը, որին մասնակցեց ավելի քան 600 մարդ, այդ թվում՝ քաղաքապետեր, Ժողովրդական ժողովի պատգամավորներ, ՄՀ խորհրդարանի պատգամավորներ, ինքնավարության բաշկանը և այլոք: Համագումարում հաստատվեցին փետրվարի 2-ի հանրաքվեի արդյունքները և քննարկվեց տարածաշրջանի հասարակական-քաղաքական իրավիճակը: Միաձայն ընդունվեց բանաձև, որով Մոլդովայի կենտրոնական իշխանություններից պահանջվում էր պահպանել ինքնավարության հատուկ կարգավիճակի մասին օրենքը, վերջ դնել գագաուզյան պատգամավորների նկատմամբ կիրառվող ճնշումներին և հստակորեն դատապարտել պաշտոնական Բուխարեստի ռումինաունիոնիստական ծրագրերը:

Ի պատասխան՝ ՄՀ կառավարությունը 2014 թ. փետրվարի 26-ին հավանություն տվեց խորհրդարանի կամ կառավարության իրավասության ներքո գտնվող ազգային շահին առնչվող, պետության ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող ու սահմանադրության դրույթներին հակասող հարցերի շուրջ տեղական հանրաքվեների անցկացումը արգելող օրինագծին, որով արգելվում էր նաև տեղական հանրաքվեների դնել հարկերի և բյուջեի հետ կապված հարցերը:

2014 թ. մարտի 4-ին Գագաուզիայում հանրաքվեի անցկացման նախաձեռնող խումբը հանդես եկավ հայտարարությամբ, որում վերջինի հեղինակներն ազդարարում էին ՄՀ չեզոքության

ու անկախ կարգավիճակի անփոփոխականության, ինչպես նաև երկրի արտաքին քաղաքական ուղեգծի զարգացման հարցերով համամոլդովական հանրաքվեների անցկացման վրա պնդելու իրենց մտադրության մասին: Ընդ որում, փաստաթղթում առաջարկվում էր առաջին հարցով հանրաքվեն կազմակերպել Մոլդովայում 2014 թ. կայանալիք խորհրդարանական ընտրությունների հետ միասին, իսկ երկրորդով՝ 2015 թ. անցկացվելիք իշխանության տեղական մարմինների ընտրություններին զուգահեռ: Միաժամանակ, ՄՀ ղեկավարությանը խնդրվում էր երկու հանրաքվեների միջև ընկած ժամանակահատվածում բանակցություններ վարել Ռուսաստանի հետ՝ Մաքսային միության միասնական տնտեսական տարածքի մեջ Մոլդովայի ընդգրկման ճանապարհային քարտեզ մշակելու շուրջ: Փաստաթղթի հեղինակները դիմում էին նաև ՌԴ ղեկավարությանը գագաուզյան ապրանքների, հատկապես գինեգործական արտադրանքի մուտքը ռուսաստանյան շուկա դյուրացնելու կոչով, առաջարկելով Գագաուզիայի տարածքում ստեղծել արտադրանքի որակի վերահսկման համատեղ կետեր: Այս ֆոնի վրա տրամաբանական էր, որ մարտի 15-ին Կոմրատում կազմակերպվեց հանրահավաք ի պաշտպանություն Ղրիմի բնակչության ինքնորոշման իրավունքի, որը պետք է արտահայտվեր մարտի 16-ին կայանալիք հանրաքվեով: Ընդ որում, հանրահավաքի ընթացքում բարձրացվեց նաև Ռուսաստանի պետական դրոշը:

Վերոնշյալ նախաձեռնող խումբը նաև Գագաուզիայի խորհրդարանին և կառավարությանը կոչ էր անում ստեղծել համատեղ աշխատանքային խումբ՝ «Գագաուզիայի (Գագաուզ Երի) հատուկ իրավական կարգավիճակի մասին» ՄՀ օրենքի հիմնարար դրույթները երկրի սահմանադրության մեջ ամրագ-

ռելու և ինքնավարության ու իշխանության կենտրոնական մարմինների լիազորությունների տարանջատման մասին օրենսդրական նախագիծ մշակելու նպատակով: Հենց վերջինով էր պայմանավորված ՄՀ խորհրդարանի նախագահ Ի. Կորմանի կողմից նույն օրերին ստորագրված կարգադրությունը՝ Մոլդովայի սահմանադրության մեջ Գագաուզիայի Ինքնավար-Տարածքային Կազմավորման կարգավիճակին առնչվող դրույթների իրականացման խնդիրների քննարկման համար աշխատանքային խումբ ստեղծելու մասին: Աշխատանքային խումբը, որի կազմում ընդգրկվեցին Մոլդովայի խորհրդարանի բոլոր խմբակցությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Գագաուզիայի ժողովրդական ժողովի պատգամավորներ, պետք է գնահատեր ինքնավարության հատուկ կարգավիճակին առնչվող սահմանադրական դրույթների կիրառման աստիճանը և ուսումնասիրեր Գագաուզիայի հատուկ կարգավիճակի մասին օրենքի համատեղելիությունը ՄՀ սահմանադրության դրույթների հետ: Աշխատանքային խումբը նաև պետք է վերլուծեր հարաբերությունները կենտրոնական ու Գագաուզիայի իշխանությունների մարմինների միջև և ներկայացներ առաջարկություններ դրանց փոխգործակցությունն ու կառավարումն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

Այս ամենի հետ մեկտեղ, մարտի 13-ին ՄՀ խորհրդարանը ընտրությունների մասին օրենսգրքում մտցրեց փոփոխություններ, որոնց համաձայն՝ արգելվում էր տեղական հանրաքվեների ներկայացնել համահանրապետական բնույթի ցանկացած թեմաներ, ինչպես նաև երկրի խորհրդարանի կամ կառավարության իրավասությունների շրջանակների մեջ մտնող ներքաղաքական ու արտաքին քաղաքական հարցեր: Ի պատասխան՝

Գագաուզիայի Գործադիր կոմիտեն, հիմք ընդունելով փետրվարի 2-ի հանրաքվեից հետո ինքնավար կազմավորման Ժողովրդական ժողովի կողմից ընդունած Ժողովրդական գվարդիայի ստեղծման մասին որոշումը[9], մարտի վերջին ակտիվացրեց աշխատանքները վերջինի կազմավորման ուղղությամբ, որը ոստիկանությանը պետք է օգներ տարածաշրջանում կարգուկանոն հաստատելու գործում: Մասնավորապես, ինքնավարության շրջանների վարչակազմերի ղեկավարներին հանձնարարվեց տեղամասային ոստիկանների և ջոկատների անդամների տեղակայման համար, երկշաբաթյա ժամկետում բոլոր բնակավայրերում նախապատրաստել համապատասխան շինություններ: Միաժամանակ, ինքնավարության Գործկոմի նիստում քննարկվեց Գագաուզիայի տարածք մտնելիս տեղական ոստիկանության պահակակետեր տեղակայելու հարցը, ինչն ըստ գործադիր մարմնի՝ պայմանավորված էր Մոլդովայի ազգային պարեկային ծառայության աշխատակիցների կողմից ինքնավարության բնակիչների ավտոմեքենաների համատարած անհիմն խուզարկություններով և նրանց նկատմամբ դրսևորվող կոպիտ վերաբերմունքով: Արդեն իսկ հաջորդ օրը՝ մարտի 27-ին ՄՀ ՆԳ նախարարը հայտարարեց, թե թույլ չի տալու Գագաուզիայի սահմանագլխին վերոհիշյալ պահակակետերի ձևավորումը:

Քիշնևի և Կոմրատի միջև դիմակայությունը գնալով խորանում էր: 2014 թ. հուլիսի 18-ին ՄՀ խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց առանց Գագաուզիայից պատգամավորների մասնակցությամբ նախապատրաստված և վերջիններիս

[9] Գագաուզիայի ժողովրդական ժողովը դեռևս 1996 թ. ընդունել էր կանոնակարգ «Ժողովրդական գվարդիայի մասին», իսկ 1997 թ. նման օրենք ընդունեց Մոլդովայի խորհրդարանը:

խիստ քննադատությանն արժանացած օրենսդրական նախաձեռնությունների փաթեթը, որն, ըստ ինքնավարության խորհրդարանականների, խիստ նեղացնելով Գագաուզիայի իրավունքներն ու լիազորությունները ոտնահարում էր Կոմրատի շահերը և կարող էր հանգեցնել կենտրոնական և տեղական իշխանությունների միջև առճակատման նոր ալիքի առաջացման: Հուլիսի 22-ին Գագաուզիայի Ժողովրդական ժողովը դատապարտելով նշյալ փաթեթը, մոլդովացի պատգամավորներին կոչ արեց մերժել այն: Միաժամանակ, ինքնավարության խորհրդարանը Մոլդովայում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ուշադրությունը հրավիրեց պաշտոնական Քիշնևի կողմից «տոտալիտար ռեժիմներին հատուկ քաղաքականության իրականացման» վրա, որն, ըստ Ժողովրդական ժողովի՝ միտված էր սակավաթիվ գագաուզ ժողովրդի ցեղասպանությանը: Մոլդովա-գագաուզյան դիմակայության ծավալման հերթական պատճառ դարձավ Մոլդովայում «Ռոսիա 24» հեռուստաալիքի հեռարձակումը 6 ամսով արգելելու մասին Քիշնևի 2014 թ. հուլիսյան որոշումը, ինչին ի պատասխան, Գագաուզիայի ղեկավարությունը հայտարարեց, թե մտադիր է շարունակել այդ հեռուստաալիքի հեռարձակումը ինքնավար կազմավորման տարածքում: Դրանից ելնելով՝ նոյեմբերին Գագաուզիայի ժողովրդական ժողովը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ինքնավար կազմավորման օրենքում մտցրեց փոփոխություններ, որոնց համաձայն՝ տեղական համապատասխան կազմակերպություններին ռադիո և հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման թույլտվության արտոնագիր տրամադրվելու էր ոչ թե ՄՀ հեռուստատեսության և ռադիոհեռարձակման համակարգող խորհրդի, այլ Գագաուզիայի նման կառույցի կողմից,

ինչն էլ ավելի մեծացրեց լարվածությունը Կոմրատի և Քիշնևի միջև:

4. Գագաուզիան Մոլդովայում 2014 թ. խորհրդարանական ընտրություններից հետո

ՄՀ-ում 2014 թ. նոյեմբերի 30-ին կայացած խորհրդարանական ընտրություններում Գագաուզիայի տարածքում 57,1% ձայնով առաջին տեղը գրավեց Մոսկվայի աջակցությունը վայելող Սոցիալիստների կուսակցությունը, իսկ երկրորդը՝ 14,27% ձայնով Մոլդովայի տարածաշրջանների (նախագահ՝ Գագաուզիայի բաշկան Մ. Ֆորմուզալ) և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների կողմից ստեղծված «Մոլդովայի ընտրությունը Մաքսային միությունն է» դաշինքը:

Այս ֆոնի վրա օրինաչափ էր, որ 2015 թ. մարտի 22-ին կայացած Գագաուզիայի ղեկավարի (բաշկանի) ընտրություններում, ստանալով ձայների 51,11%-ը, հաղթանակ տարավ Ռուսաստանի հետ մերձեցման դիրքերից հանդես եկող և Մոսկվայի բացահայտ աջակցությունը վայելող Իրինա Վլախը: Նա, թեև, Մոլդովայի խորհրդարանի պատգամավոր էր ընտրվել Կոմունիստների կուսակցության ցուցակով, սակայն հրաժարվեց մտնել այդ կուսակցության խմբակցության մեջ: Հետագայում Ի. Վլախը դուրս եկավ նաև կոմկուսից՝ դառնալով ՌԴ իշխանությունների «վստահելի և գլխավոր գործընկեր» համարվող ՄՀ սոցիալիստների կուսակցության աջակից: Ըստ վերլուծաբանների՝ ընտրությունների հենց առաջին փուլում Ի.Վլախի տարած հաղթանակը տհաճ անակնկալ էր ՄՀ իշխանություններ համար, քանի որ սեփական աշխարհաքաղաքական շահերի պաշտպա-

նության տեսանկյունից Մոսկվայի համար կարևոր էր Գագաուզիայի նկատմամբ վերահսկողության հաստատումը: Ուստի, պատահական չէր, որ նորընտիր բաշկանի 9 մրցակիցների շարքում 19,05% ձայներով երկրորդ տեղը գրաված Կոմրատի քաղաքապետ, Դեմոկրատական կուսակցության թեկնածու Նիկոլայ Դուդոգլոն Ի.Վլախին մեղադրելով կեղծումների և ընտրակաշառք բաժանելու մեջ, բողոքարկեց ընտրությունների արդյունքները՝ պահանջելով ձայների վերհաշվարկ կատարել:

Մինչդեռ, մարտի 24-ին ՌԴ արտգործնախարարությունը իր հայտարարության մեջ ընդգծեց, թե քվեարկությունն անցել է մոլդովական և տեղական օրենսդրություններին համապատասխան, իսկ ընտրությունների արդյունքները վկայում են, որ Գագաուզիայի բնակիչների զգալի մասը արտահայտվել է Ռուսաստանի հետ ավանդական սերտ հարաբերությունների զարգացման օգտին[10]: Նույն օրը Թուրքիայի ԱԳՆ-ը բավարարվածություն արտահայտելով Գագաուզիայում «ժողովրդավարական և խաղաղ պայմաններում» անցկացված ընտրությունների վերաբերյալ, շնորհավորեց Ի.Վլախին առաջին իսկ փուլում ընտրողների ձայների կեսից ավելին հավաքելու կապակցությամբ և հայտնեց Անկարայի պատրաստակամությունը Մոլդովայի տարածքային ամբողջականության հիման վրա նոր բաշկանի հետ համագործակցությունը շարունակելու հարցում:

2015 թ. մարտի 25-ին Գագաուզիայի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաստատեց ինքնավարության բաշկանի ընտրությունների պաշտոնական արդյունքները՝ Ի.Վլախին

[10] Մարտի 26-ին Գագաուզիայի նորընտիր բաշկանին շնորհավորական ուղերձ հղեց Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Կիրիլը:

հայտարարելով ընտրված բաշկան, միաժամանակ, չբավարարելով ձայների վերահաշվարկ պահանջող նրա մրցակիցների բողոքը: Նույն օրը ՄՀ վարչապետ Կ. Գաբուրիչը հայտարարելով Գագաուզիայի բնակչության ընտրությանը հարգանքով վերաբերվելու մասին, ինքնավար կազմավորման նոր բաշկան Ի. Վլախի հետ կառուցողական գործակցության հույս հայտնեց: Միաժամանակ, մեկնաբանելով այն փաստը, որ վերջինիս ընտրարշավը հիմնված էր ռուսամետ կարգախոսների և խոստումների վրա, ՄՀ վարչապետը նշեց, թե Ռուսաստանը Մոլդովայի ռազմավարական գործընկերն է: Այս առումով ուշագրավ էր, որ Ի.Վլախը դեռևս ընտրարշավի ընթացքում հայտարարել էր. «Ես միշտ եղել եմ կառուցողական քաղաքական գործիչ... Գագաուզիան տեսնում եմ կայուն աշխարհում լավ հարաբերություններով Քիշնևի, մեր ռազմավարական գործընկերներ Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի հետ»: Իսկ ընտրություններում հաղթանակ տանելուց անմիջապես հետո, նա հավելեց, որ իրեն համարում է «ռուսամետ քաղաքական գործիչ», սակայն, համագործակցելու է Քիշնևի հետ: Ի հավաստում այս դիրքորոշման, Ի. Վլախը հրաժարվեց միանալ ՄՀ «եվրոպամետ» կառավարությանն անվստահություն հայտնելու Սոցիալիստների կուսակցության նախաձեռնությանը, հայտարարելով, թե ինքն ունի «այլ գերակայություններ», իսկ գործող մոլդովական իշխանությունների ներկայացուցիչներն իր «ապագա գործընկերն են, որոնց հետ նա պետք է աշխատի»: Վերջինի առումով հատկանշական էր, որ Գագաուզիայի նորընտիր բաշկանի հետ ապրիլի 1-ին Քիշնևում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, ՄՀ խորհրդարանի նախագահ Ա. Կանդուն Մոլդովայի խորհրդարանի շահագրգռվածությունը հայտնեց ինքնավարության իշխանությունը-

ների հետ երկխոսության ծավալման գործում: Կողմերը, մասնավորապես պայմանավորվածություն ձեռք բերեցին մոլդովական օրենսդրությունը Գագաուզիայի հատուկ կարգավիճակի մասին օրենքի հետ համապատասխանեցնելու հարցով միջխորհրդարանական հանձնաժողովի աշխատանքների վերսկսման վերաբերյալ:

Չնայած մոլդովա-գագաուզյան հարաբերություններում առկա լարվածության թուլացման նշմարվող միտումների, 2015 թ. ապրիլի 3-ին Գագաուզիայի ղեկավարությունը հանդես եկավ «Գագաուզիայի բնակիչների քաղաքական հետապնդումների և ինքնավար կազմավորման վարկաբեկման մասին» հայտարարությամբ, որում բողոք էր հայտնվում մոլդովական իշխանությունների կողմից ինքնավար կազմավորման մի շարք պաշտոնատար անձանց տարբեր ժամկետներով կալանքի վերցնելու կապակցությամբ, ինչը, ըստ փաստաթղթի, նպատակաուղղված էր Գագաուզիայի բնակիչներին անջատողականների պիտակավորում տալուն: Միաժամանակ, փաստաթղթի հեղինակները (գործող և նորընտիր բաշկաններ Մ. Ֆորմուզալն ու Ի. Վլախը, Ժողովրդական ժողովի նախագահ Դ. Կոնսանտինովը) Մոլդովայում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին և ԵԱՀԿ ու ԵՄ առաքելություններին կոչ էին անում «ՄՀ ղեկավարության ուշադրությունը հրավիրել, իսկ հնարավորության դեպքում ներազդման միջոցներ ձեռնարկել հասարակության ազգամիջյան համաձայնությանը սպառնացող սադրանքներ թույլ չտալու համար»:

2015 թ. ապրիլի 15-ին Կոմրատում կայացավ Գագաուզիայի նորընտիր բաշկան Իրինա Վլախի երդմնակալության արարողությունը, որին մասնակցեցին նաև ՄՀ խորհրդարանի նախագահ Ա. Կանդուն և վարչապետ Կ.Գաբուրիչը: Ուշագրավ էր, որ վերջիններս միջոցառման ժամանակ ելույթ ունեցան մոլդովերեն, գագաուզերեն և ռուսերեն լեզուներով: Նույն օրը, Քիշնևում, երկրի նախագահի նստավայրում, ՄՀ նախագահ Ն. Տիմոֆթիի և վարչապետ Կ. Գաբուրիչի ներկայությամբ տեղի ունեցավ Ի. Վլախի երդման արարողությունը՝ որպես ՄՀ կառավարության անդամի[11]:

2015 թ. ապրիլի վերջին Եվրոպական խորհրդի նախագահ Դ. Տուսկի մասնակցությամբ Քիշնևում տեղի ունեցած ՄՀ եվրաինտեգրման հարցերով կառավարական հանձնաժողովի նիստում Գագաուզիայի բաշկան Ի.Վլախը հիշեցնելով, որ 2014 թ. փետրվարի 2-ին Գագաուզիայի ընտրողների ավելի քան 98%-ը քվեարկել էր Մաքսային միությանը Մոլդովայի ինտեգրման օգտին, հայտարարեց, թե «Գագաուզիայի ինքնավարության բնակչության ճնշող մեծամասնությունը կտրականապես չի ընդունում եվրոպական ինտեգրումը, որպես Մոլդովայի Հանրապետության համար քաղաքական նախագիծ»: Սակայն դրա հետ մեկտեղ, ընդգծելով Գագաուզիայի բնակչության շրջանում հակաեվրոպական տրամադրությունների բացակայության մասին, նա, ԵՄ հետ համագործակցելու Կոմրատի պատրաստակամությունը հայտնեց:

2015 թ. նոյեմբերի 17-ին «Քաղաքական անցում և խաղաղ գործընթացներ. ազգային խորհրդարանների փորձը և միջխորհրդարանական երկխոսության դերը» խորագրով Բրյուսելում կայացած համաժողովում Գագաուզիայի բաշկան Ի.Վլախը,

[11] Համաձայն ՄՀ օրենսդրության, Գագուզիայի ղեկավարը համարվում է երկրի կառավարության անդամ, ըստ էության, չունենալով վերջինի որոշումների վրա ազդելու իրական լծակներ:

Գագաուզիայի ու Մոլդովայի օրենսդրությունները ներդաշնակեցնելու և Քիշնևի ու Կոմրատի միջև կուտակված հակասությունները հաղթահարելու նպատակով, միջազգային կառույցներին ԵԱՀԿ հովանու ներքո միջազգային աշխատանքային խումբ ձևավորելու կոչ արեց:

Նոյեմբերի 23-ին ՄՀ խորհրդարանն ի վերջո քվեարկեց Գագաուզիայի ինքնավարության գործառույթայնության ապահովման և վերջինի հատուկ կարգավիճակի մասին օրենքը Մոլդովայի օրենսդրությանը համապատասխանեցնելու հարցերով ինքնավար կազմավորման Ժողովրդական ժողովի հետ համատեղ հանձնաժողով ստեղծելու օգտին:

2016 թ. փետրվարի սկզբին Քիշնևում կայացավ այդ հանձնաժողովի առաջին նիստը, որի ժամանակ ՄՀ խորհրդարանի նախագահ Ա.Կանդուն, խոստովանելով, թե երկրի կենտրոնական իշխանությունները 15 տարի շարունակ անտեսել են գագաուզների շահերը, Կոմրատի հետ երկխոսություն ծավալելու Քիշնևի պատրաստակամությունն արտահայտեց:

Մարտի սկզբին ՄՀ կառավարությունն առաջին անգամ, Կոմրատում, Գագաուզիայի Գործադիր կոմիտեի և Ժողովրդական ժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ նիստ անցկացրեց, որի ժամանակ ընդունվեց ինքնավար կազմավորման 2016-2019 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր: Միաժամանակ, կենտրոնական և տեղական իշխանությունների ներկայացուցիչների ընդգրկմամբ ստեղծվեց Գագաուզիայի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարցով աշխատանքային խումբ: Թերևս Քիշնևն իր այս քայլով Կոմրատին ուզում էր ցույց տալ, որ Գագաուզիան գտնվում է երկրի նոր կառավարության ուշադրության կենտրոնում:

Հատկանշական էր, որ 2016 թ. նոյեմբերի 13-ին կայացած նախագահական ընտրությունների երկրորդ փուլում Սոցիալիստների կուսակցության առաջնորդ, ռուսամետ Իգոր Դոդոնի հաղթանակն ապահովող ռեսուրսներից էր նաև ընտրողների խիստ մոբիլիզացումը Գագաուզիայում, որտեղ նրանց ավելի քան 99%-ը քվեարկել էր վերջինիս օգտին: Ուստի, պատահական չէր, որ նախագահ ընտրվելուց անմիջապես հետո Ի. Դոդոնը այցելելով Կոմրատ, Գագաուզիայի բաշկան Ի. Վլախին շնորհակալություն հայտնեց ընտրություններում ինքնավար կազմավորման բնակչության կողմից իրեն ցուցաբերած աջակցության համար: Ի պատասխան, Գագաուզիայի ղեկավարն ընդգծեց, որ ինքնավարության բնակչությունը «մեծ հույսեր է» կապում նորընտիր նախագահի հետ՝ սպասումով, որ նա «վճռական քայլեր կձեռնարկի իր նախընտրական խոստումների իրականացման ուղղությամբ»: Այդ խոստումների շարքում էր նաև Մոլդովայի դաշնայնացումը, որի սուբյեկտներ պետք է դառնային Գագաուզիան և Մերձդնեստրը:

Սակայն Կոմրատի սպասելիքներն այդպես էլ չիրականացան և մոլդովա-գագաուզյան հարաբերությունները թևակոխեցին լարվածության նոր շրջան:

5. Հակամարտության նոր դրսևորումներ Մոլդովայի և Գագաուզիայի միջև 2017-2018 թթ.

2017 թ. մայիսի 22-ին Գագաուզիայի Ժողովրդական ժողովն ու Գործկոմը (կառավարությունը) հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ պահանջելով ինքնավարությանը ՄՀ խորհրդարանում հատկացնել ոչ պակաս քան 5 քվոտային տեղ, ինչը

պայմանավորված էր ընտրությունների խառը համակարգին անցնելու Մոլդովայի դեմոկրատական և սոցիալիստների կուսակցությունների կողմից ներկայացված նախագծերով: Ավելի վաղ, երկրի նախագահ Ի. Դոդոնն ու Սոցիալիստների կուսակցությունը խոստացել էին ընտրական բարեփոխումների շրջանակներում Կոմրատին հատկացնել քվոտային տեղեր, սակայն, թե վերջինի և թե Մերձդնեստրի ներկայացուցիչների համար խոստացված 25 քվոտային տեղերի վերաբերյալ դրույթը չէր արտացոլվել Ընտրական բարեփոխման մասին օրենքի սոցիալիստների կողմից ներկայացված նախագծում:

Գագաուզ ժողովրդի ներկայացչությունը Մոլդովայի խորհրդարանում օրենսդրորեն ամրագրելու շուրջ 2017 թ. հուլիսի 7-ին կայացած խորհրդարանական լսումների ժամանակ ՄՀ Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի անդամ Թ. Կըրնացը հայտարարեց, թե ՄՀ-ում պետություն կազմավորող տարրը ողջ ժողովուրդն է և «ոչ մի դեպքում խոսք չի կարող գնալ զուտ գագաուզ ժողովրդի մասին», ուստի «Գագաուզիայի ժողովուրդ» տերմինը «հակասահմանադրական է» և «տանում է դեպի անջատողականություն»: Այդ համատեքստում Մոլդովայի բարձրագույն դատական իշխանության ներկայացուցիչը շեշտեց, թե հակասահմանադրական է նաև Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին ՄՀ օրենքում ամրագրված ինքնավար կազմավորման «Գագաուզ Երի» («Գագաուզյան հող») անվանումը, հստակեցնելով, որ «ոչ մի գագաուզյան հող չկա: Կա Մոլդովայի Հանրապետության հող»: Նա հավելեց նաև, որ գագաուզներն առանց այդ էլ հանդիսանում են «արտոնյալ ազգային փոքրամասնություն», քանի որ ներկայացված են ՄՀ կառավարությունում՝ հանձինս բաշկանի, իսկ Ժողովրդական ժողովը օրենսդրական նախաձեռնության իրավունք ունի: Ուստի, ըստ Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի անդամի՝ Մոլդովայի խորհրդարանում քվոտաներ տրամադրելու վերաբերյալ նրանց պահանջը խտրականություն է առաջացնում այլ ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Վերջում Թ. Կըրնացը դիմելով գագաուզներին ասաց. «այնպես որ, ուրախացեք նրանով, ինչ ունեք»:

Կոմրատի պատասխանը չուշացավ, Գագաուզիայի բաշկան Ի. Վլախը հայտարարելով, թե քիշնևյան բարձրաստիճան պաշտոնյան հասավ այն մակարդակին, որ մերժեց ժողովուրդ կոչվելու գագաուզների իրավունքը, հասկանալի համարեց, որ նման սադրիչ հայտարարություններով փորձեր են արվում ցանկացած գնով տապալել Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի ամրապնդմանը նպատակաուղղված օրենսդրական փաթեթի ընդունումը: Տվյալ համատեքստում նա ՄՀ խորհրդարանում ներկայացված բոլոր քաղաքական ուժերին կոչ արեց «չխաղարկել գագաուզյան թեմատիկան» և ինքնավարության բնակիչներից չկերտել «հինգերորդ շարասյան» և «ներքին սպառնալիքի» կերպար, ինչպես նաև օրենսդրական ժողովի մոտակա նիստի օրակարգում անհապաղ ընդգրկել Գագաուզիայի կարգավիճակին վերաբերող օրենսդրական նախաձեռնությունների փաթեթն ու այն ընդունել հեղինակների կողմից առաջարկված խմբագրությամբ:

Այս ֆոնի վրա ուշագրավ էր, որ արդեն իսկ հուլիսի 11-ին ՄՀ կառավարությունը հաստատեց ԵՄ կողմից Գագաուզիային 5 մլն եվրո հատկացնելու մասին «Վստահության ամրապնդման» երկամյա ծրագիրը, որը նպատակաուղղված էր «երկրի զարգացման գործընթացներում Գագաուզիայի ինքնավար կազ-

մավորման ինտեգրմանը»: Ըստ ծրագրի՝ ֆինանսական հիմնական միջոցները պետք է ուղղվեին ինքնավարության բնակավայրերում փոքր ենթակառուցվածքային նախագծերի իրականացմանն ու գյուղական վայրերում փոքր և միջին բիզնեսի հիմնմանն ու զարգացմանը:

2017 թ. հուլիսի 20-ին ՄՀ խորհրդարանի կողմից ընդունված խառը ընտրական համակարգին անցնելու մասին որոշումը Գագաուզիայում խոր հիասթափություն առաջացրեց, քանի որ ինքնավար կազմավորմանը երկրի օրենսդիր մարմնում քվոտային տեղեր չէին հատկացվում: Այդ կապակցությամբ, Գագաուզիայի բաշկան Ի.Վլախը հայտարարեց. «մոլդովական քաղաքական գործիչների կողմից Գագաուզիայում տրված ևս մեկ խոստում չկատարվեց...հերթական անգամ մեր տարածաշրջանի բնակիչների ակնկալիքներն անտեսվեցին»: Մինչդեռ ՄՀ նախագահ Ի. Դոդոնն ու Դեմոկրատական կուսակցության առաջնորդները բազմիցս խոստացել էին, թե սոցիալիստների և դեմոկրատների կողմից համատեղ ներկայացված ընտրական համակարգի փոփոխման վերաբերյալ նախագծում ներառվելու էր գագաուզներին քվոտաներ հատկացնելու հարցը: Վերջինի մերժումն արժանացավ Գագաուզիայի հասարակական-քաղաքական շրջանների բազմաթիվ ներկայացուցիչների սուր քննադատությանը, որոնք կոչ էին անում բոյկոտել ընտրություններն ու հանրաքվեները:

Հուլիսի 25-ին Մոլդովայի խորհրդարանը հրաժարվեց Գագաուզիայի համար մտցնել հատուկ կառավարման մակարդակ, նրան թողնելով սովորական շրջանների և մունիցիպիաների մակարդակի վրա: Երկրի օրենսդիր մարմնի կողմից Գագաուզիայի մասին ընդունված օրինագծերից հանվել էր Քիշնևի և Կոմրատի

կողմից նախապես համաձայնեցված ինքնավարության կառավարման հատուկ մակարդակի վերաբերյալ դրույթը: Խորհրդարանականները հանել էին նաև Գագաուզիայի հետ բնակավայրերի հնարավոր միավորման և նրա կազմից դուրս գալու մասին կետը: Ընդ որում, իշխող ՄՀ դեմոկրատական կուսակցությունից պատգամավորները կատարված փոփոխություններն անվանեցին «ոսկե միջին» և «կոնսենսուս»: Մինչդեռ, մոլդովա-գագաուզյան միջխորհրդարանական աշխատանքային խմբի կողմից համաձայնեցված, սակայն ՄՀ օրենսդրի կողմից չընդունված վերոնշյալ օրինագծերը Գագաուզիայի հատուկ կարգավիճակի մասին օրենքը Մոլդովայի օրենսդրության հետ համապատասխանեցնելու գործընթացի սկիզբը պետք է հանդիսանային: Այս ամենը հանգեցրեց Քիշնևի և Կոմրատի միջև հարաբերությունների նոր լարման:

2017 թ. հուլիսի 26-ին, Կոմրատում, Գագաուզիայի բաշկան Ի. Վլախի և ՄՀ նախագահ Ի. Դոդոնի միջև կայացած հանդիպման ժամանակ քննարկվեցին երկրի խորհրդարանի կողմից ընդունված ինքնավարության վերաբերյալ օրենքները, որոնց շուրջ վերջինս Գագաուզիայի Ժողովրդական ժողովի հետ խորհրդատվություններ անցկացնելու պատրաստակամություն հայտնեց: Միաժամանակ, Մոլդովայի նախագահը ընդգծելով երկրի խորհրդարանում Գագաուզիայի համար 3 պատգամավորական քվոտային տեղի հատկացմանը հասնելու իր մտադրության մասին, խոստացավ ինքնավար կազմավորման ևս 2-3 ներկայացուցչի ընդգրկել Սոցիալիստների կուսակցության ցուցակի անցողիկ մասում, որպեսզի Գագաուզիայից օրենսդիր մարմնում «ընդհանուր առմամբ լինի 5 պատգամավոր», ինչպես պահանջում էր Կոմրատը: Հանդիպման ժամանակ Ի. Դոդոնը, երկրի

Հիմնական օրենքում Գագաուզիայի հատուկ կարգավիճակի ամրագրման նպատակով, հանդես եկավ նաև ՄՀ սահմանադրության մեջ փոփոխություններ մշակող՝ նախագահին առընթեր հանձնաժողով ստեղծելու առաջարկությամբ:

Հատկանշական էր, որ 2017 թ. օգոստոսի 19-ին ՄՀ նախագահ Ի. Դոդոնը Կոմրատում մասնակցեց Գագաուզիայի ինքնավարության ստեղծման 26-րդ տարեդարձին նվիրված միջոցառմանը, որի ընթացքում նա մասնավորապես հայտարարեց. «Մենք միասին լինելուց բացի, այլ տարբերակ չունենք և մենք միասին պետք է պայքարենք նրանց դեմ, ովքեր ցանկանում են ոչնչացնել Մոլդովայի պետականությունն՝ այն հարևան Ռումինիայի հետ միացնելու ճանապարհով»: Տոնական միջոցառմանը մասնակցում էին նաև ՄՀ-ում Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Թուրքիայի դեսպանները:

2017 թ. հոկտեմբերի 12-ին Գագաուզիայի բաշկան Ի. Վլախը կոչ անելով Մոլդովայի խորհրդարանի ընտրությունների ժամանակ ինքնավարությանը հատկացնել ոչ պակաս, քան երեք ընտրատարածք, զգուշացրեց, որ հակառակ դեպքում ռեֆորմն ու ապագա ընտրությունները տարածաշրջանում անվստահություն կառաջացնեն: Նա նաև դիմեց մոլդովական խորհրդարանի Գագաուզիայից պատգամավորներին ու ինքնավարության Ժողովրդական ժողովի նախագահին, ով մասնակցում էր միամանդատ ընտրատարածքների ձևավորման հանձնաժողովի աշխատանքներին, կոչ անելով վերջինների կազմավորման ընթացքում թույլ չտալ ազգային փոքրամասնությունների շահերի ոտնահարում: Գագաուզիայի ղեկավարը հայտարարեց նաև, որ իրեն իրավունք է վերապահում այդ խնդրի վրա հրավիրել

ԵԱՀԿ, ԵԽ և այլ միջազգային կազմակերպությունների ուշադրությունը, որոնց անդամակցում է Մոլդովան:

2017 թ. դեկտեմբերի կեսին Գագաուզիայում նոր դժգոհություն առաջացրեց ՄՀ լուսավորության նախարարության պահանջով մոլդովական դատարանի կողմից ինքնավար կազմավորման Ժողովրդական ժողովի 2016 թ. ընդունած «Կրթության մասին» օրենքի չեղարկումը: Պաշտոնական Կոմրատը, հանձինս բաշկան Ի. Վլախի, մտահոգություն արտահայտեց այդ կապակցությամբ, քանի որ նշյալ օրենքի ընդունումը նպատակաուղղված էր գագաուզյան լեզվի տարածմանը ինքնավարության նախադպրոցական և միջնակարգ կրթական հաստատություններում: Միաժամանակ, նշվեց, որ տվյալ որոշումը հակասում էր Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին օրենքին և ՄՀ ու ինքնավար կազմավորման սահմանադրություններին: Գագաուզիայի իշխանությունները հայտարարեցին նաև, որ այն բողոքարկելու են վերադաս ատյաններում:

2017 թ. վերջին, Գագաուզիայի բաշկան Ի. Վլախը հայտարարեց, թե Քիշնևում ուղղակի խաբում են գագաուզներին՝ օրինակ բերելով Մոլդովայի խորհրդարանում ինքնավարությանը ընդամենը երկու պատգամավորական տեղ հատկացնելու փաստը, մինչդեռ սկզբում քննարկվում էր հինգ, այնուհետև երեք մանդատի հատկացման թեման:

Այս ֆոնի վրա հատկանշական էր, որ նույն օրերին Գագաուզյան ինքնավարության ստեղծման 23-րդ տարեդարձին նվիրված տոնակատարության ժամանակ, որին մասնակցում էին նաև ՄՀ նախագահ Ի. Դոդոնը և Մոլդովայում Թուրքիայի դեսպան Խ. Կըլըչը, բաշկան Ի. Վլախն իր ելույթում Գագաուզյան ինքնավարության ստեղծումը համարելով գագաուզ ժողովր-

դի պատմության ամենակարևոր իրադարձություններից մեկը, նկատեց, որ Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին օրենքի շատ հոդվածներ շարունակվում են չկատարվել մոլդովական իշխանությունների կողմից, «որոնք կոպտորեն ոտնահարում են այդ օրենքի դրույթները»: Դրանով իսկ Ի. Վլախն, ըստ էության, պատասխանում էր Ի. Դոդոնին, ով իր խոսքում նշել էր, թե Մոլդովան իբրև պետություն կարող է կայանալ միայն Գագաուզիայի և Մերձդնեստրի շահերն հաշվի առնելու դեպքում:

2018 թ. փետրվարի 7-ին Կոմրատում Գագաուզիայի բաշկանի և Ժողովրդական ժողովի նախագահի մասնակցությամբ տեղի ունեցավ 2014 թ. փետրվարի 2-ին ինքնավար կազմավորումում անցկացված անկախության հանրաքվեի 4-րդ տարեդարձին նվիրված տարածաշրջանային համաժողով, որի ընդունած բանաձևում արտահայտելով գագաուզ ժողովրդի նվիրվածությունը Մոլդովայի Հանրապետության ինքնիշխանությանն ու ամբողջականությանը, փաստաթղթի հեղինակները օրինական և հիմնավորված էին համարում նաև նրա ինքնորոշման իրավունքը իրենց նախնիների պատմական հողում՝ Բուջակում: Միաժամանակ, համաժողովի մասնակիցները դատապարտելով Մոլդովայի վերացմանն ու Ռումինիայի հետ միավորմանը նպատակաուղղված ռումինաունիոնիստական կուսակցությունների և կազմակերպությունների գործունեությունը[12], հասարակության

[12] 2018 թ.փետրվարի առաջին տասնօրյակում Պրուտ գետի երկու ափերի ռումինաունիոնիստական երիտասարդական հասարակական կազմակերպությունները միավորող «Actiunea-2012» Քաղաքացիական պլատֆորմի նախաձեռնությամբ՝ Բեսարաբիայի Ռումինիական պետության կազմի մեջ մտնելու 100-ամյակին նվիրված ակցիայի շրջանակներում մոլդովական մեկ տասնյակից ավելի գյուղեր Ռումինիայի հետ իրենց խորհրդանշական միավորման մասին հռչակագրեր ստորագրեցին:

բոլոր առողջ ուժերին կոչ էին անում միավորվել այդ սպառնալիքի դեմ: Բանաձևում Գագաուզիայի ղեկավարությանն առաջարկվում էր դիմել Թուրքիային և Ռուսաստանին, որպեսզի այդ պետությունները հանդես գան իբրև գագաուզյան ինքնավարության ինքնորոշման հետաձգված կարգավիճակի երաշխավորներ՝ 2014 թ. փետրվարյան հանրաքվեի ժամանակ գագաուզ ժողովրդի կողմից դրսևորված կամարտահայտությունը հարևան Ռումինիայի ոտնձգություններից պաշտպանելու համար: Այս ամենի հետ մեկտեղ, դատապարվում էր Մոլդովայի իշխանությունների ՄՀ սահմանադրության դրույթներին հակասող գործողությունները՝ զարգացման եվրոպական ուղեգիծը երկրի Գլխավոր օրենքում ներառելու ուղղությամբ:

Նշյալ համաժողովից մեկ շաբաթ անց, Գագաուզիայի իշխանությունները որոշեցին փետրվարի 24-ին հրավիրել ինքնավար-տարածքային կազմավորման տարածաշրջանային և տեղական իշխանության մարմինների ընդլայնված խորհուրդ՝ ինքնավարության Գործկոմի (կառավարության), Ժողովրդական ժողովի (խորհրդարանի) անդամների, քաղաքապետերի, տեղական խորհրդականների, հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Ըստ Գագաուզիայի բաշկան Ի. Վլախի՝ խորհրդում քննարկվելու էին Մոլդովայում հակապետական ունիոնիստական ուժերի ակտիվացմանն ու «ռուսաստանյան սպառնալիքի» դեմ մոլդովական իշխանության պայքարին, ինչպես նաև բացահայտ հակագագաուզյան դիրքորոշում ունեցող իշխող խորհրդարանական կուսակցություններում Գագաուզիայի բնակիչների ներկայության անհրաժեշտությանն առնչվող հարցեր: Միաժամանակ, շեշտելով գագաուզյան հասարակության միասնականությունը, նա ընդգծեց, որ իր հայրենակիցները

սեփական ապագան տեսնում են միայն միասնական և անկախ Մոլդովայի շրջանակներում:

Հատկանշական էր, որ վերոնշյալ խորհրդի հրավիրման վերաբերյալ որոշման ընդունման հաջորդ օրը, Գագաուզիայի մայրաքաղաք Կոմրատում տեղակայված մոլդովական դատարանը, ՄՀ կառավարության տարածքային բյուրոյի և Գլխավոր դատախազության պահանջով, չեղարկեց Ժողովրդական ժողովի պատգամավորների անձեռնմխելիության մասին ինքնավարության օրենսդրական դրույթը, ըստ որի՝ տարածաշրջանային պատգամավորը չէր կարող կալանավորվել, ձերբակալվել, ենթարկվել խուզարկման կամ դատական պատասխանատվության: Գագաուզ պատգամավորները մոլդովական կառավարությանը մեղադրեցին ինքնավար-տարածքային կազմավորման սահմանադրություն «ներխուժելու մեջ» և մտադրություն հայտնեցին դիմել միջազգային կառույցներին՝ ավելի քան 20 տարի առաջ ընդունված Գագաուզիայի սահմանադրության դրույթները նույնությամբ պահպանման երաշխավոր հանդես գալու խնդրանքով:

2018 թ. փետրվարի երրորդ տասնօրյակի սկզբին Գագաուզիա այցելեց ԵԱՀԿ գործող նախագահի Մերձդնեստրյան կարգավորման հարցով հատուկ ներկայացուցչի խորհրդական Ա. Կոնտեն, ով հանդիպումներ ունեցավ ինքնավար կազմավորման բաշկան Ի. Վլախի և Ժողովրդական Ժողովի փոխնախագահ Ա. Տարնավսկու հետ: Գագաուզիայի ղեկավարները ներկայացրեցին Մոլդովայի հետ բանակցություններում առկա խնդիրները, մասնավորապես դժգոհություն արտահայտելով Գագաուզիայի գործունեության վերաբերյալ մոլդովա-գագաուզյան միջխորհրդանական խմբի մշակած և համաձայնեցված օրինագծերը ՄՀ

խորհրդարանի կողմից չընդունելու և Քիշնևին հարմար տարբերակով վերաշարադրելու կապակցությամբ: Այս համատեքստում նրանք իրենց վրդովմունքն արտահայտեցին նաև կենտրոնական դատական մարմինների կողմից գագաուզյան օրենսդրության որոշ դրույթները փոխելու առնչությամբ: Իր հերթին ԵԱՀԿ ներկայացուցիչը պետության ամրապնդման գործում կարևորեց Գագաուզիայի հատուկ կարգավիճակի մասին 1994 թ. օրենքի պահպանումը:

2018 թ. փետրվարի 24-ին Տոմայ գյուղում կայացավ Գագաուզիայի բոլոր մակարդակների պատգամավորների համագումարը, որին մասնակցում էին նաև ինքնավարության բարձրագույն ղեկավարությունը, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ և Գագաուզյան Հանրապետության կազմավորման մասնակիցներ: Համագումարը որոշեց 2018 թվականը Գագաուզիայի տարածքում հայտարարել Բեսարաբիայի ռումինական օկուպացման 100-ամյակի տարի: Համագումարում ընդունված հռչակագրում ինքնավար կազմավորման կառավարությանն ու խորհրդարանին կոչ էր արվում Գագաուզիայի բնակավայրերում կազմակերպել նշյալ տարելիցին նվիրված միջոցառումներ: Համագումարի մասնակիցները դատապարտելով ՄՀ վերացմանը նպատակաուղղված Ռումինիայի պետական քաղաքականությունն ու Մոլդովայի տարածքում ռումինաունիոնիստների կողմից համապատասխան միջոցառումների անպատժելի իրականացումը, երկրի պատկան մարմիններից պահանջեցին ՄՀ տարածքում դադարեցնել Ռումինիայի հետ միավորման օգտին հանդես եկող կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև պատասխանատվության ենթարկել «Ռումինիայի հետ միավոր-

վելու մասին» փետրվարին հռչակագրեր ընդունած տեղական իշխանությունների ներկայացուցիչներին: Բացի այդ, հռչակագրի հեղինակները պահանջում էին նաև քրեական պատասխանատվություն մտցնել Ռումինիայի հետ Մոլդովայի միավորման քարոզչություն ծավալողների և կոչեր հնչեցնողների նկատմամբ, ինչպես նաև երկքաղաքացիություն ունեցող անձանց արգելել բարձր պետական պաշտոններ զբաղեցնել, իսկ ունիոնիստական կոչերի համար՝ հեռացնել պետական ծառայությունից: Նրանք նաև նախագահ Ի. Դոդոնին կոչ էին անում անձնական պատժամիջոցներ մտցնել Ռումինիայի նախկին նախագահ Տ. Բէսեսկուի և այդ երկրի ունիոնիստների առաջնորդներից մեկի՝ Գ. Սիմիոնի հանդեպ: Հռչակագրում ԵՄ, ԵԱՀԿ, ԱՄՆ, Թուրքիայի և Ռուսաստանի ղեկավարություններին կոչ էր արվում դատապարտել Ռումինիայի ագրեսիվ նկրտումները «ՄԱԿ-ի անդամ հանդիսացող, միջազգային հանրության կողմից ճանաչված Մոլդովայի Հանրապետություն պետության հանդեպ»: Միաժամանակ, հերթական անգամ հայտարարվում էր, թե Մոլդովայի և Ռումինիայի միավորման դեպքում, Թուրքիան, Ռուսաստանը և ԵԱՀԿ-ը պետք է դառնան Գագաուզյան ինքնավարության գոյատևման և ինքնորոշման երաշխավորներ: Այս ֆոնի վրա ուշագրավ էր, որ Գագաուզիայի բաշկան Ի. Վլախը համագումարում հայտարարեց, թե Գագաուզիան առաջին անգամ չէ, որ հանդես է գալիս մոլդովական պետականության գլխավոր պաշտպանի դերում, իսկ ինքնավարության Ժողովրդական ժողովի նախագահ Վ. Կիսան հավելեց, որ միայն Գագաուզիայի և Մերձդնեստրի շնորհիվ՝ Մոլդովան 90-ականների սկզբին չմիացվեց Ռումինիային: Ի կատարումն համագումարի որոշման՝ մարտի վերջին ինքնավարության Ժողովրդական ժողովը Գա-

գաուզիայում 2018 թվականը պաշտոնապես հայտարարեց Բեսարաբիայի ռումինական օկուպացման 100-ամյակի տարի:

2018 թ. ապրիլի 28-ին Գագաուզիայում ՄՀ-ում իշխող Դեմոկրատական կուսակցության ղեկավար, «Նոր Գագաուզիա» շարժման նախագահ Ն.Դուդոգլոն դուրս եկավ կուսակցությունից և հրաժարվեց Մոլդովայի խորհրդարանի պատգամավորի մանդատից: Դա պայմանավորված էր Դեմոկրատական կուսակցության կողմից ներկայացրած վերջնագրով՝ ընտրություն կատարել վերջինին անդամակցելու կամ «Նոր Գագաուզիա» հասարակական կազմակերպությունում գործունեություն ծավալելու միջև, «որի նպատակները հակասում էին Դեմոկրատական կուսակցության «եվրոպամետ» քաղաքականությանը»: Իր այդ քայլը Ն. Դուդոգլոն հիմնավորեց Գագաուզիան ավելի ուժեղ տարածաշրջան դարձնելու ձգտումով:

Հունիսի սկզբին ՄՀ խորհրդարանի ռումինամետ պատգամավորների բուռն զայրույթն առաջացրեց սահմանապահ զորքերի կազմավորման 100-ամյակի կապակցությամբ՝ Գագաուզիայի մայրաքաղաքում բացված հուշարձանը, որի վրա ԽՍՀՄ քարտեզի փոխարեն սխալմամբ պատկերված էր Ռուսաստանի քարտեզը: Թեև, տեղի վետերան-սահմանապահների հասարակական կազմակերպության ղեկավարությունը խոստացավ ուղղել սխալը, սակայն կրքերը չէին հանդարտվում և մի շարք պատգամավորներ կենտրոնական իշխանություններից պահանջեցին պաշտոնապես հետամուտ լինել այդ հարցին:

2018 թ. օգոստոսի 19-ին Գագաուզիայում նշվեց անկախ Գագաուզյան Հանրապետության հռչակման 28-րդ տարեդարձը, որին մասնակցում էին նաև ՄՀ նախագահ Ի. Դոդոնը, ՌԴ և Թուրքիայի դեսպանությունների ներկայացուցիչներ: Հատկան-

շական էր, որ Գագաուզիայի Ժողովրդական ժողովի նախագահ Վ. Կիսան Գագաուզյան Հանրապետության ստեղծումը բնութագրելով որպես գագաուզ ժողովրդի աննախադեպ պայքար իր պետականության համար, շնորհակալություն հայտնեց այդ դժվար օրերին օգնության հասած Խորհրդային բանակի Բոլգրադյան գումարտակին և Մերձդնեստրյան կամավորներին: Այս համատեքստում նա կոչ արեց հավատարիմ լինել ճիշտ ուղի ցույց տված «իրենց նախնիների կանչին»: Իր հերթին Գագաուզիայի բաշկան Ի. Վլախը Գագաուզյան Հանրապետության հռչակումը գնահատելով իբրև պատմական իրադարձություն, որը հնարավորություն ընձեռեց գագաուզ ժողովրդին 1994 թ. դեկտեմբերին Մոլդովայի կազմում ձեռք բերել պետականություն, ինքնավարության բնակչությանը համախմբման կոչ արեց: Ուշագրավ էր, որ նշյալ տարեդարձի կապակցությամբ Գագաուզիայի ղեկավարությանը շնորհավորական ուղերձ էր հղել Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Ա. Շչերբան, մինչդեռ ՄՀ կառավարությունը որևէ վերաբերմունք չարտահայտեց:

Այսպիսով, լարվածությունը գագաուզա-մոլդովական հարաբերություններում ըստ էության, շարունակական բնույթ էր կրում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԳԱԳԱՈՒԶԻԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

1. Գագաուզիան և Թուրքիան

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան իրեն հայտարարելով Կենտրոնական Ասիայից մինչև Բալկաններ բնակվող բոլոր թյուրքերի «հայր», փորձում է ընդլայնել իր ազդեցությունը, այսպես կոչված, «օսմանյան ժառանգության» կրող երկրների (որոնց տարածքները նախկինում գտնվել են օսմանյան կայսրության իշխանության ներքո) վրա: Այդ նպատակով Անկարան ձգտում է տնտեսական և կրթամշակութային ներթափանցման ճանապարհով իր վերահսկողության տակ վերցնել տվյալ պետություններում ծավալվող քաղաքական և սոցիալական գործընթացները: Վերջինի առումով Թուրքիայի ուշադրության կենտրոնում են հատկապես թյուրքալեզու բնակչությամբ երկրները՝ Ադրբեջանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը, Ղրղզստանը, Ղազախստանը և այլն: Նման քաղաքականության իրականացման ուղղություններից է նաև Մոլդովան, իսկ ավելի կոնկրետ՝ Գագաուզիան, որը գտնվում է աշխարհաքաղաքական կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջանում: Դրանից ելնելով Անկարան այստեղ զգալի ակտիվություն է հանդես

բերում, ջանալով գագաուզներին իր կողմը գրավել թե կրթամշակութային, և թե քաղաքական առումներով: Թերևս այդ նպատակով էլ թուրքական կողմը Գագաուզիան դիտարկում է որպես Մոլդովայից առանձին քաղաքատնտեսական կազմավորում: Ըստ վերլուծաբանների՝ ներկայումս Թուրքիայի առաջնային խնդիրը գագաուզների և թուրքերի միջև մշակութային տարբերությունների վերացումն է, որոնք այնքան էլ մեծ չեն, մանավանդ որ թուրքերենը գագաուզերենին ամենամոտ լեզուն է: Մյուս կողմից, իր ստեղծման առաջին իսկ օրվանից Գագաուզյան ինքնավարությունը հակված է դեպի Թուրքիա, ստանալով նրա լայն աջակցությունը: Այս ֆոնի վրա հատկանշական էր, որ 1993 թ. թուրքերը Գագաուզիայում բացեցին գագաուզա-թուրքական լիցեյ և համալսարան, որոնցում ուսուցանումը իրականացվում էր թուրքերեն, անգլերեն և ռումիներեն լեզուներով: Նույն թվականին գագաուզները հրաժարվեցին կիրիլյան այբուբենից՝ ի օգուտ լատինականի, ինչը նրանց էլ ավելի մոտեցրեց էթնիկ առումով հարազատ թուրքերին և հեռացրեց կրոնով ու քաղաքականապես ավելի մոտ գտնվող ռուսներից: Դրանում որոշակի դեր խաղաց նաև ՌԴ-ում 1998 թ. օգոստոսյան խորը տնտեսական ճգնաժամը, որն ուղեկցվեց ռուսական ռուբլու աննախադեպ արժեզրկմամբ: Վերջինի հետևանքով Գագաուզիայում զգալիորեն նվազեց Ռուսաստանի տնտեսական ազդեցությունը և սկսեցին ամրապնդվել Թուրքիայի դիրքերը: Ընդ որում, վերջինի հետ կապերի զարգացման ճանապարհով Գագաուզիայում Ռուսաստանի ազդեցության թուլացման գործում զգալի դեր էին խաղում Մոլդովայի հատկապես ռումինամետ քաղաքական գործիչները:

Մոլդովա-թուրքական հարաբերությունների օրակարգում

գրեթե մշտապես առկա է Գագաուզիայի գործոնը, որը հատկապես ցայտուն սկսեց դրսևորվել Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի պաշտոնավարության շրջանում (1993-2000 թթ.): Նա 1994 թ. հունիսին առաջին անգամ այցելելով ՄՀ ողջունեց Գագաուզիային ինքնավարություն շնորհելու մոլդովական ղեկավարության տրամադրվածությունը, իսկ Կոմրատում տեղի իշխանություններին կոչ արեց լոյալություն պահպանել Քիշնևի հանդեպ՝ Գագաուզիան անվանելով «բարեկամության կամուրջ Թուրքիայի և Մոլդովայի միջև»: Նշյալ այցից հետո Անկարան երիտասարդ ինքնավարությանը սկսեց ակտիվ օգնություն ցուցաբերել: Արդեն իսկ 1995 թ. Գագաուզիա ժամանեց մեծաթիվ թուրքական պատվիրակություն, որի կազմում էին քաղաքական, հասարակական, մշակույթի գործիչներ, ինչպես նաև թուրքական գործարար շրջանների ներկայացուցիչներ: Նույն թվականին Կոմրատում հիմնվեց «Թուրք-գագաուզյան բարեկամության ընկերություն»: Գագաուզիայի ինքնակառավարման նորաստեղծ ազգային մարմինները կապեր հաստատեցին Թուրքական Հանրապետության համապատասխան մարմինների հետ: Անկարայի ֆինանսական օգնությամբ գագաուզյան մի շարք գյուղեր ապահովվեցին խմելու ջրով, կառուցվեցին ոռոգման համակարգեր, Կոմրատում բացվեց Աթաթուրքի անվան գրադարանը, ինքնավարության դպրոցներում կազմակերպվեց մայրենի լեզվի ուսուցում, Գագաուզիայի վարչական կենտրոնում հիմնվեց պետական համալսարան, թուրքական համալսարաններում սովորող գագաուզ ուսանողներին տրամադրվեցին կրթաթոշակներ և այլն: 1999 թ. մարտին Գագաուզիայի բաշկան Գ. Տաբունշչիկը այցով եղավ Թուրքիայում և հանդիպեց նախագահ Ս. Դեմիրելի հետ: Ուշագրավ էր, որ վերջինս պարտադիր

ընդունում էր ԹՀ ժամանած գագաուզյան գրեթե բոլոր պաշտոնական պատվիրակություններին:

Սակայն 2002 թ. Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրություններում «Արդարություն և զարգացում» իսլամամետ կուսակցության հաղթանակից հետո, Անկարան շուրջ 10 տարի կորցրեց հետաքրքրությունը գագաուզների նկատմամբ, ինչի հետևանքով որոշ չափով նվազեցին նրանց հատկացվող թուրքական օգնության ծավալները: Մինչդեռ Գագաուզիան շարունակում էր գտնվել Ս. Դեմիրելի ուշադրության կենտրոնում, ինչն արտահայտվում էր նաև Մոլդովա կատարած նրա չորս այցելություններով: Ի նշան երախտագիտության, ինքնավարության իշխանությունները դեռևս նրա կենդանության օրոք Կոմրատի «Փառքի ծառուղիում» կանգնեցրին Ս. Դեմիրելի կիսանդրին, իսկ 2014 թ. հոկտեմբերի վերջին Թուրքիայի նախկին նախագահի անձնական հրավերով Անկարայում գտնվող Գագաուզիայի բաշկան Մ.Ֆորմուզալը նրան պարգևատրեց ինքնավար կազմավորման բարձրագույն պարգևով՝ «Գագուզիայի շքանշանով»: 2015 թ. հունիսին, Ս. Դեմիրելի մահվան կապակցությամբ, Գագաուզիայի բաշկանի և Գործկոմի անդամների մասնակցությամբ տեղի ունեցավ ինքնավարության Ժողովրդական ժողովի հատուկ նիստ՝ նվիրված նրա հիշատակին: 2017 թ. մայիսին, Թուրքիայի վարչապետ Բինալի Իյըլդըրըմի Գագաուզիա կատարած այցի շրջանակներում, Կոմրատում բացվեց թուրքական կողմի աջակցությամբ կահավորված Ս. Դեմիրելի անվան մանկապարտեզ: Ինքնավարության վարչական կենտրոնում գործում է նաև նրա անունը կրող թուրքական գիմնազիան:

Անկարայի կողմից Գագաուզիայի նկատմամբ հետաքրքրության նոր դրսևորման արտահայտություն էր 2011 թ. Թուրքիայի արտգործնախարարի տեղակալ Մեհմետ Ֆատիհ Ջեյլանի այցելությունը Կոմրատ, որտեղ նա, ընդգծելով թուրքերի և գագաուզների ծագումնաբանական ու լեզվամշակութային ընդհանրությունները, շեշտեց Անկարայի դիրքորոշումը՝ Մոլդովայի սահմանադրության մեջ Գագաուզիայի ինքնավարության իրավունքներն ամրագրելու և չսահմանափակելու անհրաժեշտության մասին: Գագաուզիա-Երիի վրա Թուրքիայի ուշադրության վերստին բևեռման վկայություններից էր նաև պատմության մեջ առաջին անգամ ԹՀ արտաքին գործերի նախարարի մակարդակով 2012 թ. մայիսին իրականացված այցը Կոմրատ, որի ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Ահմետ Դավութօղլուն շնորհակալություն հայտնելով գագաուզներին իրենց թյուրքական լեզուն և մշակույթը պահպանելու համար, հանդես եկավ երկու ժողովուրդների միասնության ու համախմբվածության կոչով, հայտարարելով, թե Թուրքիան գագաուզներին «երբեք միայնակ չի թողել, չի թողնելու ու շարունակելու է նրանց օգնություն ցուցաբերել»: Այս առումով նշենք, որ 1995 թ. ի վեր՝ Անկարան ակտիվորեն աջակցում է Գագաուզիայի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Միայն ճանապարհների կառուցման համար Թուրքիան Կոմրատին հատկացրել է 35 մլն ԱՄՆ դոլար: Ինքնավարությունում գրանցված են շուրջ 20 մոլդովա-թուրքական համատեղ ձեռնարկություն, ավելի քան 12 ձեռնարկություն՝ թուրքական կապիտալով: Գագաուզիայի տնտեսության մեջ թուրքական կապիտալի ներգրավման նպատակով, տարբեր երկրներում ակտիվ աշխատանքներ են տանում «Թուրք-գագաուզյան բարեկամության

ընկերության» ներկայացուցիչները: Ծավալվում է համագործակցությունը նաև կրթության ոլորտում: Գագաուզիայում գործում են մի քանի թուրքական և թուրք-մոլդովական լիցեյներ, որոնց լավագույն շրջանավարտները մեկնում են Թուրքիա և այդ պետության հաշվին տեղի ԲՈՒՀ-երում ստանում կրթություն: Այս առումով հատկանշական է, որ յուրաքանչյուր տարի 60 ուսանող Գագաուզիայից ընդունվում է Կոմրատի պետական համալսարանի հետ գործընկերային հարաբերություններում գտնվող թուրքական 5 համալսարաններ, որոնցում սովորող Մոլդովայից երիտասարդների համար թուրքական կողմը սահմանել է համապատասխան կրթաթոշակներ[13]: Թուրքիայի տարածքում մշտապես գտնվում է 50 հազ. Մոլդովայի քաղաքացի, որոնց մեծ մասը գագաուզներ են:

Գագաուզիայում Անկարայի գործունեության հիմնական ուղղություններից է՝ ինքնավարությունում միասնական տեղեկատվական տարածքի ստեղծումը, որի բացակայությունն, ըստ թուրքական կողմի, խոչընդոտում է գագաուզյան հասարակության համախմբմանը: Դրանից ելնելով՝ Թուրքիան «TRT» ազգային և իր այլ ռադիոհեռուստաընկերությունների միջոցով նախապատրաստում և եթեր է արձակում փաստագրական հաղորդաշարեր ու ֆիլմեր Գագաուզիայի մասին: Այս ամենի արդյունքում Գագաուզիայում ձևավորվել է մի ամբողջ սերունդ, որը բարձր է գնահատում Թուրքիայի ռեալ օգնությունը ինքնավարությանն ու նրա բնակչությանը: Իսկ մի շարք գագաուզ քաղաքական գործիչներ իրենց հերթին գտնում են, որ «եթե չլիներ Թուրքիան,

[13] Արծարծվում է նաև Բաքվի համալսարանում ու կենտրոնասիական երկրների մի շարք ԲՈՒՀ-երում գագաուզյան ուսանողներին քվոտային տեղեր հատկացնելու հարցը:

ապա չէր լինի նաև Գագաուզիան»: Ուստի, պատահական չէ, որ Կոմրատում վեր է հառնում «թուրքերի հայր» Մուստաֆա Քեմալի հուշարձանը, գործում է թուրքական մշակույթի կենտրոն, որի ակտիվ մասնակցությամբ Գագաուզիայում ամեն տարի կազմակերպվում են թուրքական մշակույթի օրեր և այլ միջոցառումներ:

Ուշագրավ է, որ Թուրքիայի նման ակտիվությունն այս տարածաշրջանում խրախուսվում է նաև պաշտոնական Քիշնևի կողմից, ինչը, թերևս, պայմանավորված է ինքնավարության սոցիալ-տնտեսական ու կրթամշակության ոլորտներում կուտակված խնդիրներով: Մանավանդ որ միայն սոցիալական նախագծերի իրականացման նպատակով Թուրքիան ավելի քան 25 մլն ԱՄՆ դոլարի օգնություն էր հատկացրել ՄՀ-ին: Այս տեսանկյունից ուշագրավ էր, որ 2014 թ. փետրվարի սկզբին ՄՀ վարչապետ Յու. Լյանկեի և Թուրքիայի էկոնոմիկայի ու մաքսային գործերով նախարար Հայաթի Յազիջիի միջև Քիշնևում կայացած հանդիպման ժամանակ առանձնահատուկ քննարկման առարկա դարձան Գագաուզիայում սոցիալ-տնտեսական ու գիտամշակութային նախագծերի իրականացման հեռանկարները, որոնցում կարևոր տեղ էր գրավում նաև Կոմրատում թուրքագիտական հետազոտական կենտրոն հիմնելու հարցը:

Անկարան իր հերթին Քիշնևին «վարձահատույց» է լինում փորձելով «գագաուզ եղբայրներին» ամեն կերպ զերծ պահել անջատողականության դրսևորումներից, ինչն արտահայտվում էր նաև Գագաուզիա ժամանած թուրք բարձրաստիճան պաշտոնյաների ուղղորդիչ հայտարարություններով: Այսպես, 2013 թ. սեպտեմբերի 23-ին Մոլդովայում այցով գտնվող Թուրքիայի փոխվարչապետ Բեքիր Բոզդաղը, ժամանելով Գագաուզիա, հայտարարեց, թե «Թուրքիան պաշտպանում է Մոլդովայի ինք-

նիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, իսկ Գագաուզիան Թուրքիայի և Մոլդովայի միջև ծառայում է որպես կապող օղակ»: 2014 թ. մայիսին, առաջին անգամ երկօրյա պաշտոնական այցով ՄՀ-ում գտնվող Թուրքիայի Մեծ ազգային ժողովի նախագահ Ջ. Չիչեկը Կոմրատում հայտարարելով, թե Անկարայի համար խիստ կարևոր է, որպեսզի գագաուզները պահպանեն իրենց մշակութային միասնությունը, իսկ ինքնավարությունում միշտ լինի խաղաղություն ու կարգուկանոն, հավելեց, որ դրա համար «անհրաժեշտ է, որպեսզի չմոռանաք, որ դուք հանդիսանում եք Մոլդովայի Հանրապետության անքակտելի մասը», ուստի, ըստ նրա, ամեն ինչ պետք է տեղի ունենա Քիշնևի համաձայնությամբ: Այս համատեքստում բանախոսը ընդգծեց, որ Թուրքիան հանդես է գալիս Գագաուզիայի՝ Մոլդովայի հետ միասին Եվրոպային ինտեգրվելու օգտին և աջակցում է ՄՀ ամբողջականությանն ու քաղաքական միասնությանը: Ջ. Չիչեկը իր ելույթի վերջում շեշտեց Անկարայի պատրաստակամությունը «եղբայրական գագաուզ ժողովրդին» աջակցելու հարցում: Ուշագրավ էր, որ Գագաուզիայի քաղաքական շրջանների կողմից միանշանակ չընդունվեց նշյալ այցը: Վերջինից մի քանի օր անց «Միասնական Գագաուզիա» շարժման, որի մեջ մտնում էր նաև բաշկան Մ.Ֆորմուզալը, պաշտոնաթերթում հրատարակված հոդվածում զայրույթ էր արտահայտվում Մոլդովայի կազմում Գագաուզիայի Եվրոպային ինտեգրվելու կոչով Ջ. Չիչեկի Թուրքիայի անունից հանդես գալու կապակցությամբ: Միաժամանակ, հոդվածի հեղինակների հիասթափությունն էր հարուցել Գագաուզիայում փետրվարի 2-ին անցկացված հանրաքվեների արդյունքների անտեսումը բարձրաստիճան հյուրի կողմից: Տարակուսանք էր առաջացրել նաև այցի ընթացքում Թուրքիայի Մեծ ազգային ժողովի նախագահի կողմից ինքնավարությանը ոչ բարոյական և ոչ էլ ֆինանսական աջակցության չցուցաբերումը:

Չնայած վերոնշյալին, ընդհանուր առմամբ, Գագաուզիայի ղեկավարությունը գրեթե մշտապես արտահայտել է իր ընդգծված համակրանքը Անկարայի նկատմամբ՝ Թուրքիային անվանելով բարեկամ երկիր, իսկ թուրքերին՝ եղբայրական ժողովուրդ, շեշտելով Անկարայի հանգուցային դերը թյուրքական աշխարհի պահպանման և ամրապնդման գործում: Այս առումով հատկանշական էր Ստամբուլի «Այդին» համալսարանին առընթեր Անվտանգության և ռազմավարության կենտրոնի կողմից կազմակերպված Միջազգային անվտանգությանն և ռազմավարությանը նվիրված առաջին կոնգրեսի ամբիոնից Գագաուզիայի ղեկավար Մ.Ֆորմուզալի 2013 թ. մարտի 25-ին արված ներքոհիշյալ հայտարարությունը. «Թուրքիան շնորհիվ իր ներուժի թյուրքական աշխարհում հանգուցային դեր է խաղացել ու կխաղա: Նրա ներուժը միշտ օբյեկտիվորեն աշխատել է թյուրքական աշխարհի մնացած մասի պահպանման և ամրապնդման ուղղությամբ, ինչի համար Թուրքիան արժանի է ողջ թյուրքական աշխարհի շնորհակալությանը»: Գագուզիայի ղեկավարն իր այս միտքը զարգացրեց 2013 թ. ապրիլի 11-ին Ստամբուլում կայացած Եվրասիական տնտեսական համաժողովում նշելով, թե թյուրքական աշխարհը բազմաբևեռ աշխարհի համակարգում պետք է դառնա կարևոր ինտեգրացիոն կենտրոն՝ մանավանդ որ տարածաշրջանի առաջատար երկրներ Թուրքիան, Ղազախստանը և Ադրբեջանը իրենց քաղաքականությամբ ընտրություն են կատարում այդ համակարգի օգտին, իսկ Գագաուզիան խիստ շահագրգռված է ինտեգրվել թյուրքական տարա-

ծությանը: Միաժամանակ, Մ. Ֆորմուզալը որպես բազմաբևեռ համակարգի միջազգային կայունության հիմք հանդիսացող այլ աշխարհաքաղաքական նախագծեր նշեց ԵՄ-ն ու ԵվրԱզԷՍ-ը: Այս ֆոնի վրա պատահական չէր, որ 2013 թ. հունիսի 19-ին Գագաուզիայի գործադիր կոմիտեն Թուրքիայում ստեղծված լարված իրավիճակի կապակցությամբ հանդես եկավ հայտարարությամբ, որի մեջ, մասնավորապես, նշվում էր, թե հակակառավարական զանգվածային ելույթները Ստամբուլում ոչ բարենպաստ ազդեցություն են թողնում երկրի վարկանիշի վրա՝ սպառնալիքի տակ դնելով նրա քաղաքական ու տնտեսական կայունությունը: Մինչդեռ, ըստ Կոմրատի, պաշտոնական Անկարային է պատկանում տարածաշրջանային անվտանգության պահպանման կարևոր դերը, ուստի նրա հետ սերտ տնտեսական և քաղաքական հարաբերություններ զարգացնող թյուրքական աշխարհի բոլոր երկրներն ու տարածաշրջանները շահագրգռված են ոչ կոնֆլիկտային ու հանդարտ Թուրքիայով: Նույն օրը Գագաուզիայի վարչական կենտրոնում՝ «Թուրքիան ժողովրդավարական պետություն է», «վարչապետ Էրդողանը թյուրքական աշխարհի առաջնորդն է» և նմանատիպ այլ կարգախոսներով կազմակերպվեց ցույց՝ ի պաշտպանություն Թուրքիայի կառավարության:

Ի նշան Թուրքիայի կառավարության հետ համերաշխության, 2013 թ. հուլիսին Գագաուզիայի բաշկան Մ.Ֆորմուզալը այցելեց, այդ երկիր, ուր Անկարայի հետ պայմանավորվածություններ ձեռք բերեց միջտարածաշրջանային կապերի հաստատման և Գագաուզայում սոցիալական նշանակության ենթակառուցվածքային նախագծերի համատեղ իրականացման վերաբերյալ: Ընդ որում, ուշագրավ էր, որ տվյալ այցից անմիջապես հետո,

Կոմրատը դիմեց Քիշնևին՝ Մոլդովայի և արտասահմանյան երկրների միջև գոյություն ունեցող բոլոր միջկառավարական հանձնաժողովների կազմում Գագաուզիայի ներկայացուցչությունն ապահովելու պահանջով (ինքնավար կազմավորումը ներկայացված էր միայն մոլդովա-թուրքական միջկառավարական հանձնաժողովում):

2014 թ. օգոստոսի 28-ին Թուրքիայի նախագահ ընտրվելու կապացությամբ, Ռ.Թ. Էրդողանին առաջիններից մեկը շնորհավորեց Գագաուզիայի ղեկավարությունը, որի ուղերձում, մասնավորապես, ընդգծվում էր թուրք և գագաուզ ժողովուրդների միջև գոյություն ունեցող ավանդական ջերմ, բարեկամական հարաբերություններն ու բարձր էր գնահատվում Թուրքիայի կողմից ինքնավարությանը ցուցաբերվող մշտական աջակցությունը:

2014 թ. հոկտեմբերի երրորդ տասնօրյակում այցով Անկարայում գտնվող Գագաուզիայի խորհրդարանական պատվիրակությունը դիմեց Թուրքիայի ղեկավարությանը խնդրանքով՝ «ազդել Մոլդովայի ղեկավարության վրա, կապված Քիշնևի կողմից Գագաուզիայի հատուկ իրավական կարգավիճակի մասին օրենքը հետևողականորեն չիրականացնելու հետ»: Դրա հետ մեկտեղ, պայմանավորվածություն ձեռքբերվեց Գագաուզիայի խնդիրներով միջազգային համաժողով անցկացնելու վերաբերյալ: Միաժամանակ, թուրքական կողմը խոստացավ Գագաուզիայում բացել 500 ուսումնական տեղով մոլդովա-թուրքական պետական վարժարան, որը ֆինանսավորվելու էր Անկարայի կողմից՝ երկրի նախագահ Ռ.Թ. Էրդողանի հովանու ներքո: Արծարծվեցին նաև թուրքական ֆինանսավորմամբ՝ Կոմրատում Գագաուզիայի Գործադիր կոմիտեի և ժողովրդական ժողովի վարչական շենքի կառուցմանն ու սոցալ-տնտեսական այլ նա-

խնդիրների իրականացմանն առնչվող հարցեր:

Գագաուզա-թուրքական ջերմ հարաբերությունների հերթական ակնբախ դրսևորումներից էր 2015 թ. ապրիլի սկզբին պաշտոնական այցով ՄՀ-ում գտնվող Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մ.Չավուշօղլու ժամանումը Գագաուզիա, որտեղ նա, մասնավորապես, հայտարարեց. «Եկել եմ այցելելու մեր եղբայրներին: Մենք հպարտանում ենք Գագաուզիայի զարգացմամբ...Մենք ունենք ընդհանուր արմատներ, լեզու և մշակույթ: Հուսով եմ մեր հարաբերությունները միշտ կլինեն բարձր մակարդակի վրա»: Ի պատասխան՝ Գագաուզիայի նորընտիր բաշկան Ի. Վլախը շեշտեց, թե «Թուրքիան եղել է, կա և կլինի մեր գործընկերն ու որոշակի կամուրջը Քիշնևի և Կոմրատի միջև համագործակցության ծավալման համար»: Այս ֆոնի վրա անսպասելի էր Մոլդովայում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Թուրքիայի դեսպան Մ.Ս. Քարտալի 2016 թ. մայիսի վերջին քիշնևյան «Պանորամա» թերթին տրված հարցազրույցի ժամանակ արտահայտած միտքը, թե «խոսել գագաուզների նկատմամբ Թուրքիայի հատուկ վերաբերմունքի մասին չի կարելի, նրանք Մոլդովայի նույնանման քաղաքացիներ են, ինչպես և հանրապետությունում բնակվող մյուս բոլոր ազգությունները»: Թուրք դիվանագետի տվյալ հայտարարությունը Գագուզիայում զարմանք և տարակուսանք առաջացրեց: Մինչդեռ վերլուծաբանների կարծիքով՝ Քարտալի խոսքերը ոչ թե իրականությունն էին արտահայտում, այլ դրանք թուրքական ուղղությամբ տարվող աշխատանքների թուլացման վերաբերյալ ինքնավարության ղեկավարությանը հասցեագրված յուրահատուկ ազդանշան էին: Մանավանդ որ պաշտոնական Կոմրատը Ռուսաստանին ևս դիտարկելով որպես գագաուզների ապագա գոյատևումն ապահովող երաշխավոր-երկիր, վերջին շրջանում ավելի էր սերտացրել հարաբերությունները Մոսկվայի հետ, ինչի շնորհիվ, ըստ Գագաուզիայի ղեկավարության, ինքնավարությունը կարող էր թյուրքական և սլավոնական աշխարհների գործընկերության մոդել դառնալ: Թերևս դրան էին նպատակաուղղված Գագաուզիայի ղեկավար Ի. Վլախի 2016 թ. հունիսի երկրորդ տասնօրյակում Անկարա կատարած այցելությունը, որի ընթացքում նա հանդիպումներ ունեցավ Թուրքիայի նախագահ Ռ.Թ. Էրդողանի, վարչապետ Բ. Յըլդըրըմի և արտգործնախարար Մ. Չավուշօղլու հետ, ովքեր ինքնավար կազմավորման տնտեսության, կրթության, հեռուստահաղորդակցությունների և այլ ոլորտների զարգացմանը համակողմանի աջակցություն ցուցաբերելու իրենց երկրի պատրաստակամությունը հայտնեցին: Մոլդովայի և Թուրքիայի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստին մասնակցելու նպատակով, 2016 թ. դեկտեմբերի կեսին կրկին Անկարայում գտնվող Գագաուզիայի բաշկանը հերթական անգամ հանդիպեց Թուրքիայի նախագահ Ռ.Թ. Էրդողանի հետ, որի ընթացքում քննարկվեցին 2016 թ. հունիսյան հանդիպման ժամանակ ձեռքբերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքին առնչվող հարցեր:

Գագաուզա-թուրքական հարաբերություններում խոշոր իրադարձություն էր 2017 թ. մայիսի 5-6-ը այցով Մոլդովայում գտնվող Թուրքիայի վարչապետ Բ. Յըլդըրըմի մասնակցությունը (ՄՀ նախագահ Ի. Դոդոնի և վարչապետ Պ. Ֆիլիպի ուղեկցությամբ) Կոմրատում անցկացվող Գագաուզների 4-րդ համաշ-

խարհային կոնգրեսին[14], որին մասնակցում էր 550 մարդ՝ աշխարհի 20 երկրներից: Թուրքիայի վարչապետն իր ելույթում, մասնավորապես, հայտարարելով, թե «Անկարան շարունակելու է լայն աջակցություն ցուցաբերել եղբայրական գագաուզ ժողովրդին», հավելեց, որ «Գագաուզիան հոգևոր կամուրջ է Թուրքիայի և Մոլդովայի միջև»: Զարգացնելով իր միտքը նա նշեց. «մենք կարծում ենք, որ ինքնավարության զարգացումը Մոլդովայի շրջանակներում շատ կարևոր է: Մենք պատրաստ ենք օգնություն ցուցաբերել, ինչպես Մոլդովային, այնպես էլ Գագաուզիային»: Իր հերթին ինքնավար կազմավորման ղեկավար Ի. Վլախը դիմելով թուրք բարձրաստիճան հյուրին հայտարարեց՝ «մենք խոսում ենք մի լեզվով, հասկանում ենք միմյանց: Մեր զգացմունքները փոխադարձ են, մեր ժողովուրդը դա զգում է, հարգում և շնորհակալություն է հայտնում Ձեզ»:

Հատկանշական է, որ Կոմրատը, Թուրքիայի հետ ծավալվող բարեկամական հարաբերությունների ֆոնի վրա, կարևորում է նաև Ադրբեջանի հետ համագործակցության զարգացումը: Այսպես, 2014 թ. «Publika. az» ադրբեջանական կայքին տրված հարցազրույցում Գագաուզիայի բաշկան Մ.Ֆորմուզալը ընդգծելով Թուրքիայի և Ադրբեջանի նախկին նախագահներ Ս. Դեմիրելի և Հ. Ալիևի[15] ունեցած մեծ ներդրումը 1994 թ. Գագաուզիայի ինքնավարության կարգավիճակով Մոլդովայի կազմի մեջ մտնելու գործում, որով և կարգավորվեց մոլդովա-գագաուզյան հակամարտությունը, շեշտեց, թե «այսօր էլ Կոմրատը Բաքվից և Անկարայից սպասում է, որպեսզի նրանք դառնան անկախ Մոլ-

[14] 2006 թվականից ի վեր՝ Գագուզիայի մայրաքաղաք Կոմրատում երեք տարին մեկ անգամ անց է կացվում Գագաուզների համաշխարհային կոնգրես, որին մասնակցում են գագաուզներ գրեթե ամբողջ աշխարհից:

[15] Կոմրատի «Փառքի ծառուղում» տեղադրված է նաև Հ.Ալիևի հուշարձանը:

դովայի կազմում Գագաուզիայի ինքնավարության պահպանման պաշտոնական երաշխավորներ»: Ուշագրավ էր, որ հիշյալ հարցազրույցի ժամանակ, պատասխանելով Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ իր ունեցած դիրքորոշման մասին հարցին, Մ.Ֆորմուզալը, մասնավորապես նշել էր, թե առաջին հերթին կարգավորման գործում հանգուցային դեր պետք է խաղան հենց հակամարտող կողմերը, իսկ միջազգային ընկերակցության դերը պետք է սահմանափակվի զուտ բանակցային գործընթացի համար պայմանների ստեղծմամբ, երկրորդ՝ նա տարածքային վեճերի խաղաղ կարգավորման տարբերակի սկզբունքային կողմնակից է և երրորդ՝ Մոլդովայի կազմում Գագաուզիայի ինքնավարության ստեղծումը դիտարկելով որպես տարածքային հակամարտության խաղաղ կարգավորման հազվագյուտ դեպք, Մ. Ֆորմուզալն այն համարում էր մեծ նվաճում, որը կարելի է դարձնել հաջող մոդել նման խնդիրներն ամբողջ աշխարհում լուծելու համար: Ըստ նրա՝ հենց այդ սկզբունքների և գաղափարների շրջանակներում պետք է դիտարկվեին Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման հեռանկարները:

Ինչպես տեսնում ենք Գագաուզիայի նախկին ղեկավարի կողմից առաջ քաշված սկզբունքներն ու գաղափարները հիմնականում համահունչ էին ադրբեջանական դիրքորոշման հետ: Ուստի օրինաչափ էր, որ Գագաուզիայի հաջորդ բաշկան Ի. Վլախը Թուրք-ադրբեջանական բիզնեսի ընկերության պատվիրակության հետ 2017 թ. փետրվարին Կոմրատում կայացած հանդիպման ժամանակ[16] ընդգծելով Թուրքիայի առառաձնահա-

[16] Թուրք-ադրբեջանական բիզնեսի ընկերության պատվիրակությունը Գագաուզիայում էր գտնվում Թուրքիայի էկոնոմիկայի նախարարի հանձնարարությամբ՝ փոխադարձ առևտրի և ներդրումների համար տնտեսության առավել ընդունելի

տուկ դերը ինքնավար կազմավորման սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացման գործում, շեշտեց նաև, որ «Ադրբեջանը միջազգային ասպարեզում և թյուրքական աշխարհում Գագուզիայի կարևոր գործընկերներից է»: Նշենք, որ Գագաուզիայի ղեկավարները պարբերաբար այցելում էին Ադրբեջան:

Այսպիսով, Գագաուզիան թյուրքական աշխարհի երկրների, հատկապես ԹՀ-ի հետ բարեկամական հարաբերությունների զարգացմամբ փորձում է նրանց օգնությամբ իր տեղը գտնել ժամանակակից աշխարհում: Իր հերթին Անկարան ամեն կերպ ձգտում է հնարավորինս մեծացնել իր ազդեցությունը ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ տարածաշրջանում, ինչը չէր կարող չանհանգստացնել տարածաշրջանի աշխարհաքաղաքական մեկ այլ գլխավոր ակտորին՝ Ռուսաստանին:

2. Գագաուզիան և Ռուսաստանը

Գագաուզները պատմականորեն բավականին լոյալ են տրամադրված Ռուսաստանի հանդեպ, քանի որ, թե Ռուսական կայսրության և թե ԽՍՀՄ կազմում հայտնվելու ժամանակներում հիմնականում դրական փորձ էին ստացել, ի տարբերություն Ռումինիայի և անկախ Մոլդովայի սահմանների մեջ գտնվելու շրջաններում: Դեռևս 1990-ականներից գագաուզ առաջնորդները հայտարարում էին, թե առանց Ռուսաստանի օգնության «Գագաուզիան կարող էր անհետանալ»: Ուստի պատահական

ճյուղերի ուսումնասիրության նպատակով: Այցի շրջանակում Գագաուզիայի և Թուրք-ադրբեջանական բիզնեսի ընկերության միջև ստորագրվեց համագործակցության մասին հուշագիր:

չէ, որ Կոմրատը, ինչպես Թուրքիային, Ռուսաստանին ևս դիտարկում է որպես գագաուզների ապագա գոյատևումն ապահովող երաշխավոր-երկիր: Վերլուծաբանների կարծիքով՝ նման մոտեցմամբ Գագաուզիան փորձում է իր վրա բևեռել միջազգային հանրության ուշադրությունը և պաշտպանվել իր ինքնավարության սահմանափակմանը նպատակաուղղված պաշտոնական Քիշնևի ոտնձգություններից: Թերևս դրանով էր պայմանավորված նաև, որ 2013 թ. Գագաուզիայի ժողովրդական ժողովի կողմից հաստատված Գործադիր կոմիտեի նորացված կառուցվածքում նախատեսվեց նոր ստորաբաժանման՝ Արտաքին կապերի և հանրային կառավարման վարչության (այսպես կոչված «գագաուզյան ԱԳՆ») հիմնում, որը զբաղվելու էր այլ պետությունների հետ միջտարածաշրջանային կապերի հաստատմամբ: Վերջինի գործունեության առաջնահերթություններից էին և թուրքական, և ռուսաստանյան ուղղությունները: Այս առումով, նշենք, որ, եթե Անկարան իր դիրքերը տարածաշրջանում փորձում էր ամրապնդել հիմնականում դեպի տնտեսական և կրթամշակութային ոլորտներն ուղղված ֆինանսական հոսքերի միջոցով, ապա Մոսկվան՝ քաղաքական ու տեղեկատվական ազդեցության մեծացման, ինչպես նաև տնտեսական և հումանիտար կապերի ընդլայնման ճանապարհով: Արդեն իսկ 2014 թ. փետրվարի սկզբին ՌԴ մայրաքաղաքում Գագաուզիայի ղեկավար Մ. Ֆորմուզալի և Մոսկվայի մարզի նահանգապետի տեղակալ Յու. Օլեյնիկովի միջև կայացած հանդիպման ընթացքում արծարծվեցին երկու տարածաշրջանների միջև սոցիալ-տնտեսական և միջմշակութային համագործակցության զարգացմանը վերաբերող հարցեր: Նշյալ թվականի մարտին Գագաուզիայի բարձրաստիճան պաշտոնական պատվիրակությունը աշխա-

տանքային այցով եղավ Մոսկվայում: ՌԴ Պետդումայում և կառավարությունում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում քննարկվեցին Կոմրատում ՌԴ հյուպատոսության բացմանը, գագաուզական գինիների Ռուսաստան արտահանելու թույլատրմանը, ռուսաստանյան գազը զեղչ գնով ձեռք բերելուն առնչվող հարցեր: Արդյունքում, ռուսաստանյան կողմը ընդառաջելով Կոմրատի խնդրանքին, արդեն իսկ նույն ամսին պաշտոնապես թույլատրեց վերսկսել ինքնավար կազմավորման գինեգործական արտադրանքի մատակարարումները Ռուսաստան, մինչդեռ Մոլդովայի նկատմամբ կիրառվող «գինու էմբարգոն[17]» Մոսկվայի կողմից չվերացվեց, առաջացնելով պաշտոնական Քիշնևի անթաքույց դժգոհությունը: Զուգընթաց, աշխատանքներ էին տարվում նաև ռուս-գագաուզյան միջխորհրդարանական շփումների ծավալման և միջտարածաշրջանային համագործակցության ընդլայնման ուղղությամբ: 2014 թ. ապրիլի երրորդ տասնօրյակի սկզբին Գագաուզիայի բաշկանի և ՌԴ Պետդումայի նախագահ Ս. Նարիշկինի միջև Մոսկվայում կայացած հանդիպման ընթացքում արծարծվեցին Գագաուզիայի Ժողովրդական ժողովի և Պետդումայի միջև համագործակցության հեռանկարներին առնչվող հարցեր, իսկ հունիսի կեսին Սանկտ Պետերբուրգում, նահանգապետ Գ.Պոլտավչենկոն և Գագաուզիայի ղեկավար Մ. Ֆորմուզալը ստորագրեցին տնտեսության,

[17] Քիշնևի կողմից հաստատակամորեն «եվրաինտեգրման» ուղեգծի որդեգրումից հետո, Ռուսաստանը տարբեր բնագավառներում Մոլդովայի վրա սկսեց ճնշումներ գործադրել: Արգելվեց մոլդովական մսամթերքի, մրգերի և պտուղ-բանջարեղենային պահածոների արտահանումը Ռուսաստան, մաքսատուրքեր սահմանվեցին Մոլդովայից ներկրվող ցորենի, եգիպտացորենի, շաքարի, այկոհոլային խմիչքների, կահույքի և որոշ այլ ապրանքների վրա, ինչպես նաև շարունակվում էր գործել նաև մոլդովական այկոհոլային խմիչքների մատակարարումների վրա դեռևս 2013թ. սեպտեմբերից մտցված արգելքը:

կրթության, մշակույթի և առողջապահության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագիր: ՌԴ հետ կապերի ակտիվացմանն էր նպատակաուղղված 2014 թ. հուլիսին Գագաուզիայի Ժողովրդական ժողովի կողմից Մոսկվայում ինքնավար կազմավորման պաշտոնական ներկայացուցչի նշանակումը: 2015 թ. փետրվարին Մոսկվայի մարզի կառավարությունն ու Գագաուզիայի Ինքնավար-Տարածքային Կազմավորման գործադիր կոմիտեն ստորագրեցին համաձայնագիր առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին: Նույն թվականին նման փաստաթղթեր ստորագրվեցին նաև Կրասնոդարի երկրամասի, Թաթարստանի, իսկ 2016 թ.՝ Պսկովի մարզի հետ: Գագաուզիան, ընդհանուր առմամբ, համագործակցում է ՌԴ ավելի քան 10 տարածաշրջանի հետ՝ հիմնականում Ռուսաստան արտահանելով աշխատուժ և իր արտադրանքի զգալի մասը:

Ռուսաստանը ուշադրությամբ հետևում է Գագաուզիայում ծավալվող քաղաքական գործընթացներին, փորձելով վերջինների վրա ազդել դրանք իր շահերին ծառայեցնելու նպատակով: 2015 թ. մարտի սկզբին ՌԴ Դաշնության խորհրդի նախագահ Վ. Մատվիենկոն ընդունելով Գագաուզիայի բաշկանի ընտրություններում որպես անկախ թեկնածու առաջադրված, Մոսկվայի հովանավորությունը վայելող Ի. Վլախին, նրան մաղթեց համոզիչ հաղթանակ՝ ինքնավարության ղեկավարի առաջիկա ընտրություններում: Միայն մարտի երկրորդ շաբաթվա ընթացքում Մոլդովա, մասնավորապես Գագաուզիա այցելեցին ՌԴ պետական դումայի 5 պատգամավոր, որոնք, ըստ էության, հիմնականում զբաղվում էին Ի. Վլախի օգտին բացահայտ քարոզչության ծավալմամբ: Պաշտոնական Քիշնևն այդ ամենը որակելով որ-

պես միջամտություն ՄՀ ներքին գործերին, արգելեց «ռուսաստանցի պատգամավորների պաշտոնական այցերից դուրս» մուտքը Մոլդովա: Արգելվեց նաև Համառուսաստանյան պետական հեռուստատեսային և ռադիոհեռարձակային ընկերության թղթակցի մուտքը Մոլդովա, ով պետք է լուսաբաներ Գագաուզիայի ղեկավարի (բաշկանի) մարտի 22-ին կայանալիք ընտրությունները: Ի պատասխան՝ ՌԴ ԱԳՆ-ը մարտի 20-ին հանդես եկավ հայտարարությամբ, որում ՄՀ իշխանությունների այդ քայլերը գնահատեց որպես խոսքի ազատության ապահովման միջազգային պարտավորությունների խախտման «վրդովեցուցիչ և աղաղակող» փաստեր: Սակայն ՄՀ իշխանությունները հետագայում ևս շարունակում էին արգելել ՌԴ ԶԼՄ-ների ներկայացուցիչների մուտքը Մոլդովա, իսկ ապրիլի 9-ին երկրի խորհրդարանը Ընտրությունների մասին Օրենսգրքում լրացումներ մտցրեց՝ արգելելով ՄՀ տարածքում օտարերկրյա քաղաքացիների ցանկացած ձևով նախընտրական քարոզարշավին մասնակցելը:

Չնայած Քիշնևի գործադրած ջանքերին, Մոսկվան յուրաքանչյուր հարմար առիթ օգտագործում էր Գագաուզիայում իր քաղաքական ազդեցությունը ուժեղացնելու համար: Այս առումով ուշագրավ էր 2015 թ. աշնանը Սիրիայում Թուրքիայի կողմից ռուսաստանյան ռազմական ինքնաթիռի խոցման հետևանքով ռուս-թուրքական հարաբերությունների կտրուկ վատթարացման ֆոնի վրա, «Արդար Ռուսաստան» քաղաքական կուսակցության առաջնորդ Ս. Միրոնովի նոյեմբերյան հրատապ այցը Կոմրատ: Ըստ վերլուծաբանների՝ տվյալ քայլով Կրեմլը փորձելով տարածաշրջանում Անկարայի նկատմամբ առավելություն ձեռք բերել, գագաուզներին հիշեցնում էր նրանց նկատ-

մամբ Ռուսաստանի «տածած սիրո» և բախտի քմահաճույքին չթողնելու իր մտադրության մասին, ինչի վկայությունն էր տվյալ այցի շուրջ ստեղծված տեղեկատվական իրարանցումը, որն ուղեկցվում էր ԵԱՏՄ-ին անդամակցելու Գագաուզիայի բնակչության ճնշող մեծամասնության ցանկության մասին պարտադիր հիշեցումներով: Իր հերթին Կոմրատը, ռուս-թուրքական հակամարտության ծագման առաջին իսկ օրվանից չեզոք դիրքորոշում որդեգրելով, երկու երկրների միջև հարաբերությունների արագ կարգավորման հույս հայտնեց:

Ի. Վլախի Գագաուզիայի բաշկան ընտրվելուց հետո ռուս-գագաուզյան շփումներն ավելի հարաշարժ բնույթ ստացան: Մասնավորապես, 2017 թ. հունիսի 11-13-ը Սանկտ Պետերբուրգի նահանգապետ Գ. Պոլտավչենկոյի գլխավորությամբ Գագաուզիայում էր գտնվում ՌԴ հյուսիսային մայրաքաղաքի պատվիրակությունը, որը մասնակցեց Կոմրատի պետական համալսարանում կայացած Սանկտ Պետերբուրգի և Գագաուզիայի միջև համագործակցության հարցերին նվիրված համաժողովին: Պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան նաև ինքնավարության բաշկան Ի. Վլախի, Գործկոմի անդամների և Ժողովրդական ժողովի պատգամավորների հետ: Ստորագրվեց տնտեսության, կրթության և սպորտի բնագավառներում միջտարածաշրջանային համագործակցության մասին փաստաթղթերի փաթեթ:

Հատկանշական էր, նաև, որ ռուս-մոլդովական երկկողմ հարաբերություններում հաճախակի ծագող լուրջ հակասությունների հանգեցնող հարցերում, Կոմրատը հիմնականում հանդես էր գալիս Մոսկվայի դաշնակցի դիրքերից: Այսպես, 2017 թ. հունիսին Գագաուզիայի բաշկան Ի. Վլախը մտահոգություն և ափ-

սոսանք հայտնեց քարոզչության դեմ պայքարի պատրվակով Մոլդովայում «հակառուսական գրաքննություն» մտցնելու իշխող Դեմոկրատական կուսակցության մտադրության կապակցությամբ: Այդ համատեքստում նա ՄՀ խորհրդարանում ինքնավարությունը ներկայացնող պատգամավորներին կոչ արեց չաջակցել տվյալ օրենսդրական նախագծին և բոլոր ջանքերը ներդնել այն օրակարգից հանելու համար:

Նույն թվականի օգոստոսի սկզբին ինքնավարության ղեկավարը կտրուկ անհամաձայնություն հայտնելով ՌԴ փոխվարչապետ Դ. Ռոգոզինին «անցանկալի անձ» հայտարարելու ՄՀ կառավարության որոշման վերաբերյալ[18], հայտարարեց, թե կենտրոնական իշխանությունների կողմից ռուս-մոլդովական գործընկերության դեմ որդեգրած քաղաքականությունը չի արտացոլում Գագաուզիայի բնակչության և ամբողջ մոլդովական հասարակության իրական վերաբերմունքը բարեկամ ռուսաստանյան ժողովրդի և ՌԴ ղեկավարության հանդեպ: Նա հույս հայտնեց, թե Մոսկվայի պատասխան քայլերը չեն անդրադառնա Ռուսաստանի տարածքում ժամանակավորապես կամ մշտապես բնակվող Մոլդովայի քաղաքացիների վրա: Միաժամանակ, գագաուզյան հասարակայնության մի խումբ ներկայացուցիչներ, որոնց թվում ինքնավարության նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ, Քիշնևի վերոնշյալ որոշումը քննարկելու նպատակով, Գագաուզիայի ժողովրդական ժողովից պահանջեցին հրավիրել ինքնավար կազմավորման բոլոր մակարդակների և նստաշրջանների պատգամավորների համագումար:

2017 թ. դեկտեմբերի 8-ին Ի. Վլախը հայտարարեց, թե, չնայած նախօրեին երկրի հեռուստատեսությամբ և ռադիոյով ռուսաստանյան նորությունների ու տեղեկատվա-վերլուծական ծրագրերի հեռարձակումներն արգելելու վերաբերյալ ՄՀ խորհրդարանի ընդունած օրենքին, ինքնավար կազմավորումում լրիվ ծավալով շարունակվելու են հեռարձակվել ՌԴ հեռուստաընկերությունների նշյալ ծրագրերը: Ըստ Գագուզիայի ղեկավարի՝ տվյալ որոշումն ուղղակիորեն խախտում է տեղեկատվությանը հասանելի լինելու Մոլդովայի քաղաքացիների իրավունքները, հատկապես ոտնահարելով ռուսալեզու լսարանի և Գագաուզիայի բնակչության շահերը: Միաժամանակ նա ընդգծեց թե երևակայական «տեղեկատվական սպառնալիքի» կարգախոսի ներքո[19] պայքար է տարվում ռուսաց լեզվի և «Մոլդովայում Ռուսաստանի ունեցած մեծ հեղինակության դեմ»:

2018 թ. մարտի վերջին Գագաուզիայի ժողովրդական ժողովը քննադատեց ՌԴ երեք դիվանագետի Մոլդովայից արտաքսելու վերաբերյալ երկրի կառավարության որոշումը, որը Քիշնևը դիտարկում էր որպես ռուսաստանյան հատուկ ծառայությունների նախկին աշխատակցին և նրա դստերը անգլիական Սոլսբերի քաղաքում թունավորելու մեջ Մոսկվային մեղադրող Մեծ Բրիտանիայի և այլ «եվրոպական գործընկերների» հետ համերաշխության դրսևորում:

Տվյալ ֆոնի վրա բնական էր, որ 2018 թ. մարտի 18-ին կայացած ՌԴ նախագահական ընտրությունների ժամանակ Գա-

[18] ՄՀ կառավարությունը օգոստոսի 2-ին Ռուսաստանի փոխվարչապետ, Մերձդնեստրի հարցով ՌԴ նախագահի հատուկ ներկայացուցիչ, Մոլդովայի և Ռուսաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Դ.Ռոգոզինին՝ ՄՀ և նրա ղեկավարության հասցեին միրավորական արտահայտություններ թույլ տալու կապակցությամբ, հայտարարեց «անցանկալի անձ»:

[19] Մոլդովայում իշխող Դեմոկրատական կուսակցությունը հայտարարեց, թե դա նշանակում է «պայքար ռուսական քարոզչության դեմ»:

գաուզիայի ընտրական տեղամասում քվեարկած շուրջ 1200 ընտրողների 97%-ը ձայնը տվել էր Վ. Պուտինի օգտին: Ռուսաստանի նախագահ ընտրվելու կապակցությամբ վերջինիս հաստեագրված շնորհավորական ուղերձում, ինքնավարության բաշկան Ի.Վլախը այդ հաղթանակը բնութագրեց որպես բարձր վստահության դրսևորման վառ օրինակ:

Այսպիսով, Մոսկվայի և Անկարայի միջև հավասարակշռության պահպանման քաղաքականությամբ Գագաուզիան փորձում է ձեռք բերել միջազգային հեղինակություն Քիշնևի ճնշումներից հնարավորինս խուսանավելու համար: Ռուսաստանն իր հերթին առաջնորդվելով սեփական աշխարհաքաղաքական շահերով ամեն կերպ ձգտում է մեծացնել իր ազդեցությունը տվյալ տարածաշրջանում՝ ի հակակշիռ Թուրքիայի:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ելնելով մեր ուսումնասիրության արդյունքներից կարող ենք արձանագրել, որ ի տարբերություն ԽՍՀՄ փլուզման հետևանքով հետխորհրդային տարածքում ծագած ղարաբաղյան, մերձդնեստրյան, աբխազական և հարավօսեթական խնդիրների, Գագաուզյան հարցը չի ստացել միջազգային լայն հնչեղություն և ըստ էության, մնում է «ստվերում»: Դա ինչ որ չափով պայմանավորված է այն հանգամանքով, որ Գագաուզիայի հարցի շուրջ ծավալվող իրադարձությունները նշյալ հակամարտությունների նման չեն ուղեկցվել կողմերի միջև լայնածավալ արյունալի բախումներով ու մարդկային մեծաթիվ զոհերով և այն լուծում է ստացել է խաղաղ ճանապարհով՝ Մոլդովայի միասնականության պահպանման սկզբունքի հիման վրա: Սակայն Մոլդովայի խորհրդարանի 1994 թ. ընդունած Գագաուզիայի հատուկ կարգավիճակի մասին օրենքը հիմնականում արտաքին ճնշման ներքո Քիշնևի և Կոմրատի միջև մեծ դժվարությամբ ձեռքբերված փոխզիջում էր: Ըստ էության, այդ ժամանակից ի վեր, կենտրոնի և ինքնավարության միջև լիարժեք երկխոսություն չի ծավալվել: Գագաուզիայի հիմնական դժգոհությունը Մոլդովայից երկար տարիներ մնում է նույնը՝ ինքնավարության լիազորությունների ոչ բավարար ամրագրումը երկրի սահմանադրության մեջ, ինչի հետևանքով Գագաուզիայի հատուկ կարգավիճակի մասին օրենքը լիարժեք չի գործում: Փաստորեն Կոմրատի և

Քիշնևի միջև առկա հակասություններն առավելապես պայմանավորված են մոլդովա-գագաուզյան հակամարտության կարգավորման իրավական անավարտությամբ: Ընդունելով նշյալ օրենքը Մոլդովան փաստորեն ճանաչել էր տարածաշրջանի բնակիչների քաղաքական, մշակութային և այլ իրավունքները, ինչը գագաուզյան հարցի լուծման մեջ ամենազգալի և գլխավոր քայլն էր: Սակայն ճանաչելով գագաուզների իրավունքներն ու լիազորությունները Քիշնևը իր վրա չէր վերցրել դրանց պահպանման պարտավորությունները: Ուստի, ըստ էության, տվյալ խնդրի լուծումը գտնվում է իրավական դաշտում: Սակայն դրա կարգավորմանը մեծապես խոչընդոտում է փոխադարձ անվստահության հետևանքով կողմերի մեջ արմատավորված «եթե մեկն ինչ-որ բան ստանում է, ապա մյուսն անպայման կորցնում է» մոտեցումը: Այդ տրամաբանությունից ելնելով, Գագաուզիայի լիազորությունների ընդլայնման ուղղությամբ ցանկացած նախաձեռնություն Քիշնևի կողմից ընկալվում է որպես անջատողականության դրսևորում: Մյուս կողմից Գագաուզիայի կարգավիճակը կանոնակարգող օրենսդրության արդիականացմանը նպատակաուղղված կենտրոնական իշխանությունների յուրաքանչյուր առաջարկություն Կոմրատը դիտարկում է որպես ինքնավար կազմավորման իրավունքները կրճատելու կամ ինքնավարությունը վերացնելու փորձ: Կողմերի միջև վստահության նման ցածր մակարդակը, բնականաբար, հանգեցնում է մշտական լարվածության առկայության, որին գումարվում է նաև տարածաշրջանում բարդ միջազգային իրավիճակը, պայմանավորված աշխարհաքաղաքական դրդապատճառներով տարբեր արտաքին ակտորների այստեղ ունեցած իրարամերժ շահերով: Գագաուզիան գտնվելով Ուկրաինայի, Մոլդովայի և Ռումինիայի

աշխարհագրական և պատմամշակութային սահմանների ծայրակցատեղում, Մերձդնեստրի օրինակով որոշել է գնալ իր հատուկ ուղիով, որն առաջացնում է Քիշնևի, Կիևի և Բուխարեստի անհանգստությունը, քանի որ բացի Ռուսաստանի ռազմական հենարան հանդիսացող Տիրասպոլից, նրանք տարածաշրջանում ռուսամետ Կոմրատին ևս դիտարկում են որպես անջատողականության պոտենցիալ աղբյուր, մանավանդ որ 90-ականների սկզբի Մերձդնեստրյան ռազմական հակամարտության ժամանակ գագաուզները բացահայտ հանդես էին գալիս Տիրասպոլի կողմից: Այսօր ևս նրանք անթաքույց համակրում են Մերձդնեստրին և կտրուկ մերժում Բուխարեստի կողմից առաջ քաշվող «Մեծ Ռումինիայի» ստեղծման գաղափարը (Գագաուզիայի իշխանությունները բազմիցս նախազգուշացրել են, որ Ռումինիայի հետ Մոլդովայի միավորման դեպքում ինքնավար կազմավորումը դուրս կգա վերջինիս կազմից), ինչպես նաև որոշակի ազդեցություն ունեն Օդեսայի մարզում համահավաք բնակվող իրենց ազգակիցների վրա: Այս ֆոնի վրա ուշագրավ է, որ ըստ որոշ մոլդովական փորձագետների՝ Գագաուզիան վեր է ածվել ռուսաստանյան անկլավի: Ուստի հատկանշական է, որ վերջին շրջանում գագաուզյան հարցը շարունակաբար բորբոքվում է արևմտյան ԶԼՄ-ների կողմից, որոնք գագաուզներով բնակեցված տարածքը անվանում են «ռազմավարական ճնշման կետ» և ամեն կերպ ընդգծում ռուսամետ Գագաուզիայի Մոլդովայի եվրաինտեգրման ճանապարհին խոչընդոտ հանդիսանալը: Դրանով փաստորեն ակնարկ է արվում, որ Քիշնևը եվրատլանտյան գոտուն կարող է ինտեգրվել ոչ այլ քան իր կամքին չենթարկվող Կոմրատի վրա ուժային ճնշում գործադրելով: Այս ամենը վկայում է, որ Գագաուզիան կարևոր նշանակություն է

ձեռք բերել նաև Արևմուտքի և Ռուսաստանի հարաբերությունների համատեքստում: Ի տարբերություն Արևմուտքի, Ռուսաստանն ու Թուրքիան, ելնելով իրենց աշխարհաքաղաքական շահերից շահագրգիռ են Գագաուզիայի ինքնավար կազմավորման գոյությամբ, քանի որ վերջինս լինելով, ինչպես «Ռուսական աշխարհի», այնպես էլ թուրքերի մոտ արմատավորված «Օսմանյան կայսրության» գաղափարի պտուղ, տարածաշրջանում հանդիսանում է իր հովանավորներ Մոսկվայի և Անկարայի ազդեցությունների պատվարը, հավասարապես ջերմ հարաբերություններ պահպանելով այստեղ մրցակցություն ծավալած վերջին երկուսի հետ: Նման հավասարակշիռ մոտեցում Կոմրատը դրսևորում է նաև ռուս-թուրքական հարաբերությունների սրման փուլերում՝ որդեգրելով չեզոք դիրքորոշում: Սակայն, ընդհանուր առմամբ, ելնելով ռուս-թուրքական հիմնականում բարեկամական հարաբերություններից քաղաքագետները Գագաուզիային անվանում են «Ռուսական աշխարհի թուրքական ամրոց»: Ուշագրավ է, որ գագաուզյան մի շարք փորձագետների համոզմամբ ինքնավար կազմավորման շահերը պետք է փնտրել իենց իր Գագաուզիայի, այլ ոչ թե նրա արտաքին քաղաքական կողմնորոշումների մեջ: Այս համատեքստում նրանք շեշտում են աշխարհաքաղաքականություն «խաղալու» փոխարեն, Կոմրատի կողմից ենթակառուցվածքները, կրթությունը, առողջապահությունը, մայրենի լեզուն, ազգային մշակույթը զարգացնելու անհրաժեշտությունը, քանի որ, ըստ այդ քաղաքագետների, ոչ եվրոպական և ոչ էլ եվրասիական ինտեգրումը չեն կարող հանդես գալ որպես Գագաուզիայի ինքնավարության գոյության արտաքին սպառնալիք, մինչդեռ կազմավորման գոյության գլխավոր վտանգը գագաուզերեն լեզվի վերացման, ինչպես նաև ինքնավարության գործունեության ու զարգացման մեջ ազգային մշակույթի նսեմացման սպառնալիքն է:

Այսպիսով, գագաուզյան հարցը, ներքին և արտաքին իրավաքաղաքական ու ազգամշակութային գործոններով պայմանավորված, դեռևս հեռու է կողմերին բավարարող հիմնարար լուծումից:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Փաստաթղթեր

1.1. Закон АТО Гагаузия о выборах в Народное Собрание (Халк Топлушу) Гагаузии (Гагауз Ери) от 15 января 1998 г. // Ведомости Народного собрания Гагаузии, Выпуск 8, N 25-XXV/I, 1998 г.

1.2. Закон Республики Молдова «Об особом правовом статусе Гагаузии (Гагауз Ери)» от 23 декабря 1994 года, Кишинев, 2012.

1.3. Конституция Республики Молдова. Принята 29 июля 1994 года, Кишинев, 1995.

2. Հրապարակումներ

2.1. Ազիզբեկյան Ռ.Լ. Մերձդնեստրյան հակամարտությունը (պատմություն և արդիականություն), Երևան, 2016:

2.2. Ангели Ф. Гагаузская автономия. Люди и факты (1989-2005), Кишинев, 2010.

2.3. Банкова И.Д., Главчева А.Г. Русский язык в Гагаузии// Русский язык в тюрко-славянских этнокультурных взаимодействиях, Москва, 2005.

2.4. Батанова А. История демократических выборов в Молдавии (1990-1994) //«Комсомольская правда», 16. 10.2014.

2.5. Булгар С.С. История и культура гагаузов, Кишинев, 2006

2.6. Гагагузы объявили о создании своей республики и выходе из

Молдовы // «Коммерсантъ Власть», N 33, 1990.

2.7. Гагаузы // Этноатлас Красноярского края, гл.редактор Рафиков Р.Г, Красноярск, 2008.

2.8. Гагаузия и Приднестровье: проблема Молдовской Конфедерации// «Политическая сфера», N 2, 2003.

2.9. Губогло М.Н. Гагаузы // Энциклопедия Народы и религии мира, Москва, 1998.

2.10. Губогло М.Н. Именем языка. Очерки этнокультурной и этнополитической истории гагаузов, Москва, 2006.

2.11. Губогло М.Н., Никогло Д.Е., Квилинкова Е. Н. Гагаузы //Серия: Народы и культуры, Москва, 2011.

2.12. Губогло М.Н. Русский язык в этнополитической истории гагаузов, Москва, 2004.

2.13. Гумилев Л.Н. От Руси к России, Москва, 2007.

2.14. Гросул В.Я. Гузенкова Т.С. Приднестровье: Молдавия. Современные тенденции развития. // Российская политическая энциклопедия, Москва, 2004.

2.15. Добров Л. Памятник Гагауз Ийери или КГБ против СССР, Комрат, 2007.

2.16. История и культура гагаузов, Кишинев, 2006.

2.17. История Республики Молдова. С древнейших времен до наших дней, Кишинев, 2002.

2.18. Кочанжи А. Языковый тупик// Коммерсант Plus, N 21, 01.06. 2007.

2.19. Лапти Б. Молдавия-Турция: нестыковка желаний и реалий, «Экон», 20.06.2008.

2.20. Никогло Д.Е. Система питания гагаузов в XIX-начале XX века, Кишинев, 2004.

2.21. Рождение Гагаузии: день за днем // «Столица Комрат»,

21.12.2008.
2.22. Стати В. История Молдовы, Кишинев, 2002.
2.23. Тисленко М.И. Гагаузы на распутье: Национальная идентичность как детерминант геополитического выбора // «Сравнительная политика», N 4 (21), 2015.
2.24. А. В. Шабашов «Гагаузы: система терминов родства и происхождение народа», Одесса, 2002 г.
2.25. Языки народов СССР: в 5-ти томах. Тюркские языки, Т. 2, Москва, 1996.

3. Կայք-էջերի նյութեր

3.1. Васильевич А., Гулевич В. Киев, Кишинев и Бухарест-против Гагаузии, 16.06.2015-/http://www.fondsk.ru/news/2015/06/16/kievkishinev-i-buharest-protiv-gagauzii-33857.html.
3.2. Васильевич А. Непокоренная Гагаузия в борьбе за свои права в составе Молдовы, 09.12.2017-/http://www.fondsk.ru/news/2017/12/09/nepokorennaja-gagauzija-v-borbe-za-svoi-prava-v-sostave-moldovy-45226.html.
3.3. Денисов В. ЦИК Гагаузии обнародовал окончательные итоги референдума о будущей судьбе автономии. Международная панорама, 05.02.2014-/http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/940951.
3.4. Коноваль М. Аналитик: В Гагаузии есть люди, всерьез рассматривающие отделение от Республики Молдова, 04.07.2017-/http://tribuna.md/ru/2017/07/14/analist-in-gagau zia-sun-oamenicare-examineaza-la-modul-serios-despinderea-ei-de-republika-moldova/.
3.5. Сиркели М. Современные гагагузы. Исламская культура, 09.07.2011-/http://www.islaming.com/mda/culture/2261.

3.6. Славин В. Власти Гагаузии отказались играть роль марионетки Кишинева, 04.09.2011/http://www.chaspik.info/bodynews/8297/4.htm
3.7. Шоларь Е. Автономия для всех: как Кишиневу и Комрату отойти от «игры с нулевой суммой», 20.02.2017- /https://gagauzmedia.md/newsid=1348/.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳԱԳԱՈՒԶՅԱՆ ՀԱՐՑԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

1. Գագաուզ ժողովրդի ծագումը 9

2. Գագաուզյան խնդրի նախապատմությունը 15

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳԱԳԱՈՒԶՅԱՆ ՀԱՐՑԸ XX դ. ՎԵՐՋԵՐԻՆ

1. Գագաուզիան «վերակառուցման» ժամանակաշրջանում (1985-1990 թթ.) 21

2. Գագաուզ-Երի Ինքնավար-Տարածքային Կազմավորման ստեղծումը 29

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԳԱԳԱՈՒԶԻԱՆ XXI Դ. ՍԿԶԲՆԵՐԻՆ

1. Հակասությունների խորացումը Քիշնևի և Կոմրատի միջև 38

2. Գագաուզյան հանրաքվեն 50

3. Մոլդովա-գագաուզյան դիմակայության նոր փուլը 56

4. Գագաուզիան Մոլդովայում 2014 թ. խորհրդարանական ընտրություններից հետո 61

5. Հակամարտության նոր դրսևորումներ Մոլդովայի և Գագաուզիայի միջև 2017-2018 թթ. 67

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԳԱԳԱՈՒԶԻԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

1. Գագաուզիան և Թուրքիան 81

2. Գագաուզիան և Ռուսաստանը 96

Վերջաբան 105

Սկզբնաղբյուրներ և գրականություն 110

ՌՈՒԲԵՆ ԼԵՆԴՐՈՒՇԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ԳԱԳԱՈՒԶՅԱՆ ՀԱՐՑԸ

(պատմություն և արդիականություն)

РУБЕН ЛЕНДРУШЕВИЧ АЗИЗБЕКЯН

ГАГАУЗСКИЙ ВОПРОС

(история и современность)

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 22.10.2018 թ.
Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

9 И
2к-41
12

ISBN 978-9939-860-69-5
9 789939 860695